Հրատ Սիլլեր

9
Ս-82

25

Խոզաստրուկներ արատավոր

գիրք

Թ. 1913

2004

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԱՐՕՐ» ԱՄՍԱԳՐԻ

ԱՐԹԻՒՐ ՄԻՒԼԼԷՐ

ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ

(Pacifistisches Jugendbuch)

ԽՄՐՀՐԳՄՏՈՒ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՒ ԴԵՍՏԻԲԸԿՆԵՐԻ

Բէրթա ֆօն Զուտնէրի առաջաբանով

(Արժանացել է Բէրնի միջազգային խաղաղութեան բիւրոյի «mention honorable» մրցանակին)

Գերմաներէն բնագրից թարգմանեց Ի. Յ.

9
Մ-82

ԹԻՖԼԻՍ
Էյլէֆարատարի տպարան «Էջմիածնա» Մուզէյսկի նրբափող. № 8.
1913

012

Арм.
3-2290а
3-2290а

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «Ա. Ր Օ Ր» ԱՄՍԱԳՐԻ № 12

9
Մ-82

ԷՐԹԻՒՐ ՄԻԼԼԻԷՐ

ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ

(ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ)

Թարգմ. գերմաներէնից
ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Инв. №20850

ԹԻՖԼԻՍ
Տպարան «Էպօխա» Մուզէյսկի պեր. № 8
1912

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ ԳԱ ՍՍՀ
Ա. ԱՄ. А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՑՆՎԱՆ
29481-67

ԱՌԱՋԱԲԱՆ

Վերջին տարիների ընթացքում մեծ ծաւալ է ստացել խաղաղասիրական գրականութիւնը։ Վիպագիրներն ու գիտնականները, ազգերի իրաւագէտներն ու քաղաքագէտները, բանաստեղծներն ու պատմաբանութեան դաստիարակները զբաղուել են խաղաղասիրական հարցով, և դրանցից իւրաքանչիւրը իր տեսակէտով ուսումնասիրել խնդիրը։ Խնդիրն էլ բազմակողմանի բովանդակութիւն ունի և շոշափում է շատ շրջաններ—համարձակ կարելի էր ասել՝ քաղաքակրթական կեանքի բոլոր շրջանները—այդ պատճառով էլ շատ բնական է, որ այդ խնդրի ծագումից յետոյ՝ այժմ լուսաբանվում է ամեն կողմից։

Զնայելով այդ հանգամանքին, այնու ամենայնիւ խաղաղասիրական շարժման ընդհանուր ծանօթութիւնը դեռ ևս շատ չնչին է, որ նոյնպէս բնական է, որովհետև այդ շարժումը դեռ գտնվում է իր սկզբնական շրջանում և այդ խնդրի մասին գրուած գրքերը դեռ ևս լայն շրջաններում չեն տարածուել։ Թէև արդէն յարաբերական մտքով հարցը շատ է ուսումնասիրուել, սակայն գրական մտքով այդ շատ քիչ է, և այս նորաբաց ասպարիզում դեռ ևս շատ բան կայ մշակելու։

Դեռ ևս գոյութիւն չունեն ընդհանրապէս այնպիսի դպրոցական գրքեր, որոնցով կարելի լինէր հասարակական դպրոցներում ուսուցանել այդ առարկան մանուկներին ու պատանիներին։ Այն ծնողները, որոնք իրանց խաղաղասիրական շարժման համախոհ են զգում և սիրով կը կամենային իրանց զաւակներին ևս գաղափար տալ այդ խնդրի մասին, չեն գտնում այնպիսի «ուղեցոյցներ», որ իրանց օժանդակ հանդիսանային։ Այս հարցի փիլիսոփայական, քաղաքական ու քաղաքատնտեսական կողմերը, որոնք լիապէս բացատրուած են գոյութիւն ունեցող աշխատութիւնների մէջ, ուսուցման նպատակի համար յարմար չեն. կարիք է զգացվում այս շարժման տարրական հիմունքներն արծարծող աշխատութիւնների։ Այդպիսի աշխատութիւնը պէտք է լինի կարելոյն չափ դիւրըմբռնելի, մանկական և հասարքական, ոչ չոր ու ցամաք և սոփեստական։

Այս պահանջներին բարեբախտաբար համապատասխանում է, իմ կարծիքով, այս փոքրիկ գիրքը, որ դասագիրք չէ. և յարմար էլ՝ ինչպէս ասում էր, այս՝ «ոչ չոր ու ցամաք և սոփեստական։ Այժմեան հանգամանքներում

ներբ խաղաղասիրութեան գաղափարը դեռ ևս համաշխարհային ընդունելութիւն չէ գտել, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կողմից ընդհանուր գործածութեան առաջարկուի բոլոր դպրոցներում։

Այս գիրքը մի ուղեցոյց է ընտանիքների համար, մի մասնաւորաբար՝ օժանդակ միջոց՝ դաստիարակների համար։ Սրանք այդտեղ կը գտնեն դրդումներ ուսուցման համար. միևնոյն ժամանակ այս գրքի հատուածները դիտմամբ այնպէս դիւրըմբռնելի և պարզ ոճով են կազմուած, որ իրանք երեխաներն էլ ուրախութեամբ և զուարճութեամբ կը կարդան։ Միևնոյն ժամանակ նրանց համար մի նոր հորիզոն կը բացուի. նրանք կը սովորին հասկանալ գալիք ժամանակը, որ իրանց գործունէութեան ասպարէզը պէտք է լինի։ Ապագայում նրանք իրանք կը կարդան խաղաղասիրական գիտական աշխատութիւնները։

Աւստրիական խաղաղասիրական ընկերութիւնը հրատարակելով իր վարչութեան եռանդուն անդամներից մէկի այս աշխատութիւնը՝ յոյս է տածում, որ սերմանում է ապագայի համար և ներկայումս էլ ծառայութիւն է մատուցանում այն բոլորին, որոնց համար այս ուղեցոյցով հեշտանում է՝ իրանց զաւակներին կամ աշակերտներին խաղաղասիրութեան դժուարին շրջանին ծանօթացնելու խնդիրը։

Բերթա ֆոն-Զուտներ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ոչ հայրենասիրական արուեստ կայ և ոչ էլ հայրենասիրական գիտութիւն։ Երկուսն էլ, ինչպէս և բոլոր բարձրագոյն բարիքները, պատկանում են ամբողջ աշխարհին։

Գէօթէ

Ով շատ է տալիս, իւրաքանչիւրին էլ մի բան կը տայ։

Գէօթէ

Խաղաղասիրութեան կարելի է հասնել տարբեր ճանապարհներով։ Հաւատացող քրիստոնեան մատնանիշ է անում Աստուածաշնչի աստուածային պատուիրանները։ Դեղագէտը քստմնելով երես է դարձնում մարտադաշտի գարշանքից։ Ֆինանսագէտը կազմում է պատերազմի և զինուած խաղաղութեան բացասական հաշուեկշիռը։ Իրաւաբանը ապացուցանում է, որ իրաւունքի խնդիրներն երբէք արդար լուծումն չեն ստանայ հարիւր հազարաւոր մարդկանց սպանութեամբ։ Վերջինիս թիկունք է հանդիսանում պատմագիրը, որ ցոյց է տալիս մեզ դատարանական կազմակերպութեան շարունակ աճող զարգացումը։ Սոցիալ-բարենորոգիչը իր ծրագիրները կազմելիս՝ սայթաքում է ազգայնութեան խոչընդոտի առաջ։ Գոյութեան կռուի օրէնքը անհնարին դժուարութիւններ է պատճառում ընախոյզին։ Քաղաքագէտը ժողովրդի համար իրաւունք է պահանջում՝ կեանքի և մահուան կարևոր խնդիրը վճռելու։ Մայրերը չեն կամենում, որ արու զաւակներ ծնեն՝ թնդանօթի կերակուր դառնալու համար։

Խաղաղասէրների բանակը կազմվում է այս բոլոր շրջաններից։ Եթէ դրանցից մէկը գրում է խաղաղասիրութեան մասին, նա իր սրտին աւելի մօտ բնաբան է ընտրում և միւս տեսակէտները աւելի կամ պակաս չափով անտես անում։ Սակայն մենք կամենում ենք խաղաղասիրութեան մասին գաղափար տալ պատանեկութեանը և այդ պատճառով իրաւունք չունենք պատանեկութեանն ասելու. «Ահա այս շաւղով ընթացէք, այս է

ամենից յարմարը»։ Այլ մեր պարտականութիւնն է՝ նրա ուշադրութիւնը դարձնել բոլոր ճանապարհների վրայ և նրա կամքին թողնել՝ այդ շաւիղներից մէկի ընտրութիւնը։

Ինչպէս որ տարբեր են դէպի խաղաղասիրութիւնը տանող ճանապարհները, նոյնպէս տարբեր են նաև նրա գործնական իրականացման ծրագիրները։ Մէկը կամենում է տեղն ու տեղը բոլոր զինուորներին արձակել, միւսն առաջարկում է կրկին միլիցիա կազմակերպել, երրորդը կամենում է մի եւրոպական կայսր, չորրորդը՝ միայն եւրոպական պետութիւնների դաշնակցութիւն։ Հինգերորդը երազում է զօրքերը կերպարանափոխել բանուորների բանակի, վեցերորդը կարծում է, որ մի պարտադիր իրաւունքի ատեանով ամեն բան կարգի կընկնի, եօթներորդը օգնութիւն է սպասում ղեկավարուող օդանաւից և կարծում է, որ պատերազմը պատերազմով պէտք է ոչնչանայ. ութերորդը իրան կողմակից է յայտարարում «laisser faire, laisser aller»-ին։

Այդտեղ ևս մենք իրաւունք չունենք՝ պատանեկութեանը մի սմենափրկիչ միջոց առաջարկելու, այլ մեր պարտականութիւնն ենք համարում՝ բոլոր առաջարկուած միջոցների արժէքը բացատրելու, սակայն և այնպէս ընտրութիւնը իւրաքանչիւրի ճաշակին թողնելու։

Քանի որ այժմ պարզեցինք, թէ ինչ ենք կամենում տալ պատանեկութեանը, հարց տանք, թէ ինչ է ուզում մեզնից պատանեկութիւնը։ Նա կամենում է իմանալ մեզնից ճշմարտութիւնը. մենք չպէտք է ամեն գեղեցիկն ու բարին մեր ազգին վերագրենք և տգեղն՝ ուրիշ ազգերին, այլ պէտք է լոյսն ու ստուերն արդարութեամբ բաժանենք։

Նա պահանջում է մեզնից յուսաբանութիւն և ուզում է իմանալ, թէ արդեօք իրաւացի է պատմութեան ուսուցիչը, որ 8—9 ժամին հաւաստիացնում է, որ Աստուած է առաջնորդե մեր զօրքերին պատերազմելու, որ մենք Աստուծուն պարտական ենք շնորհակալութիւն անելու՝ հաղարաւոր մարդկանց խողխողման համար. կամ թէ իրաւացի է կրօնուսոյցը, որ 9—10 ժամին «մի սպանաներ» պատուիրանն ընդունում է իբրև հիմնական սկզբունք ամեն բարոյագիտութեան և պատմում, թէ ինչպէս անիծեց Աստուած եղբայրասպանին։ Պատանեկութիւնը տրամաբանական իմացականութիւն ունի. ինչպէս նա էլ չի ըմբռնում, թէ ինչպէս կարող է յանցանքը բազմանալով՝ կերպարանափոխուել և դառնալ արժանաւորութիւն։ Նա պարզապէս հաշւում է. «Եթէ մի մարդ սպանելը ոճիր է, նշանակում է, որ 1000 մարդ սպանելը հազար անգամ գործուած ոճիր է»։ Եթէ կամենում ենք ազդեցութիւն ունենալ պատանեկութեան վրայ,

պէտք է հաշուի առնենք այս տրամաբանական իմացականութիւնը։

Այնուհետև պատանեկութիւնը պահանջում է մեզնից կեանք և ոչ թէ վերացականութիւն։ Հարց տանք մեզ մի անգամ, թէ մենք՝ չափահասներս ի՞նչ ունենք այժմ դպրոցական տարիների ընթացքում մեր ձեռք բերած հիմնական գիտութիւնից։ Այդ գիտութիւնը շատ քսակներ կը լցնի՞ թէ՞ կը տեղաւորուի մեր բաճկոնի գրպանում։ Ո՞ւր են անյայտացել մեր շատ լաւ սովորածներն ու գիտցածները՝ հնագոյն դարերի բոլոր ճակատամարտերի մասին. մեր գիտցած երկու հազար տարեթուերից քանիսը գիտենք այսօր։ Ո՞րքան լաւ բաներ էինք կարողանում պատմել՝ քիմիականութեան արուեստալից կազմութեան մասին. ի՞նչ գիտենք մենք այժմ այդ բոլորից։ Մեր յիշողութեան մէջ մնացել է միայն այն հետաքրքրական գիրքը, ո՞ւ մենք ծածուկ կարդում էինք մատեմատիկայի դասին, և այն ազատ խօսքը, որ պատահմամբ դուրս էր թռչում ուսուցչի բերանից և չկար դասագրքի մէջ։ Դասագրքի պարունակութիւնը վաղուց արդէն մոռացել ենք, սակայն այդ ազատ խօսքը մնացել է մինչև այսօր մեր յիշողութեան մէջ և նպաստել մեզ՝ կեանքի մասին մեր ունեցած հայեացքը հիմնաւորելու։

Այսպիսի վերաբերմունք պէտք է ունենայ, մեր կարծիքով, ուսուցիչը խաղաղասիրութեան նկատմամբ։ Ցաւոտի է, որ արդեւլուած պտուղը քաղցր է և ամենաքաղցրը՝ պատանեկութեան ժամանակ։ Խաղաղասիրութեան գաղափարը չպէտք է սիստեմատիկաբար աւանդել պատանիներին, այլ պէտք է հրամցնել նրանց դիպուածաբար՝ կապակցելով կեանքի պատահարներին, դասագրքի որոշ յօդուածին։ Մի ուրիշ անգամ պէտք է տալ այլ հատուած, ըստ երևոյթին իբրև ակամայ, պատահաբար. երբէք մեր տուածը չպէտք է լինի վերացական, այլ միշտ կեանքի պատկերը։ Պատանեկութիւնն այդ կերպ տրուածը ուրախութեամբ կընդունի և իր ամբողջ կեանքի ընթացքում չի մոռանայ երախտաւոր ուսուցչի յիշատակը։

ԱՐԹԻՒՐ ՄԻԼԼԷՐ

ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ

(Խորհրդատու ծնողների եւ դաստիարակների)

ՄԱՍ I

ԽԱՂԱՂԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ա. Պատերազմի պատունասը

(Օրինակներ)

1. ՀԵՆՐԻԿՈՍ IV ԵՐՔԱՑ (III մասը)

Կարդացել էք արդէն Շէքսպիրի այս ողբերգութիւնը։ Ուշադրութիւն էք դարձրել նոյնպէս այդ պիէսայի գործող անձանց տարօրինակ ցանկի վրայ։ Այդ ցանկի մէջ գրուած է. «Որդի, որ սպանել է իր հօրը. հայր, որ սպանել է իր որդուն»։

Որդին ասում է.

«Ո՜հ, Աստուած, այս իմ հօր կերպարանքն է, որին չճանաչելով սպանեցի խռնուածքի մէջ։ Ո՜հ, չար ժամանակ, որ այսպիսի գործեր է առաջ բերում։ Լոնդոնից այժմ զինուորագրեց ինձ արքան. հայրս, կոմս Վարոյժով զինուորագրեց ինձ արքան.

վիթի վասալը, Եօրքի զօրքի հետ եկաւ իր տիրոջ հրամանով, և ես իմ ձեռքով կեանքից զրկեցի նրան, ով ինձ կեանք էր պարգևել»։

Հայրն ասում է.

«Տուր ինձ ոսկիներդ, եթէ ունես. հարիւրաւոր հարուածներով եմ ձեռք բերել այդ։ Բայց թող մի դէմքդ տեսնեմ. մի՞թէ թշնամու կերպարանք է այս։ Վայ ինձ, ոչ, ոչ. միակ զաւակս է սա. ախ, զաւակս. եթէ դեռ ևս կեանքի նշոյլ կայ քո մէջ, վերև նայիր. տես, իմ սրտի կատաղի փոթորիկն ինչպիսի արտասուքի մրրիկ է փչում քո վէրքերի վրայ և աչքս ու սիրտս սպանում։ Ո՜հ, Աստուած, դու ազատիր մեզ այս աղէտալի օրերից. ինչ անագորոյն, բիրտ, անգութ գործեր՝ լի պատրանքով և յուզումներով, բոլորովին անբնական, որ առաջ է բերում սպանիչ, մոլեգին պայքարը»։

Տեսնում էք պատերազմի հետևանքը։ Կարծում էք, թէ այժմ անկարելի՞ է այդ, քանի որ հայրերն ու զաւակները միշտ միևնոյն զօրքի մէջ են պատերազմում։ Կարող է լինել։ Բայց դուք չէք իմացել, որ 1866 թ. պատերազմում աւստրիացիք մի անգամ գիշերային մթութեան մէջ իրանց սեպհական զինուորներին են հրացանազարկ արել. միևնոյնը պատահել է և անգլիացիներին՝ բուրերի հետ պատերազմելիս։ Ի՞նչ էք կարծում, չի՞ կարող պատահել, որ այդ միջոցին որդու արձակած գնդակը դիպուածով հօրը կպչի։ Սակայն թողնենք այս։ Աւելի յաճախ կը պատահեն այնպիսի դէպքեր, երբ հօրեղբայրն ու եղբօրորդին, տագրն ու քեռայրը կամ լաւ բարեկամները այնպիսի դրութեան մէջ կը լինեն, որ ստիպուած կը լինեն միմեանց կոտորելու։ Մտածեցէք հետևեալ հաւանական դէպքի մասին. մի երիտասարդ պատկվում է դրացի գիւղի մի աղջկայ հետ. այդ գիւղը հազիւ երկու կիլոմետր հեռու լինի երիտասարդի բնակավայրից, բայց գտնվում է ուրիշ պետութեան մէջ։ Զօրքերը պատերազմի հրաւիրուելիս՝ երի-

տասարդ ամուսինը պէտք է մէկ կողմի զօրքի մէջ լինի, իսկ նրա կնոջ եղբայրները թշնամի զօրքի մէջ. ինչպիսի զգացմունքներ պէտք է ունենայ երիտասարդ կինը, որ երկիւղ է կրում ամուսնու և եղբայրների նկատմամբ։ Եւ եթէ ճակատամարտ տեղի ունենայ, կարող են դրանք միմեանց խնայել, եթէ չուզենան իբրև դաւաճան ճանաչուել։

Այնպէս չէ՞, Շեքսպիրն իսկապէս մեր ժամանակակից բանաստեղծներից մէկն է։

2. ՄՐԲԳԵՍԵՐՈՒԹԻՒՆ

Դուք զարհուրում էք, որ դեռ այսօր ևս կան վայրենի ցեղեր, որոնք իրանց գերիներին մորթում և ուտում են։ Իմացած եղէք, որ բարոյական սկզբունքները իւրաքանչիւր տեղ և իւրաքանչիւր ժամանակ տարբեր են։ Ինչ որ մեր տեսակէտից դատապարտելի է, այդ ժողովուրդների համար գովելի գործ է, որովհետև նրանց մէջ իշխող է հանդիսանում այն հաւատը, թէ սպանուած թշնամու ոյժն անցնում է նրան ուտողին։ Այս տեսակէտով հարկաւ մարդու միս ուտելն անբարոյական գործողութիւն չէ և այդ նպատակի համար սպանելը հասկանալի է։

Այո, պատահել են դէպքեր, որ մենք ևս, բարոյապէս բարձր կանգնած մարդիկս, կարիքի ժամանակ մարդու միս ենք կերել։ Գոնէ ես մի անգամ կարդացել եմ այդպիսի մի սարսափելի պատմութիւն։ Մի քանի նաւաստիներ ծովի վրայ երկար ժամանակ նաւակով մոլորուելով անուղի պակասութիւնից ու քաղցից ստիպուած և յուսահատուած՝ իրանց մէջ վիճակ են ձգել, թէ ումը սպանեն, որպէս զի նրա միսն ուտելով՝ յագեցնեն իրանց քաղցը։ Ես չգիտեմ, թէ որքան ճշմարիտ է այդ պատմութիւնը. սակայն ծովի վրայ երկար ժամանակ մոլորուած այդ մարդիկը առանց կերակրի և ըմպելիքի մնալով հարկաւ չէին կարող իրանց պարզ դատողութեան ոյժը պահպանել, և մենք իրաւունք չունենք նը-

բանց խիստ դատապարտել։ Առ հասարակ եթէ մենք բարոյական կողմը բոլորովին թողնենք մի կողմ, ինչպէս վայրենիները, նոյնպէս և քաղցած նաւաստիները ճիշտ գիտեն՝ թէ ինչո՛ւ են սպանում։ Նմանապէս և մարդասպան աւազակը որոշ նպատակի է ձգտում. սա կամենում է ձեռք բերել իր զոհի ունեցած փողը, և թէև բարոյական օրէնքի հակառակ է գործում, սակայն և այնպէս գործում է իր խելքի համաձայն։ Նոյնպէս և կօրսիկացիների արեան վրէժխնդրութիւնը, որի մասին հաւանականօրէն արդէն լսած կը լինէք, ազնիւ գործողութիւն չէ, սակայն հասկանալի է։ Կօրսիկացիների ըմբռնումով՝ ով մարդ է սպանում, ինքն էլ պէտք է սպանուի։

Մեզնում հարկաւ աւելի մարդասիրական ըմբռնումներ կան. շատ պետութիւնների մէջ մահուան պատիժն ընդհանրապէս ոչնչացած է։ Այդ պետութիւնների համար սուրբ է այն սկզբունքը, որ ոչ մի մարդ իրաւունք չունի միւսին սպանելու։ «Մի՛ սպանաներ» պատուիրանը պահպանվում է նաև մարդասպանների նկատմամբ։ Սակայն նաև այն պետութիւնների մէջ, որտեղ դեռ ևս գոյութիւն ունի մահուան պատիժը, միայն հազուագիւտ դէպքերումն են այդպիսի պատժի իրագործման դիմում։ Մարդկային կեանքն ուրեմն սուրբ է մեզ համար։

Մի՞շտ։ Ո՛չ։ Միայն այն ժամանակ, երբ խելքներս գլուխներիս է, այսինքն խաղաղութեան միջոցին։ Հէնց որ փչում է պատերազմական շեփորը, յանկարծ փոխվում են մեր ըմբռնումները, և սպանում ենք զուարճութեամբ. ով շատ է սպանում, ամենից շատ պատիւների է արժանանում և նրա համար ենք արձան կանգնեցնում։

Այժմ մտածեցէք. մարդակերը գիտէ, թէ ինչո՞ւ է սպանում, քաղցած նաւաստին նոյնպէս. աւազակը գիտէ, դահիճը նոյնպէս. բայց մենք, որ ուրախութեամբ պատերազմի դաշտն ենք գնում, չգիտենք, թէ ինչո՞ւ համար ենք սպանում և ինչո՞ւ համար սպանվում։ Մթթէ այն մարդիկը, որոնց պէտք է սպանենք, մի բան արել

են մեր դէմ։ Ո՛չ, մենք չենք էլ ճանաչում նրանց։ Մենք ոչ նրանց միսն ենք ուզում ուտել, ոչ էլ նրանց փողը յափշտակել. երբէք էլ դահճի պաշտօն չենք յանձն առնի։ Ապա ինչո՞ւ համար ենք սպանում։ Կարող է պատահել, որ նրանք մեր ազգականները կամ բարեկամները լինեն. բայց այդ ոչ մի նշանակութիւն չունի. նրանք պէտք է սպանուեն։ Նրանք գիտութեան մի մի լուսատուներ են, մեծ արուեստագէտներ. մեզ ինչ, ինչ մեր գործն է այդ. մենք հանում ենք նրանց աչքերը, ջարդում ոտքերը։ Նրանք տանը թողել են լացող կին, երեխաներ, որոնց քնքշաբար սիրում են. ոչ մի ուշադրութիւն չենք դարձնում այդ բանի վրայ. սպանում ենք նրանց և նրանք էլ մեզ են սպանում։

Մինչև ե՞րբ։ Մինչև որ շեփորները նորից խաղաղութիւն հնչեն. այդ ժամանակ մենք կրկին նախկին խելացի մարդիկն ենք, համբուրում ենք միմեանց և ասում, երբ իմանում ենք, թէ մի ուրիշ երկրում գիտութեան մեծ մարդկանցից մէկը վախճանուել է։ Մենք տրտմում ենք՝ ուրիշ երկրում պատահած երկաթուղու դժբախտ պատահարն իմանալով. ողբում ենք այն օդաչուի բախտը, որ մի հեռաւոր երկրում օդանաւով թռչելիս՝ ընկնում մեռնում է։ Երբ մի քանի տարի առաջ Պարիզում բարեգործական նպատակով կազմուած վաճառքի տեղն այրուեց և համարեա երկու հարիւր մարդկային կեանք զոհ գնաց հրդեհին, ամբողջ աշխարհից ցաւակցական հեռագիրների տարափ թափուեց։ Վիէննայի Ռինգ թատրոնի հրդեհը, Չիկագոյի մի դպրոցի այրուելը, որոնց միջոցին այնքան մարդկային կեանքեր ոչնչացան, ամբողջ քաղաքակիրթ աշխարհում սոսկում առաջ բերին։ Այսպէս ենք խաղաղութեան ժամանակ։

Սակայն պատերազմի միջոցին այդպէս չենք։ Ի՞նչ նշանակութիւն ունի այդ ժամանակ երկու հարիւր կամ նոյն իսկ երկու հազար մարդու մահը։ Կեօնիգգրեցի ճակատամարտում աւստրիացիք մի օրում կորցրին 45,000 մարդ, որից 13,000-ը անմիջապէս սպանուեցին, իսկ մնացածները վիրաւորուեցին։ Մեր հրազէնների

կատարելագործութեան շնորհիւ՝ ապագայ մի պատերազմում այդ թիւը կարող ենք կէս միլիոնի հասցնել։ Եւ ինչպէս կուրախանանք այդ բանի վրայ։ Թէ ինչու ենք սպանում, չենք կարող ասել. այդպէս են հրամայել մեզ։ Բայց ինչու ենք ուրախանում, որ կարող ենք սպանել. ինչու ենք ուրախ երգեր հնչեցնում՝ երբ պատերազմ ենք գնում. ինչու ենք սպանութեան օրը հանդիսաւոր տօնում. այդ արդէն ամենևին չգիտենք։ Որովհետև եթէ իմանայինք և այնու ամենայնիւ այդպէս անէինք, մենք աւելի անբարոյական կը լինէինք, քան մարդակերները։ Այդպիսով մենք աւելի անխելք ենք։

3. ԿԱՅԻՆՆ ՈՒ ԱԲԵԼԸ

Երբ Կայէնը սպանեց իր Աբէլ եղբօրը, Աստուած ասաց նրան. «Ո՞ւր է քո եղբայր Աբէլը. ինչ արիր. եղբօրդ արիւնը երկրից դէպի ինձ է աղաղակում»։

Կայէնն ինչու սպանեց իր եղբօրը։ Նախանձից։ Եղբայրասպանութեան համար Աստուած անիծեց Կայէնին։ Յետոյ Աստուած տուեց «մի սպանաներ» ընդհանուր պատուիրանը։ Այդ չէ նշանակում, թէ չպէտք է սպանես եղբօրդ, հօրդ, ազգականիդ. այլ այդ պատուիրանը վերաբերում է բոլոր մարդկանց։ Եւ մենք կատարում ենք այդ աստուածային պատուիրանը և պատժում ենք մեն մի մարդասպանի, ուշադրութիւն չդարձնելով այն հանգամանքի վրայ՝ թէ արդեօք սպանութեան դրդապատճառը նախանձն է թէ նախանձախնդրութիւնը, ընչաքաղցութիւնը թէ վրէժխնդրութիւնը. նոյնպէս և ի նկատի չենք առնում, թէ արդեօք սպանուածը լաւ մարդ է եղել թէ վատ։ Եթէ մէկը մարդ է սպանում, նոյն իսկ իր պատիժը կրելուց յետոյ ևս յարգելի չէ լինում. ամենքը խոյս են տալիս նրանից ակամայ, որովհետև նա իր ամբողջ կեանքի ընթացքում Կայէն մարդասպանի դրոշմն է կրում։

Մենք ուրեմն այն կարծիքի ենք, որ մարդասպանութիւնն անբարոյականութիւն է, ոճիր է, բայց այդ

միայն այն դէպքում, երբ սպանութիւնը սահմանափակվում է անհատներով։ Բազմաթիւ մարդկանց սպանութիւնը, ընդհակառակը, պայծառ լուսով է երևում մեզ, երբ տեղի է ունենում «պատերազմի» պատրուակով։ Այդ դէպքում սպանութիւն չենք անուանում այդ գործողութիւնը, այլ հերոսութիւն, հեծելազօրքի հարուած, հմտալի յարձակումն և այն բոլոր գեղեցիկ անուններով, որոնցով ուզում ենք սպանութիւնը քօղարկել։

Սպանութիւնը միթէ լաւանում է, երբ բազմութեան վերաբերմամբ է կատարվում։ Ո՛չ։ Եւ եթէ սպանուած մի մարդու արիւնը դէպի երկինք է աղաղակում, աւելի բարձրաձայն է աղաղակում հարիւր-հազարաւոր ընկածներինը և Աստուծու անէծքն է խնդրում յանցաւոր մարդասպանների համար։

Սակայն մեզ համար մի արդարացումն կայ։ Կայէնը գիտակցում էր իր գործած այլանդակ ոճիրը և երկիւղ էր կրում Աստուծու ձայնից։ Սակայն մենք աղօթում ենք ամենաբարի Աստուծուն, որ կռիւը լաւ վերջ ունենայ, որ նա օգնէ մեզ՝ կարելոյն չափ շատ մարդ սպանելու, որոնք մեզ նրան Աստուծու ստեղծածներն են։ Եւ միւս բանակում ևս նոյն Աստուծուն են խնդրում միևնոյն օրհնութիւնը։

Ամենաբարի Աստուած, սիրիր նրանց, ներիր մեզ, որովհետև մենք չգիտենք, թէ ինչ ենք անում։

4. ԹՌՉՈՒՆՆԵՐ ՀՈՎԱՆԵՒՈՐԵԼԸ

Նորերս մի գրութիւն ստացայ կենդանիներին հովանաւորող ընկերութիւնից, որ ինձ շատ ուրախացրեց։ Այդ գրութեամբ դիմում էին կանանց, որ նրանք այլ ևս իրանց գլխարկների վրայ փետուրներ չկրեն, որովհետև փետուր ձեռք բերելու համար մարդիկ անգին քանակութեամբ թռչուններ են կոտորում։ Այդ դիմումին ամենքդ էլ համաձայն կը լինէք։ Ոչ ինաստակար թռչուններ ոչնչացնելը համարեա բոլոր քաղաքակիրթ պետութիւններում արգելուած է արդէն, մանաւանդ խստիւ

պատժվում է թռչունների բները քանդողը. երիտասարդութեան հետ թռչունների ձագերն ևս վայելում են մեր առանձին հովանաւորութիւնը։

Եւ իրաւացի է այդ։ Չէ՞ որ երիտասարդութեան վրայ են մեր բոլոր յոյսերը. երիտասարդութիւնը պէտք է ստեղծէ մեզ համար երկրային դրախտը։ Երևի թռչուն ծնողներն էլ նոյնն են մտածում։ Գոնէ մենք կարծում ենք, որ նրանք էլ մեզ պէս են զգում, և այդ պատճառով ստեղծում ենք օրէնքներ՝ թէ ծեր թռչունների և թէ նրանց ձագերի պաշտպանութեան համար։

Եւ ինչո՞ւ ոչնչացնենք խեղճ թռչուններին։ Մենք հօ հաճութեամբ չենք սպանութիւն գործում։ Սիրելի թռչուններն ուրախացնում են մեզ իրանց երգով, լաւ աշխատում են և ոչնչացնում ջնասակար միջատներին. մենք գոհ պէտք է լինենք և մատների արանքով նայենք, եթէ նրանք երբեմն-երբեմն մեր պարտէզների կեռասն են ուտում։

Իսկապէս մենք մեր քաղաքակրթութեամբ շատ չենք առաջադիմել. թռչունների հետ վարվում ենք այնպէս, ինչպէս մարդկանց հետ։ Ներողութիւն, ոչ թէ այնպէս, այլ շատ և շատ աւելի լաւ։ Մենք թռչուններին չենք հարցնում, թէ ո՞ր երկրից են մեզ մօտ գալիս, թէ նրանք ֆրանսիացի՞ են թէ անգլիացի, իտալացի՞ են թէ ռուս-բիկացի։ Եւ որովհետև նրանք թռչուններ են, մենք սիրում ենք նրանց և հովանաւորում։

Իսկ ի՞նչպէս ենք վարվում այն մարդկանց հետ, որոնք օտար երկրից մեզ մօտ են գալիս՝ մեզ հետ աշխատելու և մեզ հետ ապրելու։ Դրանց գալը մեզ նոյնչափ է ուրախացնում, որչափ թռչուններինը։ Այդ ես չգիտեմ, թող ձեզնից իւրաքանչիւրը դատէ այդ մասին. սակայն մի բան ճիշտ է. այդ ուրախութիւնը մեծ չի կարող լինել, որովհետև մենք ամեն միջոց գործ ենք դնում՝ մեր երկրում գտնուող օտարների կեանքը դառնացնելու։ Մենք համարեա թէ յայտարարում ենք նրանց՝ օրէնքի պաշտպանութիւնից զրկուած. այդ նշանակում է, որ նրանք այն ազատութիւնը չունեն, ինչ

որ ունեն թռչունները մեզ մօտ։ Երբ օտարերկրացին ուզում է մեր սահմանն անցնել, մենք նախ խուզարկում ենք նրան և ապա դրամ վերցնում նրանից՝ մեր երկիրը մտնելու համար։ Եթէ նա իրեր է բերում հետը, դրանց համար պէտք է մաքս վճարէ. օտար իրեր չենք ուզում։ Իսկապէս օտար իրերի կարիք ենք ունենում և մաքսի պատճառով թանկ գնով առնում, սակայն յամէնայն դէպս մաքսը մի լաւ կարգադրութիւն է, որպէս զի օտարները չկարողանան մեզ համար աւելի լաւ և աւելի էժան ապրանք բերել։

Եթէ օտարը ոչինչ չէ բերում մեզ համար, աւելի վատ նրա համար. գուցէ նա մի պաշտօն կամ տեղ է ուզում ունենալ. այդ դէպքում նա շատ կը սխալուի. պաշտօնները միայն մեր քաղաքացիների համար են, նոյնպէս և որոշ արհեստները։ Եթէ նա ոչ թէ փող է ուզում թողնել մեզ մօտ, այլ մեզ մօտ է ուզում դրամ ձեռք բերել ամենաազնիւ ճանապարհով, մենք իսկոյն ծուռ աչքով ենք նայում նրան, և վայ նրան, եթէ մեր տնտեսութիւնն է յարուցանում. այդ դէպքում մեր սահմաններից դուրս ենք վռնտում նրան՝ իբրև տաղտկալի օտարականի։

Այժմ կասէք, թէ, այո՛, բայց օտարին էլ չենք սպանում, ինչպէս և թռչունը չենք սպանում։ Այդ ճիշտ է. սովորաբար մենք լաւ ենք վայրենիներից, որոնք իրանց հիւրերին ուտում են նախաճաշին։ Սակայն ինչ կասէիք, եթէ հրաման լինէր, թէ այս տարի վերանում է թռչուններ հովանաւորելու օրէնքը և ով աւելի շատ արտոյտ, սոխակ, ծիծեռնակ և այլն ոչնչացնէ, նա քաջ կը լինի. կամ ով աւելի շատ թռչունների բներ քանդէ, նա հերոս կը լինի։ Այն ժամանակ մենք կաղաղակենք. «կեցցէ՛, բոլոր թռչունները ոչնչացուած են»։ Այդ խելագարութիւն կը լինի, կասէք դուք։ Սակայն մենք այդպէս ենք անում ոչ թէ թռչուններին, այլ մարդկանց։ Հէնց որ հնչում է կոխարդակ-ապրատերազմ բառը, մոռանում ենք մեր բոլոր լաւ դատողութիւնը, դառնում ենք մարդասպաններ և չենք հանգստանում,

23481-63

Библиотека Ա. ԱՄ. Մ. ՄՇՏԱՆՅԱՆ ՄՇԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

մինչև որ ուրիշ երկրի հարիւր-հազարաւոր մարդիկ մեռած գետին չեն փռվում։ Ինչու՞. որովհետև նրանք ուրիշ ազգի զաւակներ են։

Այս բոլորն աչքիս երևում է ինչպէս մի մանկական խաղ։ Մեր ամբողջ կեանքի ընթացքում մեզ սովորեցնում են՝ «մի սպանաներ». և յանկարծ, երբ պատերազմ ենք խաղում, այդ բոլորը կորցնում է իր նշանակութիւնը և ամենքը զուարճութեամբ սպանում են։ Յետոյ կրկին խաղաղութիւն է հրամայվում, խաղը վերջանում է, և այնուհետև ով որ մարդ սպանի, լինի դա մեր հայրենակիցը թէ օտարերկրացի՝ միևնոյն է, խստիւ կը պատժուի։

Դուք է գալի ձեզ պատերազմ կոչուած խաղը. զուարճալի չէ։ Խաղչէքը չնչին է, ամենաշատը մարդ կորցնում է իր կեանքը։ Սպանութիւնը պատերազմում յանցանք չէ, այլ արժանիք։ Եւ սպանում ենք միայն երիտասարդներին, որոնց վրայ են դրել ծնողներն իրանց բոլոր յոյսերը և որոնք մեզ համար պէտք է ստեղծեն երկրային դրախտը։

Սակայն, ինչ էք կարծում, շուտով սկսենք այդ զուարճալի խաղը։ Ի՞նչ, չէք ուզում խաղին մասնակցել։ Դուք կամենում էք, որ մարդիկ միևնոյն հովանաւորութիւնը վայելեն, ինչ որ օրէնքով վայելում են թռչունները։ Այդ դէպքում ասացէք այդ բարձրաձայն և յաճախ, գուցէ մի անգամ ստեղծուեն այնպիսի օրէնքներ, որոնցով կարգելուի ազգերի սպանութիւնը։

5. ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏՆԵՐԸ

Մի ժամանակ Հռոմում սուսերամարտների կռիւները ամենասիրելի թատերախաղերն էին։ Տրայանոս կայսեր ժամանակ 123 օր շարունակ սուսերամարտների կռիւներ էին տարբվում, որոնց մասնակցում էին 10,000 սուսերամարտ։ Սուսերամարտները մեծ մասամբ տարուկներ էին լինում կամ պատերազմական գերիներ, որոնք միմեանց հետ—իրանց կամքով կամ հակառակ իրանց

կամքի—պէտք է կռանքի և մահուան կռիւ մղէին։ Ես ակամայ միշտ դրանց մասին եմ մտածում, երբ զինուորներ եմ տեսնում։ Զինուորներն էլ պէտք է նոյնպէս ուզեն. չուզեն միմեանց հետ կռուեն, երբ «պատերազմի» ազդանշանն է տրվում։ Այդ միջոցին սպանութիւնն արգելող ոչ մի կրօնական համոզմունք չի օգնի նրանց. նրանք պէտք է կռուեն, ինչպէս սուսերամարտները։ Անտարակոյս մի տարբերութիւն կայ սուսերամարտների և զինուորների միջև. սուսերամարտները կռուում էին միմեանց հետ մէկ մէկ, իսկ զինուորները կռուում են խմբովին։ Սուսերամարտների կռուի ժամանակ ահագին ժողովուրդ էր հանդիսատես լինում, իսկ զինուորների կռուի միջոցին հանդիսատես չկայ։ Եւ շատ ափսոս, որ այդպէս է։ Ես կը ցանկանայի, որ պատերազմի պատճառ եղողներին, լինեն դրանք մինիստրներ, քաղաքագէտներ թէ զօրապետներ, ստիպէին տեղի ունեցած ճակատամարտից յետոյ մի գիշեր անցկացնել պատերազմի դաշտում՝ սարսափելի կերպով այլանդակուած դիակների մէջ և մահացու վէրք ստացած խեղճերի տնքոցների տակ։ Հարցրէք մի անգամ պատերազմում եղողին կամ կարդացէք, թէ ինչ են ասել հռչակաւոր զօրապետները պատերազմի արհաւիրքների մասին. կարդացէք նոր ժամանակների հրազէնների ներգործութեան վերաբերմամբ գրուածքները և այն ժամանակ մի պատկեր կը ստանաք, թէ ինչ է ներկայացնում պատերազմի դաշտը։ Պարոնայք մինիստրները պատերազմ նիւթելիս դեռ մի լաւ կը մտածէին, եթէ իրանք ստիպուած լինէին ներկայ լինել։

Մի տարբերութիւն էլ կայ զինուորների և սուսերամարտների միջև. երբ սուսերամարտները բարձրացրամարտների միջև. երբ սուսերամարտները բարձրացնում էին մի մատը, այդ նշան էր, որ նրանք գթութիւն էին խնդրում, և հանդիսատեսները իրաւունք ունէին նրանց թողութիւն շնորհել։ Սակայն ինչ կը շահուեն մեր զինուորները, եթէ մատ բարձրացնեն։ Չէ՞ որ պատերազմի միջոցին հանդիսատեսներ չկան, որ նրանց թողութիւն տան։ Սակայն գուցէ և կան. մի՞թէ հանդի-

սատեանները չեն նրանք, որոնք նախահաշի միջոցին լրագրում կարդում են, որ երեկ տեղի ունեցած ճակատամարտում 20,000 մարդ են ընկել։ Լրագիր կարդացողներ, եղէք նոյնպէս ողորմած, ինչպէս ժողովուրդն էր Հռոմում, և եթէ աշխարհիս երեսին մի որևէ տեղ պատերազմ ծագի, դիմեցէք ձեր պետութիւններին, որպէս զի նրանք վերջ դնեն սպանութիւններին։ Հապի դաշնադրութիւնն այդ իրաւունքը տալիս է ձեզ. ցանկալի է, որ այդ իրաւունքը դառնայ և ձեր պարտականութիւնը։ Այդ նպատակին հասնելը ձեր ձգտումը պէտք է լինի ապագայում։

6. ԲՈՐԵՆԻՆ

Պատմեցէք ինձ մի բան բորենու մասին։ Բորենին շան և կատուի միջին տեղն է բռնում. նա գիշերային, վտանգաւոր և վերին աստիճանի անյագ գիշակեր է, ապրում է գլխաւորապէս գէշ ուտելով և երեսանց թաղուած դիակները դուրս է փորում և լափում։ Բորենիները լինում են Հարաւային Ասիայում և Հիւսիսային Աֆրիկայում։ Եւրօպայում էլ կան, կենդանաբանական այգիներում, կասէք դուք։ Այո, բայց էլի՞ որտեղ։ Երբէք չէք լսել պատերազմի դաշտի բորենու մասին. չէ՞։ Եթէ այդպէս է, պատմեմ ձեզ, թէ ի՞նչ է գրում դրա մասին մի գերմանացի զինուորական բժշկապետ։

Երբ մենք Գրաւելոտի ճակատամարտից յետոյ՝ առաւօտը ձիով գնացինք պատերազմի դաշտը, պատահեցինք մի խումբ զինուորների, որոնք ծառի ճիւղից գլխիվայր կախուած մի պառաւ կնոջ փայտերով և ձեռքներն ընկած ամեն բանով անգթօրէն հարուածում էին։ Այդ պառաւը պատերազմի դաշտի զզուելի բորենիներից մէկն էր, որ իր սոսկալի արարքի միջոցին յանկարծակի բռնուել էր, սաստիկ դիմադրութիւնից յետոյ։ Լուսադէմին դրան տեսել էր պատերազմի դաշտում մի ձիաւոր սպայ՝ թիկնապահ գնդի ծանր վիրաւորուած մի սպայի ոսկեկար օձիքը կորելից. պառաւն ուզեցել էր կողոպտել վիրաւորուածին։ Վիրաւորը բոլորովին լուռ

և անշարժ էր մնացել, որովհետև իր աչքով տեսել էր, որ այդ պառաւը մի փոքր առաջ իր կողքին ընկած, բայց դեռ կենդան ընկերոջ աչքերը հանել էր սառնասրտութեամբ և թանկագին մատանի անցկացրած մատը կտրել՝ առանց վարանելու։ Երբ ձիաւորը վիրաւորուած սպայի օգնութեան կանչին մօտ է արշաւում, չարագէ պառաւը սարճանակի մի քանի հարուածներ է ուղղում նրան, բայց բարեբախտաբար անվնաս. ձիաւոր սպային աջողվում է իր սրի ոյժով վերջապէս ընկճել վայրենի կենդանու նման կծոտող և չանգրտող մարդասպան պառաւին, կապել և մի քանի, օգնութեան շտապող, զինուորների ձեռքով քարշ տալ դէպի պահակը, որտեղ դառնացած զինուորները նրան ենթարկում են Լինչի օրէնքին, ինչպէս յիշեցի վերը։

Տեսնում էք, խեղճ վիրաւորները ոչ միայն ենթակայ են քաղցի, ծարաւի և ցրտի, այլ նոյն իսկ բորենիներից ապահով չեն։ Եւ կան մարդիկ, որ խօսում են թարմ, ուրախ պատերազմի մասին։

7. ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄԱՐԱՑՈՒ

Յիշում էք Քրիստոսի պատմածը ողորմած սամարացու մասին։ Նա ձէթ և գինի էր ածում դժբախտացածների վէրքերի վրայ և կապում։ Այդ մի առանձին բան չէ թւում ձեզ հաւանօրէն. շատ անգամ էք նոյնը տեսնում դուք փողոցում, երբ մէկը կառքի տակ է ընկնում կամ որևէ դժբախտութեան հանդիպում. այդպիսի դէպքերում ոստիկանը շուտով վազում-մօտենում է տելեֆոնին և կարճ ժամանակից յետոյ արագ գալիս է շուտափոյթ օգնութեան կառքը, որի վրայ կարմիր խաչ է նկարուած։ Կառքից իջնում են բժիշկներ և օգնութեան հասնում դժբախտացածին։ Յետոյ նրան նոյն կառքով տանում են հիւանդանոց, որտեղ «Կարմիր Խաչի» նշանով գթութեան քոյրերը խնամում են նրան։ Այդ բանն այսօր ինքն ըստ ինքեան հասկանալի է թւում ձեզ։ Բայց ես կարող եմ ձեզ ասել, որ երկար ժամանակ չէ, ինչ որ փրկութեան այդ միջոցը գործադրվում է

պատերազմի «Կարմիր Խաչի» օրինակով։ Նոյնպէս երկար ժամանակ չէ, որ պատերազմում գործում է «Կարմիր Խաչը»։ Առաջ չկային ողորմած սամարացիներ՝ խեղճ վիրաւորուած զինուորների համար, որոնք թշուառ կերպով մեռնում էին պատերազմի դաշտում, մինչև որ երեան եկաւ մի վշտակցութեամբ լցուած, հեռատես և անդադրում գործունէութեան ոյժով օժտուած մարդ, Հէնրի Դիւնան անունով։ Դիւնանը ողորմած սամարացու գործունէութիւնն սկսեց 1859 թուին, Սոլֆերինոյի ճակատամարտի օրը։ Նա կազմակերպեց օգնող խմբեր՝ վիրաւորուածներին խնամելու նպատակով և ինքն էլ հարիւրաւոր խեղճ զինուորներին մահից առաջ զովացրեց իր զինուորական ջրամանի ըմպելիքով։ Զինուորները նրան անուանում էին «սպիտակ վերարկուով հրեշտակ»։ 1862 թուին նա հրատարակեց մի գրքոյկ «Un souvenir de Solferino» վերտառութեամբ, որի մէջ պատմում է պատերազմի դաշտում իր տեսած սարսափները։ Ի միջի այլոց նա ասում է. «Ոչ-բոլոր վիրաւորուածներին էին ժողովում պատերազմի դաշտից, որտեղ նրանք երէկ ամբողջ օրը արևի կիզիչ ճառագայթների տակ էին մնացել՝ չնայելով նրանց վէրքերին ու տանջանքներին, որ ոչ ոք չէր մեղմացնում, և անտանելի ծարաւին, որ այնքան տանջալի է վիրաւորուածների համար։ Յանցանքը ոչ ոքի վրայ չէ ընկնում. բոլորին միասին օգնելը բացարձակ կերպով անկարելի էր»։

Խաղաղութեան դաշն կապելուց յետոյ Դիւնանը վճռեց հանդէս գալ իբրև ձեռնարկող՝ մասնաւոր օգնութեան մի աւելի ընդարձակ և կանոնաւոր կազմակերպութեան։ Նրան աջողուեց իր գաղափարի համար հետաքրքրել զանազան միապետների, և 1864 թ. գլուխ եկաւ այն նշանաւոր որոշումը, որ յայտնի է «Ժընեվի դաշնագրութիւն» անունով։

Այս որոշման հիման վրայ, որ կազմում էր «Կարմիր Խաչի» հիմնաքարը, ամեն ազգի հիւանդ ու վիրաւոր պատերազմողները, թէ բարեկամ և թէ թշնամի,

հաւասարապէս վայելում են «Կարմիր Խաչի» հովանաւորութիւնն ու օգնութիւնը։

Եւ Դիւնանն էր առաջինը, թէև խորին ծերութեան հասակում, երբ ամբողջ աշխարհն արդէն բոլորովին մոռացել էր նրան, որ արժանացաւ Նոբէլի մրցանակին։

Դիւնանը մեծ գործ կատարեց։ Ժընեվի դաշնագրութիւնը պատերազմի սոսկալի գործում մացրեց վշտակցութեան սկզբունքը։ Կարող է սրանից աւելի ազնիւ ձգտումն լինել։ «Ո՛չ», կասէք դուք։ «Այո՛», կասեմ ես։ Խոցուած վէրքերը բուժելու հոգացողութիւնից աւելի լաւ է՝ ընդհանրապէս վէրքեր պատճառելու առաջն առնելու ձգտումը։ Եւ այդ ձգտումին հն ծառայում խաղաղասիրական ընկերութիւնները, որոնք շուտով նոյնպիսի զօրեղ կազմակերպութիւն կը ստեղծեն, ինչպիսին որ է «Կարմիր Խաչինը»։

8. ԽՈՇՏԱՆԳՄԱՆ

Խոշտանգման վերացումն իսկապէս մեծ գործ էր։ Մեր ամբաստանուածներին այլ ևս չեն ստիպում խոստովանել իրանց յանցանքը հրաշէկ ունելիքներով, բթամատների պտուտակներով, սպանական կօշիկներով և դրանց նման գեղեցիկ բաներով։ Ո՛չ, մենք դրանց հետ մարդավարի ենք վարվում. և եթէ նրանք իրանց յանցանքը չեն խոստովանում, մեր մտքովն անգամ չէ անցնում՝ քաղցով կամ ծարաւով ստիպելու նրանց։ Այո՛, նոյն իսկ մահուան դատապարտուած մարդասպաններին կերակուր և խմելիք ենք տալիս՝ մինչև նրանց վերջին ժամը։ Այո՛, իրաւունք ունենք պարծենալու մարդուն արժանավայել դիրքով։

Միայն պատերազմումն է, որ այդ արժանավայելութիւնը մի ու ժամանակ զրպաններս ենք դնում։ Այդտեղ էլ շատ ենք խօսում մարդասիրաբար պատերազմ վարելու մասին, որովհետև խոստանում ենք չգործածել պայթող գնդակները։ Սակայն ի՞նչ է եղել բոլոր պատերազմների ամենասովորական տակտիկան։ Թշնամուն պա-

շարեղէն հասցնելն արգելել։ Ի՞նչ պէտք է անեն խեղճ զինուորները, երբ ուտելու ոչինչ չունենան։ Այդ մեր գործը չէ, որովհետև մենք նրանց թշնամիներն ենք և այնքան մարդասէր ենք, որ պայթող գնդակներով չենք սպանում նրանց։

Մի ամրոց պաշարելուց յետոյ՝ ի՞նչ է լինում մեր առաջին գործը։ Կտրում ենք պաշարուածների կերակուրն ու խմելիքը, որպէս զի այդպիսով նրանք ստիպուած լինեն անձնատուր լինելու։ Ամրոցում ապրում են ոչ միայն զինուորներ, այլ և ուրիշ մարդիկ, որոնք երբէք զէնք չեն ունեցել իրանց ձեռքին—կանայք, երեխաներ։ Թող դրանք սովամահ լինեն։ Պարիզի պաշարման ժամանակ մարդիկ մկներ են կերել՝ իբրև համադամ կերակուր. այնքան պաշարեղէնի պակասութիւն են ունեցել։

Գիտէք դուք, թէ որքան ջանք և ծախք է պահանջվում՝ մի քաղաքի բնակչութեանը առողջարար խմելու ջուր մատակարարելու համար։ Գիտէք ի՞նչպէս են հրապարտանում պատերազմի ռազմագէտները, երբ նրանց աջողվում է քաղաքի ջուրը կտրել։ Քաղցով և ծարաւով են ստիպում, որ քաղաքը անձնատուր լինի։

Ինչ որ չենք զլանում վերջին եղեռնագործին—կերակուր և խմելիք—խլում ենք անմեղ կանանցից ու երեխաներից։ Ահա այսպիսի միջոցներով է գործում պատերազմը։ Յամենայն դէպս այդ չէ կոչվում խոշտանգում, այլ ռազմագիտութիւն։

Այնպէս չէ՞, քաղաքակրթութեամբ շատ ենք առաջադիմել։ Դեռ շատ բան կարելի էր պատմել, սակայն գուցէ մի օրինակն էլ բաւական լինի՝ ձեզ մի շատ կարևոր բան սովորեցնելու համար—«մտածել»։

9. ՉԻՆԱՑ ԿԱՅՍՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Լրագիրներում տպուեց մեծ տպաւորութիւն առաջացնող մի լուր. ծովային ծառայութեան մէջ գտնուող մի գերմանացի պաշտօնեայ ձեռք էր բերել մի մետաքսի կտոր, որի վրայ ասեղնագործուած էին չինական նշանագրեր։ Այս նշանագրերի հետազօտութիւնը ցոյց տուեց, որ մետաքսի կտորը չինաց կայսրի հարսանիքի պայմանագիրն էր։

Մետաքսի կտորն ի՞նչպէս էր այդ պաշտօնեայի ձեռքն ընկել։ Պաշտօնեան մետաքսը գտել էր մի զինուորից, որ 1900 թ. եղել էր Չինաստանում և մասնակցել էր բոքսերների ապստամբութեան ճնշմանը։ Ի՞նչպէս էր պայմանագիրն ընկել զինուորի ձեռքը. նոյն ճանապարհով, ինչպէս որ Պեկինի աստղաբաշխական կայարանի գործիքները Գերմանիա էին բերուել։ Չինուորներին չէր կարելի պարսաւել, որ ի յիշատակ Չինաստանի հետները մի մի բան էին բերել։ Այսպիսի յիշատակներ վերցնելը առաջուայ ժամանակներում ևս սովորական էր, բայց այդ բանը մի նշանակալից անուն ունէր՝ «ասպատակութիւն»։

Մեր ժամանակներում թշնամու մասնաւոր սեպհականութիւնը անձեռնմխելի է համարվում։ Սակայն եթէ զինուորները չէին կողոպտում, ինչպէս ձեռք բերին նրանք այնքան բազմաթիւ թանգարժէք իրեր և մինչև անգամ կայսրի հարսանիքի պայմանագիրը։ Այժմ պարզ տեսնում էք, թէ պատերազմն ինչպիսի բարոյական դատարակութիւն է տալիս։ Չինուորների մտքովն անգամ չէր անցնի իրանց հայրենիքում օտարի իրերը սեպհականելու, սակայն օտար երկրում նրանք բոլոր բարոյական օրէնքներից իրանց ազատ են համարել. նրանց օֆիցէրներն էլ, ինչպէս երևում է, այդ չտեսնելուն են դրել՝ թէ ոչ զինուորները պէտք է պատժուած լինէին։ Գողութիւնը պատերազմում էլ գողութիւն է մնում։ Կրկնակի բարոյագիտութիւն չպէտք է լինի։ Ի՞նչ կասէինք, եթէ գողութեան համար մեզ բանտ տանող ոստիկանը օգուտ քաղելով մեր բանտարկութիւնից՝ սիրտանար մեր ունեցածին։ Չէ՞ որ եւրոպական դեսպանութիւնները պաշտպանելու նպատակով Չինաստան ուղարկուած զինուորները նոյնպէս և պահապան-ոստիկաններ էին։ Չինաստանում գործած քաջութիւնների համար

նրանք գովասանքի արժանի են, սակայն յիշատակները բերելը մի կողմը պէտք է թողնէին։ Ի՞նչ կարծիք պէտք է կազմեն չինացիները մեր, քաղաքակրթութիւն սերմանողներիս, մասին։ Ես չեմ կարծում, որ նրանք մըտածեն, թէ կայսրն իր հարսանիքի պայմանագիրն ընծայել է զինուորներին. ընդհակառակը նրանք միմեանց կասեն, հարկաւ չինարէն լեզուով, որպէս զի մենք չը հասկանանք. «Մենք վայրենիներս նրանցից աւելի լաւ մարդիկ ենք»։

10. ԾՈՎԵԶՐԵԱՅ ԿԱԼՈՒԱԾՔ

Գիտէք ինչ է նշանակում ծովեզրեայ կալուածք։ Միջին դարերում իրաւունք կար, որ ծովեզրեայ բնակիչները ծովափին կանգնած նաւն իր ամբողջ բովանդակութեամբ իրանց աւարը համարէին։ Շատ մարդասիրական վարմունք էր այդ, այնպէս չէ՞. փոխանակ դժբախտներին օգնութիւն հասցնելու, նրանց կողոպտում էին և դիմադրութեան դէպքում՝ կոտորում։

Փառք Աստուծոյ, որ այդ ծովեզրեայ իրաւունքի և ծովահէնների ժամանակներն անցել են։ Դուք գիտէք արդէն, թէ ովքեր են ծովահէն կոչվում. ծովահէնը չէր սպասում, որ նաւը ծովափ հասնէր, այլ աւելի ապահով լինելու համար՝ ափ հասնելուց առաջ էր գրաւում և կողոպտում նաւը։

Մի՞թէ այսօր ևս նոյնը տեղի չէ ունենում. «նաւ գրաւելու» մասին լսել եմ ոչ շատ ժամանակ առաջ. ճիշտ, բուրերի և եապօնական պատերազմի միջոցին յաճախ էր խօսվում այդ մասին։

Իմացած եղէք. պատերազմի ժամանակ ծովի վրայ եղած մասնաւոր սեպհականութիւնը օրէնքի պաշտպանութիւնը չէ վայելում։ Պատերազմող պետութիւնները ոչ թէ միայն ոմբակոծում են թշնամու պատերազմական նաւերը, այլ և որսում են ուրիշ ազգի պատկանող առևտրական նաւերը։ Այո՛, նոյն իսկ չէզոք ազգերի նաւերը կարելի է գրաւել, եթէ կասկածվում են, թէ

գրանք թշնամի ազգին պատերազմական մաքսանենգ իրեր են հասցնում։ Պատերազմական մաքսանենգ իրեր ասելով հասկացվում է ոչ միայն զէնք, այլ նաև ածուխ, ուտելեղէն, մի խօսքով այն ամենը, ինչ որ հարկաւոր է ազգի ապրուստի համար։ Թշնամի ազգի նաւահանգիստն եկող ամեն մի ապրանքակիր նաւ կարելի է իրաւունքով գրաւել, այսինքն նաւի բեռը իւրացնել և նաւն էլ սեպհական նաւատորմիղին միացնել։ Պատերազմի իրաւունքն է այս։ Պարզ է ձեզ համար այն տարբերութիւնը, որ գոյութիւն ունի պատերազմի ժամանակ մի նաւ գրաւելու և խաղաղ ժամանակ ծովահէնութեան միջև. այո՛։ Ինձ համար պարզ չէ։

11. ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ կասէիք, եթէ սաստիկ կարկուտ գար և քաղաքի բոլոր լուսամուտների ապակիները փշրէր։ Այդ հետաքրքրական կը լինէր, կասէ մէկը. զուարճալի կը լինէր, կասէ մի ուրիշը. ապակի գցողները ուրախ կը լինէին, որ մի անգամ գոնէ լաւ փող կաշխատէին, կասէ մի երրորդը։ Իրաւունք ունէք, ապակի գցողների բանը լաւ կը լինէր, բայց հարց է, թէ դուք էլ գոհ կը մնայիք։

Մի՞թէ իսկապէս կարծում էք, որ ապակի գցողները մի օրում կարող կը լինէին ամբողջ քաղաքի լուսամուտների ապակիները գցել։ Ամենևին. նախ այդքան ապակի գցողներ չէին լինի և երկրորդ՝ ապակու այդքան մեծաքանակ պաշար չէր լինի, որ ամբողջ քաղաքի լուսամուտների համար բաւարար լինէր։ Եւ եթէ դուք ցուրտ օրերին առանց փակ լուսամուտների մնայիք, այլ ևս կարկտահարութիւնը զուարճալի և հետաքրքրական չէիք համարի, այլ, ինչպէս ձեզ ճանաչում եմ, ողբալով կը հայհոյէիք։

Ապա ձեր հայրը. մի՞թէ նա էլ կուրախանար, որ ապակի գցողների գործը կը շատանար. երևի դուք էլ մի անգամ տանը անզգուշութիւնից լուսամուտի մի ապակի կը լինէք կոտրած, ուրեմն կը գիտենաք, թէ ի՞նչպէս կու-

ը սխանայ այդ բանի վրայ ձեր հայրը։ Իսկ կարկտահարութեան դէպքում նա պէտք է ամբողջ տան բոլոր ապակիները գցել տայ. այդ փողով ձեզնից ամեն մէկը մի նոր զգեստ կամ սիրուն գրքեր կարող էր ունենալ. գուցէ և կարողանայիք մինչև անգամ մի հիանալի ճանապարհորդութիւն անել արձակուրդին։ Այդ բոլորը ոչինչ, բայց դուք կուրախանայիք, եթէ ապակի գցողները լաւ փող աշխատէին։ Ինձ թւում է, որ ձեր ուրախութիւնն անկեղծ չէր լինի։ Գուցէ ուրիշ մարդիկ էլ շատ ազնիւ չեն վարվում, երբ ասում են. «Այսպիսի կարկտահարութիւնը շատ օգտակար է. միայն ապակի գցողը չէ, որ գործ է ունենում. կարկուտը ուրիշ վնասներ էլ է հասցնում տներին և այդ պատճառով գործ են ունենում նաև հիւանը, որմնադիրը, նախշքարը և այլն»։ Այո, նրանք ազնուամիտ են, սակայն իրանց ասածները չեն կշռադատում։ Դուք երևի կարծում էք, թէ այդպիսի յիմար մարդիկ չկան. սակայն տարաբախտաբար դրանց թիւը շատ է, և նրանք ձեր կարծածից աւելի յիմար են։

Մի բոպէ երևակայեցէք, որ մի այդպիսի կարկուտ գայ՝ ոչ միայն մեր քաղաքում, այլ մեր ամբողջ երկրում։ Բոլոր ցանքսերը կը փչանան, քաղաքներն ու գիւղերը կարկտի հետ փայլատակող կայծակից կը հրդեհուեն և բազմաթիւ մարդիկ կոչնչանան։ Այդպիսի դէպքում վերոյիշեալ մարդիկը կասէին. «Այժմ հրաշալի է, շատ լաւ է ամենքի համար, այժմ նոր արժէքներ կը ստեղծուեն»։ Ի՞նչ կասէք։ Այդ մարդկանցը պէտք է գժատուն ուղարկել։ Բայց չէ՞ որ դրանք մարդկանց բարիք են ցանկանում. քաղաքները կը վերանորոգուեն, բոլոր արհեստանոցները գործ կը ճարեն, բոլորը դրամ կը վաստակեն և մարդկանց ձեռքը փող կընկնի։

Ուրիշ բան է, եթէ այդ ճիշտ լինէր։ Ո՞րտեղից է դրամը. ո՞վ ունի փող՝ իսկոյն շէնքեր կառուցանելու։ Յիմար մարդիկ հարկաւ այդ չգիտեն և յիմար բան են խօսում, երբ ասում են, թէ այդպիսի կարկտահարութիւնը նպաստում է արդիւնաբերութեանը։ Սակայն այս

դուք էլ գիտէք և նրանց դատավճիռը կը յարմարեցնէք ոչ թէ կարկտահարութեան, այլ պատերազմին։ Նրանք ասում են, որ պատերազմը վերին աստիճանի օգտակար է մարդկութեան համար։ Ասացէք խնդրեմ, երբ մի տուն աւերվում է, ի՞նչ տարբերութիւն կայ, եթէ այդ տունը այրվում է կայծակի հարուածից կամ թէ զինուորների ձեռքով է հրդեհվում։ Երկու դէպքումն էլ վնասը միևնոյնն է. կայծակն է ինձ հարուածել, թէ զնդակն է սպանել—միևնոյնն է. երկու դէպքումն էլ ես կորած եմ ընտանիքիս համար։ Եթէ փոքրիկ կարկտահարութիւնը վնասակար է, մեծն աւելի ևս։ Եթէ հազար տուն է այրվում, վնասը հազար անգամ աւելի մեծ է, քան երբ մի տուն է այրվում։ Այնպէս չէ՞։ Երբ մարդ հաշուել գիտէ, պարզ է այս նրա համար։ Եթէ մարդիկ ձեզ մի անգամ էլ պատմեն պատերազմի տուած բարիքների մասին, հաշուեցէք նրանց հետ. մի այրուած տունը այսքան վնաս է պատճառում, իսկ այրուած գիւղը այսքան անգամ այդքան. գուցէ այդ օգնէ։

12. ՀԱՄԲՈՒՐԳ

Յայտնի է ձեզ, որ Համբուրգը Նիւ-Եօրկից յետոյ աշխարհիս ամենամեծ նաւահանգիստն է դարձել։ Աշխարհիս երեսին չկայ մի երկիր, որ իր ապրանքը Համբուրգ չարտահանէ։ Եւ փոխադարձաբար Համբուրգի նաւերը գնում են Անգլիա, Շօտլանդիա, Նորվիգիա, Հոլանդիա, Ֆրանսիա, Սպանիա, Իտալիա, Հիւսիսային Ամերիկա, Հարաւային Ամերիկա, Աֆրիկա, Ասիա և Աւստրալիա։

Տարին 1700-ից աւելի նաւեր են Համբուրգի նաւահանգիստը մտնում և դեռ դրանից էլ աւելի Էլբա գետի վրայով դէպի ցած են նաւում։ Այդ բոլոր նաւերը բերում և տանում են ապրանք, ճանապարհորդներ. անթիւ գաղթականներ են տանում դէպի մի նոր հայրենիք։ Համբուրգ ներմուծուած ապրանքի գինը անցնում է 4000 միլիոն մարկից, իսկ արտահանուածինը՝ 3500 միլիոն մարկից։ Հաշուեցէք, թէ օրական որքան կանի։

Օրական գալիս գնում են մօտ 100 նաւ և բերում են 10 միլիոնի ապրանք։ Դրանց մէջ գլխաւոր տեղն են բռնում՝ սուրճը, շաքարը, սպիրտը, ներկերը, գինին, երկաթը, հացահատիկները, իւղը, կաշին և այլն, մէկ խօսքով այն բոլորը, ինչ որ առօրեայ կեանքում ամենից կարևորն է գործածութեան համար։

Այժմ մի բօպէ երևակայեցէք, որ մի մեծ փոթորիկ է բարձրացել, նաւերն էլ չեն կարողանում Համբուրգի նաւահանգիստը մտնել և դրանցից շատերն էլ խորտակվում են ծովի վրայ։ Այդ բանը ահագին վնասներ կը պատճառէր. օրական 10 միլիոն և խորտակուած թանգագին նաւերի գինը։ Եւ եթէ այդպիսի փոթորիկը մի երկու օր տևէ, վնասներն անչափ կը լինեն, որովհետև այն բոլոր տեղերում, որոնք Համբուրգից են ապրանք ստանում, պաշարը կը պակասի և նախաճաշին գործածած մեր սուրճի գինը, օրինակ, շատ կը թանգանայ։ Միւս կողմից էլ մարդիկ դրամ չէին ունենայ վճարելու, որովհետև նրանք չեն ստանայ այն դրամը, որ պէտք է ստանային ապրանքը վաճառելով. իսկ այդ ապրանքը նաւերի հետ միասին ոչնչացել է։ Գործարանները հում նիւթ չեն ստանայ՝ մշակելու՝ և կանգ կառնեն, բանւորները աշխատանք չունենալով ոչինչ չեն կարող վճարել առևտրականներին, սրանք էլ իրանց հերթին ոչինչ չեն կարող վճարել մեծ վաճառականներին և այդպիսով Համբուրգում տեղի ունեցած երկարատև սաստիկ փոթորիկը թշուառութիւն և կարիք կառաջացնի ամբողջ Եւրօպայում։

Հարկաւ կառարկէք, թէ սաստիկ փոթորիկն այդքան երկար չի կարող տևել, այլ շատ-շատ մի քանի օր և նաւերը կուշանան. բայց այդ չէ նշանակում, թէ բոլոր նաւերը կը խորտակուեն։ Սակայն այդպէս չէ. կան փոթորիկներ, որ տևում են ամիսներ, նոյն իսկ ամբողջ տարիներ, և այդ միջոցին համարեա բոլոր նաւերն էլ խորտակվում են։

Եթէ Գերմանիայի և Անգլիայի—այս օրինակն ենք վերցնում, որովհետև լրագիրներում յաճախ կարդում ենք

այդ ենթադրութեան մասին—միջն պատերազմ ծագէր և անգլիացիները գերմանական առևտրական նաւերը որսային, հէնց այդպիսի փոթորիկ կը լինէր։ Երևակայեցէք, որ Համբուրգի նաւահանգիստը ամիսներ շարունակ թշնամուց պաշարուած մնայ և ոչ մի նաւ չկարողանայ ել ու մուտ ունենալ. հետևանքն ինչ կը լինի։ Ես կարող եմ վստահ ասել, որ աշխարհը գլխի վայր կը լինի, Եւրօպայի բոլոր պետութիւնների մէջ գործարանները կանգ կառնեն, բանւորները պարապ կը մնան և ուտելու բան չեն ունենայ։

Համբուրգցիները պատմում են, որ 1806—1814 թ. պատերազմներում, երբ մարշալ Դաւուտը քաղաքը գրաւել էր, Համբուրգը 240 միլիոնի վնաս կրեց. այսպիսի մի վնաս կը պատճառէր այժմ պատերազմի միայն մի օրը։

Համբուրգը Գերմանիայի, նոյն իսկ Եւրօպայի համար մօտաւորապէս նոյն դերն է կատարում, ինչ որ բերանը՝ մարդու մարմնի համար։ Ի՞նչ օգուտ կարող է տալ մարդուն ամենաառողջ ստամոքսը, եթէ բերանի միջով անուռնդ չանցնի. նա սովամահ կը լինի։ Այդ պատճառով բերանը պէտք է պաշտպանենք հիւանդութիւնից, իսկ Համբուրգը պատերազմից։

13. ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂ

Ձեր ծնողները շարունակ իրաւամբ ասում են ձեզ. «Սովորեցէք խնայող լինել»։ Ասացէք, խնդրեմ. ի՞նչ է լինում ձեր խնայած դրամը կամ առհասարակ մարդկանց խնայողութիւնը. արդեօք խորը նկուղի մէջ են գետնի տակ պահվում, ինչպէս լինում էր անցած-գնացած ժամանակներում։ Դուք ծիծաղում էք և ասում. «Այդպէս անող մարդիկը յիմար են եղել. աւելի ապահով է փողերը յանձնել խնայողական դրամարկղին, որտեղ նրանք աւելի լաւ են պահվում՝ երկաթեայ զրահապատ արկղներում»։

Աւելի ապահով. սակայն ինչից. մեղնից, գողու-

թիւնից, յափշտակութիւնից։ Ճիշտ է, բայց էլ ինչից։ Դուք ասում էք, որ էլ ուրիշ ոչինչ երկիւղ չկայ։ Ո՛վ գիտէ։ Ասացէք, խնդրեմ. դրամը խնայողական դրամարկղին են յանձնում միայն ապահովութեան համար։ Ո՛չ, տոկոս ստանալու համար։ Դուք շատ լաւ գիտէք, որ ձեր խնայած դրամը տոկոսներով մօտաւորապէս 15—20 տարուայ ընթացքում կրկնապատկվում է։ Բայց ի՞նչպէս է կարողանում դրամարկղը ձեզ տոկոսներ վճարել. ի՞նչ է անում նա ձեր դրամը։ Փոխ է տալիս այն մարդկանց, որոնք դրամի կարիք ունեն։ Այդ մարդիկը տոկոսներ պէտք է վճարեն դրամարկղին և վերցրած դրամի ապահովութեան համար գրաւական տան գետին կամ կալուածք։ Դրամարկղը եղած դրամներով գնում է նաև ապահով արժեթղթեր, այսինքն պետական արժեթղթեր, որոնք նոյնպէս տոկոս են բերում։

Ձեզ համար պարզ պէտք է լինի, որ դրամարկղն եթէ ուզում է իր գոյութիւնը պահպանել, ձեզ վճարած տոկոսներն աւելի պակաս պէտք է լինեն, քան իր ստացած տոկոսը։ Օրինակ՝ եթէ դրամարկղը արժեթղթերից ստանում է $4^0/_0$, ամենաշատը ձեզ կարող է վճարել $3^3/_4$ տոկոս։ Առ ժամանակ այդպէս շատ լաւ կը լինի. բայց ի՞նչ կը լինի դրամի պակասութեան միջոցին, երբ մարդիկ իրանց դրամները հանեն խնայողական դրամարկղից։

Այդ ժամանակ խնայողական դրամարկղը, դրամ ստանալու համար, իբրև գրաւիչ միջոց՝ աւելի շատ տոկոս պէտք է վճարէ։

Նա պէտք է, օրինակի համար, ձեր խնայած դրամների համար $4^1/_2$ տոկոս տայ։ Բնականաբար խնայողական դրամարկղն էլ իրանից պարտք վերցնողից պէտք է աւելի տոկոս ստանայ, հաւանականօրէն 5 տոկոս, ապա թէ ոչ՝ նա չէր կարող իր գոյութիւնը պահպանել, որովհետև պետական արժեթղթերը դարձեալ միայն 4 տոկոս են բերում. եթէ այդպէս չանի, դրամարկղը $4^1/_2$ տոկոս տալով՝ ինքը կորուստ կունենայ։

Այժմ մտածեցէք, թէ ի՞նչ կը լինի, եթէ աւելի վատ

ժամանակներ դան, օրինակ եթէ պատերազմ լինի։ Պատերազմ վարելու համար դրամ է հարկաւոր. պետութիւնը պէտք է նոր փոխառութիւններ անէ և դրամի պակասութեան պատճառով՝ կրկնակի տոկոս վճարէ, այսինքն $8^0/_0$, որպէս զի դրամ տուող գտնէ։ Բայց ի՞նչ է նշանակում այս։ Միայն 4 տոկոս բերող փոխառութիւնը 8 տոկոսաբեր փոխառութեան միայն կէս արժէքը կունենայ և այդ պատճառով պետական 4 տոկոսաբեր արժեթղթեր ունեցողները իրանց կարողութեան կէսը կը կորցնեն. նոյնչափ կորուստ կունենան բնականաբար նաև խնայողական դրամարկղները։ Բայց պատերազմի ժամանակ ամեն մարդ դրամի պէտք ունի և խնայողական դրամարկղից յետ է վերցնում իր խնայողութիւնը։ Բայց խնայողական դրամարկղը այդպէս շուտով չի կարող դրամ ճարել, որովհետև իր պարտապաններն էլ այդպիսի թանգութեան ժամանակ հաւանականաբար չեն կարող իրանց վերցրած դրամը վերադարձնել։ Եւ եթէ խնայողական դրամարկղը նոյն իսկ գրաւական վերցրած գետիններն ու տները ծախէ, մեծ կորուստներ կունենայ. դեռ մի կողմը թողնենք այն հանգամանքը, որ դրամարկղը շատ դէպքերում ծախելու իրաւունք էլ չունի, որովհետև երկարատև տարիների պայմանագրերով կապուած է։ Ապա ի՞նչ պէտք է անէ խնայողական դրամարկղը. իր պարտապաններից չի կարողանում ստանալ. եթէ արժեթղթերը վաճառէ, տուած գնի կէսը կը ստանայ, իսկ դուք բոլորդ էլ ուզում էք ձեր դրամները յետ ստանալ։ Խնայողական դրամարկղը ստիպուած կը լինի կոտր ընկնել, և դուք ձեր խնայողութիւնները կը կորցնէք։

Ուրեմն իրաւունք ունեն նրանք, որոնք իրանց դրամը նկուղներում գետնի տակ են պահում։ Ո՛չ. սակայն անարդարացի են նրանք, որոնք պատերազմի պէս մի մեծ աղէտ են առաջ բերում, և նրանք, որոնք ոչինչ չեն ձեռնարկում, որպէս զի այլ ևս պատերազմներ տեղի չունենան։

14. ԳԵՏՆԱՄՈՒՐԻ ՎԵՐԹՈՒՀԻՆ

Արդէն անցել էր պատերազմ յայտարարելու օրը։ Քաղաքի բոլոր հրապարակներում կանգնած էին ճանապարհ ընկնելու պատրաստ զօրքերը, որոնք հէնց նոյն օրը պէտք է ուղևորուէին պատերազմի դաշտը։ Քաղաքացիները սրտանց և յուզուած հրաժեշտ էին տալիս զինուորներին։ Շատ մայրեր հազիւ էին բաժանվում իրանց սիրելի զաւակներից, շատ նորահարսներ աղի արցունք էին թափում և զօրքի մէջ գտնուող շատ պահեստի զինուորներ էլ ատամները կրճատցնում էին, որպէս զի իրանց կանանց ու զաւակներին հրաժեշտ տալիս՝ բարձր չաղաղակեն։

Սակայն զինուորներից շատ քչերն էին միայն տըխուր մտածմունքներով տարուած, միւսներն ուրախ տրամադրութիւն ունէին։ Զէ՞ որ գնում էին իրանց ոխերիմ թշնամու դէմ քաջութեամբ կռուելու։ Հայրենիքի համար պատերազմելու միտքը հպարտութիւն էր ներշնչում նրանց։ Եւ վերադարձին, գուցէ հէնց նոյն հրապարակի վրայ, ծաղիկների տարափով կը ծածկեն իրանց, կը հրճուեն, կը պատուեն, իբրև հպարտ յաղթողների, և իրանցից իւրաքանչիւրի կուրծքն էլ ծածկուած կը լինի պատուի շքանշանով։

Զինուորների ուրախ տրամադրութիւնը ազդեց և քաղաքացիների վրայ. պատերազմը փոփոխութիւն մտցրեց նրանց մշտական նոյնատեսակ կեանքի մէջ։ Համերաշխութեան կապը, որ մինչև այժմ նկատելի չէր նրանց մէջ, համակեց բոլոր քաղաքացիներին, նրանց սրտերի զարկն աւելի արագացրեց և տոգորեց «յաղթութիւն հայրենիքի համար» մտքով։

Գրետէ Վերները նոյնպէս մասնակից էր ընդհանուր ուրախութեանը. նա միայն ափսոսում էր, որ ինքը տըղամարդ չէր և չէր կարող պատերազմին մասնակցել։ Նա նախանձում էր զինուորներին։ Մինչդեռ վերջինները մէկը միւսի ետևից դափնեայ պսակներ պէտք է

ստանային, ինքը առաջուայ պէս կրկին դաշնամուրի դասեր տալով պէտք է հայթայթէր իր և իր պառաւ մօր ապրուստը։ Գրետէ Վերներն աւելի լաւ օրեր էր տեսել. նրա հայրը մի բանկի կառավարիչ էր եղել, սակայն այդ բանկը մնանկանալով՝ հայրը մնացել էր անպաշտօն։ Նա այնքան վշտացել էր այդ դէպքից, որ սրտի պայթիւն ստանալով՝ մահացել էր։ Կինն ու աղջիկը մնացել են անխնամ։ Թէպէտ Գրետէն աղքատ էր, սակայն մի այնպիսի հարստութիւն ունէր, որ երբէք չէր կարող կորցնել. նա շատ լաւ և բազմակողմանի կրթութիւն էր ստացել։ Այդպիսի կրթութեան և բարեկամական կապերի շնորհիւ նա կարողացել էր դաշնամուրի դասեր տալով՝ հոգալ իր ընտանիքի ապրուստը։

Այսօր Գրետէն երբ տուն վերադարձաւ, սեղանի վրայ մի նամակ գտաւ՝ իր աշակերտուհիներից մէկի ծնողներից ուղարկուած։ Նա կարծեց, թէ գրած կը լինեն, որ մի դաս պարտպելու չգնայ, ինչպէս որ յաճախ լինում էր. սակայն որչափ զարմացաւ, երբ կարդաց հետևեալը. «Մեծարգոյ օրիորդ, թէև շատ ցաւում եմ, սակայն պէտք է յայտնեմ ձեզ, որ առ ժամանակ այլ ևս չշարունակէք որդուս հետ պարապմունքը։ Ձեզ համար հասկանալի կը լինի, որ այսպիսի մի ժամանակ, երբ ամենակարևոր բաների համար ևս դրամ գտնել չի լինում, զուարճութեան համար ծախքեր անելը պէտք է կրճատուի։ Ցարգանքներով և այլն և այլն»։ Գրետէին հարկաւ չզմայլեցրեց այդ նամակի ընթերցումը։ Վերջին օրերի ընթացքում, պատերազմ յայտարարելու ճնշման ազդեցութեամբ, ապրուստի համար կարևոր իրերի գները կրկնապատկուել էին, և նա աւելացած ծախքերը ծածկուելու համար՝ յոյսը դրել էր արտաքոյ կարգի դասեր գտելու վրայ։ Նրա համար դաշնամուր նուագելը զբաղմունք չէր, այլ վաստակ։

Նրա զարմանքն աւելի շատացաւ, երբ յաջորդ օրերը մէկը միւսի ետևից իր միւս աշակերտներից էլ նոյնանման պատճառաբանութեամբ մերժումներ ստացաւ։ Նրա բոլոր անհատական աշխատանքը՝ մերժում-

ները դադարացնելու համար՝ զուր անցան։ Ամեն մի ընտանիքում մի ուրիշ բան կար. մի ընտանիքի զաւակը պատերազմ էր գնում և տանը եղած դրամը նրա համար էր պատրաստվում։ Մի ուրիշ ընտանիք բօրսայում մեծ կորուստներ էր ունեցել. պատերազմ յայտարարելու օրը բոլոր արժեթղթերի գինն ընկել էր։ Շատ գործարաններ դադարեցրել էին աշխատանքը՝ բանուորների պակասութեան պատճառով, որովհետև բանուորները զինուորագրութեան էին կանչուել։ Առևտուրը նոյնպէս պակասել էր. մի սնանկութեան հետևում էր միւսը։ Մարդկանց չէր կարելի պարսաւել, որ դաշնամուր սովորելու դասերի համար այլ ևս դրամ չունէին։

Գրետէն չահաբեկուեց ճակատագրի այս հարուածից. նա ինքն իրան ասաց. «եթէ դաշնամուրի դասեր չկան, լեզուի ուսուցման դասեր կը գտնեմ»։ Նա շատ անգամ յայտարարութիւն տպեց լրագիրներում այդ մասին, սակայն առանց հետևանքի. ոչ ոք չեկաւ լեզուի դաս առնելու։ Պատերազմի ժամանակ ոչ ոք պահանջ չէր ըզգում լեզուներ սովորելու։ Երաժշտութեան և լեզուի ուսուցիչների ահագին բանակը հացի կարօտ մնաց։

Սակայն Գրետէն հաստատամիտ աղջիկ էր. իր հօր կենդանութեան ժամանակ նա զուարճութեան համար փոքրիկ պատկերներ էր նկարում ջրաներկերով և մասնագէտների գովասանքին արժանանում. այդ նկարների համար պատկերավաճառներից մէկը բաւականին խոշոր գումար էր առաջարկել։ Գրետէն պատից ցած բերեց այժմ այդ նկարները և տարաւ պատկերավաճառին։ Վերջինս զարմանքով նայեց նրան և ասաց. «Նկարներն իսկապէս շատ գեղեցիկ են, սակայն մի՞թէ դուք ճիշտ այնքան պարզամիտ էք, որ կարծում էք, թէ որևէ մէկին այժմ ինձնից պատկեր կը գնի. պարոնայք նկարիչներն այժմ անգործ են»։

Գրետէն իսկապէս բազմակողմանի կրթութիւն ունէր. նա գիտէր նաև սքանչելի ձեռագործ պատրաստել. սակայն ինչ որ ասացին նրան արուեստի իրերի վաճառատանը, նոյնը կրկնեցին նաև ձեռագործի վաճառանոցում. նրան մատնացոյց արին հարիւրաւոր հացի կարօտ մնացած ձեռագործով զբաղուողներին։

Գրետէն մինչև այդ ժամանակ գլխի չէր ընկել, որ ուրիշներն էլ միևնոյն բախտին են հանդիպել։ Ձեռագործի վաճառանոցից տուն վերադառնալիս Գէորգեան հրապարակում նա տեսաւ մի մեծ ամբոխ և մօտիկ կանգնածներից մէկին հարցրեց, թէ ինչո՞ւ են հաւաքուել այդ մարդիկը։ Պատասխան ստացաւ, թէ «անգործ բանուորներ են»։ Այդ բանը հետաքրքրեց Գրետէին, և սա մօտեցաւ ամբոխին. մի մարդ ճառ էր խօսում. սակայն Գրետէն շատ բան չհասկացաւ. ըստ երևոյթին խօսողը մի դերձակ էր։ Նրա ճառի նշանաբանն էր՝ «մենք հաց ենք ուզում, աշխատանք ենք ուզում»։ Եւ ճիշտ որ, ո՞վ էր այժմ նոր զգեստ գնում։ Նրանից յետոյ ամբիոն բարձրացաւ մի որմնադիր, ապա մի ատաղձագործ։ Բոլորն էլ միևնոյն բանն էին ասում. արհեստները աշխատանք չեն տալիս և ով բաղդ չունէր զօրքի համար աշխատելու, մնացել էր հացի կարօտ։ Միևնոյն ժամանակ ամեն բան թանգանում էր. ուրախ տրամադրութիւնը վաղուց արդէն անյայտացել էր, և ամենքն անիծում էին պատերազմը։

Պատերազմի դաշտից էլ ամեն օր Յովբի լուրեր էին գալիս. յաղթութեան հետքն անգամ չկար։ Վճռական ճակատամարտ տեղի չէր ունենում, և պատերազմը շարունակ ձգձգվում էր։ Ամեն տեղ կարելի էր հանդիպել նիհարած դէմքով մարդկանց, որոնց աչքերից կարելի էր տեսնել քաղցի նշանները։ Տարածուեց տիֆի և խօլերայի սարսափելի համաճարակը. մահացութիւնն զգալի կերպով աճեց։ Գրետէի մայրը նոյնպէս վարակուեց տիֆով և վախճանուեց։

Գրետէն միայնակ մնաց աշխարհիս երեսին։ Պատերազմին դեռ վերջ չէր լինում։ Ժողովրդին կեղեքում և կողոպտում էին. ոչ ոք չկար դիմադրող։ Կատարեալ անիշխանութիւն էր տիրում։ Քաղաքացիները չափազանց դառնացած էին։ Այլ ևս ի՞նչ նշանակութիւն ունէր նրանց համար արտաքին թշնամին, երբ ներքինը նրանց

ունեցած. չունեցածն էր կողոպտում։ Այդ դրութեան հետևանքն եղաւ՝ ցայժմ եղած յեղափոխութիւններից ամենամեծը։ Կառավարութիւնն ընկճուեց և յայտարարուեց հասարակապետութիւն. զօրքերը շտապով յետ կանչուեցին պատերազմից և խաղաղութեան դաշն կնքուեց Թշնամու հետ, որ Նոյնպիսի դրութեան մէջ էր գտնվում։

Պատերազմը վերջացաւ, սակայն նրա հետևանքները ծանրապէս ճնշեցին երկիրը։ Դաշնամուրի դասերի համար այժմ ևս ոչ ոք դրամ չունէր և ձեռագործն ոչ ոքի պէտք չէր։ Որմնադիրների համար աշխատանք շատ կը լինէր, բայց ով դրամ ունէր շէնքեր կառուցանելու համար։ Հացթուխները սիրով հաց կը թխէին, որովհետև հացը շատ ցանկալի էր ամենքին, սակայն ալիւր չկար։ Պատերազմի միջոցին արտերն անմշակ էին մնացել կամ զօրքերի շնորհիւ անապատացել։ Ով կարող է գաղթել՝ գաղթում էր։ Հայրենիքից հեռացողների հոսանքի մէջ էր և Գրետէ Վերները, որ իր վերջին ունեցածն էլ ծախել էր, որպէս զի կարողանայ այդ դրամով ճանապարհ ընկնել։ Բարեբախտաբար նա դերձակութիւն էլ էր սովորել և դրանով ուզում էր հեռաւոր երկրում իր բաղդը փորձել, և եթէ այդ էլ չօգնէր, յոյսը դրել էր խոհարարուհու պաշտօնի վրայ, որովհետև լաւ կերակուր պատրաստել գիտէր։ Եւ իսկապէս այդ արհեստի շնորհիւ կարողացաւ տեղ գտնել։ Իսկ ուրիշները, որոնք այդ էլ չգիտէին, հեռու երկրում էլ աշխատանք չգտան։

15. ՄԻ ԲԱԺԱԿ ՋՈՒՐ

Այս վերնագիրն է կրում Սկրիբի մի յայտնի կատակերգութիւնը։ Այլ ևս ճիշտ չգիտեմ այդ պիէսի բովանդակութիւնը. միայն այնքանը յիշում եմ, որ մի բաժակ ջրի պատճառով ամենամեծ քաղաքագիտական շփոթութիւններ են ծագում։ Այդ պիէսը իրաւամբ կրում է նաև հետևեալ երկրորդ վերնագիրը՝ «Ազդեցութիւններ և պատճառներ»։ Ես միշտ այդ պիէսն եմ յիշում, երբ ընդհանուր պատմութեան մէջ անցեալ դարի պատերազմներն եմ կարդում։ Ի՞նչ չնչին պատճառներով են պատերազմներ մղուել և որպիսի բոլորովին այլ հետևանքներ են հասունացրել այդ պատերազմները, քան կարելի էր սպասել՝ ի նկատի ունենալով այդ պատճառները։

1863 թ. Աւգստենբուրգի տան և Հոլշտայն-Գլիւկսբուրգ շառաւիղի միջև վէճ ծագեց Շլեզվիգ-Հոլշտայնի ժառանգական յաջորդութեան պատճառով։ Այդ էր վէճի պատճառը։ Ես զանց եմ առնում մաքառման առանձին աստիճանները և մատնացոյց անում միայն վերջնական հետևանքը. աւստրիացիների և պրուսացիների միահամուռ արշաւանքից յետոյ՝ 1865 թ. Գաշտայնի դաշնադրութեամբ Հոլշտայնն ընկաւ Աւստրիայի, իսկ Շլեզվիգը Պրուսիայի ձեռքը։ Մի՞թէ այդ էր Աւգստենբուրգի հերցոգի դիտաւորութիւնը։

Շլեզվիգ-Հոլշտայնի պատճառով 1866 թ. պատերազմ ծագեց Աւստրիայի և Պրուսիայի միջև։ Պրուսիան բացի Շլեզվիգ-Հոլշտայնից գրաւեց նաև Հաննովէրը, Հեսսէն-Կասէլը, Ֆրանկֆուրտը Մայնի վրայ և ուզում էր ունենալ Աւստրիական Շլեզիան և Հիւսիսային Բոհեմիան. Աւստրիան տուեց ոչ միայն Շլեզվիգ-Հոլշտայնը, այլ և ստիպուած եղաւ Վենետիկը զիջել։

Սպանիայի արքայական գահն առաջարկվում էր Հոհէնցոլէրն-Զիգմարինգէնի պրինց Լէոպոլդին, և այդ առիթով սկսուեց 1870 թ. պատերազմը։ Հետևանքը եղաւ Նապոլէոնի գահազուրկ լինելը և Էլզաս-Լոթրինգէնի Ֆրանսիայից Գերմանիային անցնելը։

Մի ֆրանսիական առած ասում է. «Ախորժակը բացվում է ուտելու հետ»։ Պետութիւնների միմեանց դէմ մղած կռիւների վերաբերմամբ էլ նոյնը կարելի է ասել. սակայն մի՞թէ այդպէս պէտք է լինի։ Մի՞թէ այս չնչին պատճառների համար արժէր 1870 թ. կէս միլիոնից աւելի մարդ զոհել։ Գուցէ այդ պատրուակները պատերազմի իսկական պատճառները չէին. ապա ու-

բեմն որոնք են այդ պատճառները, որ չեն ուզում խոստովանել։ Ես կասեմ ձեզ. այդ պատճառներն են՝ իշխանամոլութիւնը, երկիրներ տիրապետելու անյագ տենչանքը և անձնապաստանութիւնը։ Հարկաւ սրանք այնպիսի շարժառիթներ չեն, որոնցով կարելի լինէր որևէ իրաւունք ձեռք բերել, սակայն սրանք են պատերազմների իսկական շարժառիթները։ Բայց այս շարժառիթները այլ ևս տեղի չեն ունենայ, եթէ ազգերի միջև առաջացած վէճերը դատարանով որոշուեն։ Ի՞նչ որոշումներ կը կայացնէր դատարանը վերև առաջ բերուած վէճերի նկատմամբ. դատարանը պարզ ու որոշ կերպով մէկ պետութեանը կասէր՝ «դու արդար ես», իսկ միւսին՝ «դու անարդար ես»։ Եթէ մէկն իր իրաւունքն է պահանջում, դրա համար հարկաւոր չեն մարդկային զոհեր. զոհեր պահանջվում են միայն այն դէպքում, երբ պետութեան պահանջն անիրաւացի է, երբ նա աւելի է պահանջում, քան իրան կը պատկանի։ Ով մէկ ուրիշից ուժով խլում է նրա ժամացոյցը, զգեստը, գրամը, նրան ես չեմ անուանի յաղթող, այլ աւազակ։ Երանի՜ թէ ազգերն էլ միայն այդպէս մտածէին։

16. ԼՕՀԷՆԳՐԻՆ

Արդէն եղե՞լ էք այս օպերայի ներկայացմանը. նոյն իսկ եթէ չէք լսել այս օպերան, ձեզ յայտնի կը լինի հարկաւ Լօհէնգրինի գործողութիւնը. խեղճ Էլզա ֆօն Բրաբանտը մնացել է անօգնական և ոչ ոք չէ պաշտպանում նրա անմեղութիւնը, մինչև որ վերջապէս երևում է նաւակի մէջ նստած Լօհէնգրինը. նաւակը քաշում է մի կարապ. նա Աստուծոյ դատաստանից, այսինքն Տելրամունդի հետ ունեցած մենամարտութիւնից, յաղթող է դուրս գալիս և այդպիսով ակներև է կացուցանում Էլզայի անմեղութիւնը։

Շատ սիրուն բան է այսպիսի աստուածային դատաստանը՝ թատրոնում։ Այդտեղ հրաշալի է տեսարանը, երբ անմեղութիւնը վերջապէս յաղթանակում է. սակայն կեանքի մէջ յաճախ գործն ուրիշ կերպ է վերջանում։ Մենամարտութիւնն էլ մի տեսակ Աստուծոյ դատաստան է համարվում. բայց որքան յաճախ է պատահում, որ անպատուածը, որի պատիւը վատթար կերպով վիրաւորել են, յանդուգն անպատուողի ձեռքով սպանվում է, որովհետև նա պատահաբար աւելի լաւ զէնք բանեցնել է իմանում։ Մ՞իդ էլ Աստուծոյ դատաստանն է։ Մենամարտութեան անմիտ լինելը տեսնելով՝ բոլոր երկիրներում էլ ընկերակցութիւններ են կազմվում, որոնց նպատակն է այս միջնադարեան չարիքի դէմ կռիւ մղելը. այդ ընկերակցութիւնները կոչվում են հակամենամարտական լիգաներ։

Անցած-գնացած ժամանակների նոյնանման մի մընացորդ էլ կայ, որ աւելի անմիտ է, քան մենամարտութիւնը. դա պատերազմն է։ Մենամարտութեան ժամանակ երկու շահագրգռուած կողմեր կան, որ գիտեն, թէ ինչու համար են կռւում և ազատակամ կռիւ են մղում. սակայն պատերազմում երկու կողմից էլ կռւում են անմեղներ, որոնց համար հակառակորդի սպանութիւնը ամենաչնչին նշանակութիւն անգամ չունի։

Դուցէ պատերազմն էլ Աստուծոյ դատավճիռն է. երբ այնքան բազմութիւն պատերազմելու է գնում, արդեօք իրաւացին է յաղթող հանդիսանում։ Ո՛չ. ոչ ոք չի կարող պնդել այդ բանը։ Ինչպէս որ մենամարտութեան միջոցին զէնք գործածելու աւելի մեծ վարժութիւն ունեցողն ամենամեծ հաւանականութեամբ յաղթող է հանդիսանում, այդպէս էլ պատերազմում սովորաբար յաղթում է այն պետութիւնը, որ աւելի բազմաթիւ զինուորներ և աւելի լաւ զէնքեր ունի։ Ուրեմն յաղթող է հանդիսանում ոչ թէ արդարութիւնը, այլ ոյժը։ Այդ է պատճառը, որ առաջացել է հետևեալ ասացուածը. «Ոյժն արդարութիւնից առաջ է գնում»։

Առաջ համարեա ամեն տարի պատահում էր, որ Թիւրքիան անմիջապէս չէր կատարում եւրոպական

մի որևէ պետութեան որևէ պահանջը. դրան հետևում էր նաւատորմիղի ցոյցը, երբեմն ֆրանսիական, երբեմն իտալական կամ անգլիական։ Գիտէք ինչ է նշանակում նաւատորմիղի ցոյց։ Այդ նշանակում է. եթէ դու, Թիւրքիա, իմ պահանջն անմիջապէս չկատարես, կը ռմբագործենք այս ու այն նաւահանգիստը, այսքան ու այնքան մարդ կը կոտորենք, կաւերենք ամբողջ քաղաքը։ Թիւրքիան սովորաբար շուտով զիջում էր, և նաւատորմիղը վերադառնում հայրենիք։ Եթէ Թիւրքիան չզիջէր և իսկապէս նաւահանգիստն աւերուէր, ասացէք խնդրեմ, մի՞թէ այդ Աստուծոյ դատաստանը կը լինէր։ Ո՛չ, այդ կը լինէր ուժեղի իրաւունքը, ճիշտ այնպէս, ինչպէս որ սովորաբար անում է աւազակը՝ սպառնալով մեզ. «դրամդ կամ կեանքդ»։ Սակայն մենք մեզ աւազակ չենք համարում, այլ քաղաքակիրթ մարդիկ, որ իրաւունքի գիտակցութիւն ունենք։ Եթէ մեզ այդպիսիներ պէտք է համարենք, ուրիշ ոչինչ չէ մնում անել, քան այդ իրաւունքի գիտակցութիւնը գործադրել։ Եւ այդ կարող ենք, եթէ ազգերի վէճերի համար ձգտենք ունենալ նոյն իրաւաբանական օրէնքները, որ վաղուց արդէն ունենք մեր պետութիւնների մէջ։

Մի այդպիսի միջազգային դատարան արդէն գոյութիւն ունի։ Այն վայրկեանից, երբ պետութիւնները կը պարտաւորուեն միմեանց հետ ունեցած վէճերը Հաագի միջազգային դատարանին ենթարկել, իրանց գոյութեան իրաւունքը կը կորցնեն նաւատորմիղի ցոյցերը, պաշարումները, երկիրներ գրաւելը, պատերազմները կամ ինչպիսի անուն էլ որ ունեն նման աստուածային դատավճիռները։

Եթէ մի պետութիւն իրաւացի պահանջ ունի, այդպիսի պահանջին գոհացումն կը տայ միջազգային դատարանը։ Իսկ եթէ պահանջն իրաւացի չէ, հարկաւ դատարանի միջոցով այդ պետութիւնը բաւարարութիւն չի ստանայ։ Եթէ նա պատերազմ յայտարարէ՝ իր պահանջին այնու ամենայնիւ գոհացումն տալու, այն ժամանակ նա իրաւունք չունի արդարութեան և Աստուծոյ դատաստանի մասին խօսելու. այդ դէպքում նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի սովորական աւազակ և իբրև այդպիսին արժանի է հրապարակական պարսաւանքի։ Սակայն այդ բանից երկիւղ է կրում իւրաքանչիւր պետութիւն։ Կայ և պետութիւնների պատիւ, որովհետև պետութիւնները բաղկացած են պատուոյ զգացմունք ունեցող մարդկանցից. այդ պատճառով վտանգ չկայ, ինչպէս որ երկիւղ են կրում շատերը, որ միջազգային դատարանի դատավճիռը չյարգուի։ Ուրեմն կարող ենք յոյս ունենալ, որ մօտիկ ապագայում Աստուծոյ դատաստանի փոխարէն գոյութիւն կունենայ միջազգային դատարան։

17. ՆՈՐ ՎԱՃԱՌԱՆՈՑԸ

Երբ X փողոցի վրայ մի նոր, նորաձև վաճառանոց պէտք է բացուէր, արհեստաւորները բողոք բարձրացրին։ Նրանք չէին կարող նրա հետ մրցել և անկասկած կը կործանուէին։ Բայց այնու ամենայնիւ վաճառանոցը բացուեց. այդտեղ վաճառվում էին զգեստներ, կօշիկներ, սպիտակեղէն և այլ տեսակ իրեղէններ։

Այդ վաճառանոցում ծախուող զգեստները վատ չէին, սակայն գնողների մարմնի վրայ չէին ձևուած, այդ պատճառով կարգին զգեստ պատրաստող դերձակները դարձեալ իրանց յաճախորդներն ունէին։ Կօշիկները լաւն էին, բայց ոտքի ցաւ ունեցողների համար չէին յարմարեցուած։ Այն կօշկակարները, որոնք նոյնպէս միայն նեղ կօշիկներ էին կարում, չէին կարող բնականաբար մրցել վաճառանոցի հետ, որովհետև վաճառանոցում աւելի էժան էին ծախում այդպիսի կօշիկները։ Ընդհակառակը, մրցութեան դիմացան այն կօշկակարները, որոնք ընտիր և ոտքը չսեղմող կօշիկներ էին կարում։ Ուրեմն արհեստները մաքառման մէջ էին գտնվում վաճառանոցի հետ։

Մեր գործը չէ, թէ այդ մաքառման մէջ ո՞վ յաղթող հանդիսացաւ. մենք միայն իրողութիւնն ենք ընդգծում, որ մաքառումն կար։ Արհեստաւորները կարող

էին նաև այլ կերպ վարուել՝ իրանց նեղը ձգող վաճառականոցի մրցութիւնը վերացնելու համար. եթէ նրանք վաճառականոցը հրդեհի ճարակ դարձնէին, մրցութիւնը կոչնչացնէին, սակայն այդ արարքը արժանի կը լինէր «պատերազմ» կոչուելու։ Պատերազմ էր, օրինակ, երբ Անգլիայում մեքենաներ մտցնելիս՝ բանուորները սկզբում մեքենաները փչացնում էին։ Հասկանում էք ա սածներիս նպատակը։ Մաքառման և պատերազմի միջև տարբերութիւն կայ։ Կարելի է և մաքառել առանց որևէ բռնի ոյժի։ Մրցութեան մաքառման մէջ յաղթում է, ինչպէս տեսնում էք, միշտ այն կուսակցութիւնը, որ աւելի շնորհալի է. կան մաքառման այլ հազարաւոր ձեւեր, որոնք զէնքով չեն առաջ տարվում։

Այժմ գանք գլխաւոր կէտին. շարունակ ասում են, թէ պատերազմը բնական օրէնք է և չի կարելի աշխարհից վերացնել։ Սակայն ճիշտ չէ այդ. պատերազմը խառնում են մաքառման հետ։ Պատերազմը մաքառման մի ձևն է միայն և ամենակոպիտ ձևը, որ նոյնպէս կարելի է վերացնել, ինչպէս որ վերացրինք սարկութիւնն ու մարդկանց տանջելը։ Մաքառումը հարկաւ չի կարելի աշխարհից վերացնել, ոչ առանձին անհատներինը և ոչ էլ ազգերինը. սակայն կարիք չկայ, որ ազգերի մաքառումը տեղի ունենայ արիւնհեղութեամբ, ինչպէս անհատների մաքառումը զէնքով չէ տեղի ունենում, այլ գլխով։

Մաքառումը կայ և միշտ էլ կը լինի. սակայն յիշեցէք, թէ առաջուայ ժամանակներում որչափ արիւնահեղ կրօնական պատերազմներ են մղուել. արդեօք դրանք այսօր կարող էին տեղի ունենալ՝ նոյն պատճառով։ Ազգերի միջև միշտ կը լինեն տնտեսական մաքառումներ. մի ազգ կաշխատի միւսից առաջ անցնել, և աւելի շնորհալին յաղթանակը կը տանէ, բայց ոչ՝ աւելի բիրտը։ Տեղի կունենան գիտական մաքառումներ, բայց երբէք գերմանական ու ֆրանսիական ասդաբաշխները, աւստրիական և իտալական քիմիկոսները միմեանց չեն կոտորի իրանց ասդաբաշխական կամ քիմիական գիւտերի համար մենաշնորհ ստեղծելու։ Եւ ինչու՞ պէտք է քաղաքական մաքառումները նոյնպէս ուրիշ կերպ տեղի չունենան, այլ միայն պատերազմով։ Եթէ մեզնից մէկն անպատուում է միւսին, վերջինիս համար բաց են դատարանի դռները՝ հատուցում ընդունելու համար։ Եթէ մի պետութիւն միւսից անպատուուած է զգում իրան կամ զրկուած, նա էլ նոյն եղանակով միւս պետութեան դէմ պէտք է բողոքէ միջազգային դատարանին։ Միջազգային կամ միջպետական դատարանն արդէն գոյութիւն ունի, և մենք կարող ենք յոյս ունենալ, որ նրա օգնութեամբ բռունցքի իրաւունքը ազգերի միջև նոյնպէս կանայայտանայ, ինչպէս որ անյայտացել է անհատների միջև։

18. ԸՆԹԵՐՀԻՍ ԵՐԵՍԻՆ ՇՏԱ-ՇՏԱ ՄԱՐԴԻԿ ԿԱՆ

Ո՞րչափ յաճախ է լսվում այս խօսքը. երբ մէկը գործ չէ գտնում, որովհետև շատ ուրիշ մարդիկ նոյնպէս աշխատանք են որոնում, իր սեպհական կաշուի վրայ է զգում այդ խօսքի ճշմարտութիւնը։ Եւ այդ պատճառով շատերն են ասում, թէ ամենից լաւն այն կը լինի, որ մի պատերազմ լինի և մեծ քանակութեամբ մարդիկ ոչնչանան, որպէս զի միւսների համար աւելի շատ տեղ լինի։

Ես չեմ ուզում խօսել այն մասին, թէ արդեօք իսկապէս շատ-շատ մարդիկ կան. միայն մի բան եմ ուզում ասել ձեզ. եղած մարդկանց կրկնապատիկն էլ որ լինի, ապահովապէս բոլորի համար էլ գործ կը գտնուի։ Դրա համար պէտք է մարդկային արժանապատուութեանը վայել բնակարաններ շինուէին՝ բնակարաններ չուտեցողների համար, զգեստներ և կօշիկներ պատրաստուէին՝ այն մարդկանց համար, որոնք հագնելու ոչինչ չունեն, գետերի հոսանքները կանոնաւորուէին, ճանիճները ցամաքեցուէին և մշակուէին և այլն և այլն։ Գործ միշտ կը գտնուէր, եթէ դրա համար կարևոր դրամը լինէր։ Եւ դրամ կը լինէր, եթէ պատերազմականնաւերի, թնդանօթների և զէնքերի համար աւելի քիչ ծախսուէր։

Սակայն բոլորովին մի կողմը թողնելով այդ հանգամանքը, կան երկիրներ, որտեղ հէնց այժմ էլ բանուորների պակասութիւն կայ։ Դուք լսում էք գիւղացիների գանգատը, թէ իրանք ծառայողներ չեն գտնում, որովհետև բոլորն էլ քաղաք են գնում. կան և այնպիսի երկիրներ, որոնք այնքան նօսր ազգաբնակութիւն ունեն, որ ապահովաբար երեք անգամ դրանից աւելի մարդիկ կարող են կերակրել։ Եւ եթէ շատ-շատ մարդիկ կան, Ֆրանսիացիք ինչո՞ւ են գանգատվում Ֆրանսիայի ազգաբնակութեան քչանալու մասին։

Ընդունենք նոյն իսկ, թէ ճիշտ է, որ շատ-շատ մարդիկ կան. մի՞թէ դրա համար պատերազմով պէտք է ոչնչացնենք մարդկանց։ Մենք կարող էինք աւելի յարմար միջոցի դիմել. բաւական էր, որ բոլոր հիւանդանոցները քանդէինք, բոլոր հիւանդութիւններին, ինչպէս օրինակ խօլերային, ժանտախտին, ագատ ճանապարհ տայինք, բժիշկներին արգելէինք հիւանդներին բժշկելու, այդ դէպքում մարդկանց ոչնչացնելու նպատակին կը հասնէինք առանց որևէ ծախքի։

Դրա փոխարէն մենք մեծ խնամքով ենք վերաբերվում առողջապահական գիտութեանը, որ աշխատում է ամեն մի վարակիչ հիւանդութիւն հէնց իր սաղմի մէջ խեղդելու։ Ունենք բժիշկներ, որոնք ամեն ջանք թափում են՝ անբուժելի հիւանդութիւնները բժշկելու։

Ուրեմն ո՞ւր է տրամաբանութիւնը. աւելի խելացի չէ՞ր լինի, որ հիւանդներին ոչնչացնէինք, քան առողջներին։ Մի՞թէ աւելի լաւ չէր լինի, որ խելագարներին ու ոճրագործներին ասպարիզից վերացնէինք, քան թէ տարիներ շարունակ նրանց կերակրէինք և դրանց պահպանելու համար այն մարդիկը հոգային, որոնք իրանք ոչինչ չեն վատանում։ Եթէ ուրեմն իսկապէս շատ-շատ մարդիկ կան, դրանց ոչնչացնելու համար պատերազմից աւելի ապահով միջոցներ ունենք։ Աշխատենք որչափ կարելի է շուտ այդ միջոցներն իրագործել. վաղը պատուիրենք մի ամբողջ վագոն խօլերայի բացիլներ և ա-

մեն մէկս կուլ տանք մի լաւ բաժին դրանից, որպէսզի հայրենիքին ցոյց տանք, որ լաւ հայրենասէրներ ենք։

Չէ՞ որ որքան քիչ մարդ լինի, որքան շատ սպառուեն, այնքան օգտակար կը լինի. ով սիրում է իր հայրենիքը՝ պէտք է ուրեմն ինքն առաջինը լինի մեռնողը։

Տեսէք՝ այդ չեն ասում այն մարդիկը, որոնք անմտաբար խօսում են. նրանց կարծիքով՝ մեռնելը վերաբերում է միայն ուրիշներին, իսկ իրանց՝ ոչ։ Ուրիշները հարկաւ պատկանում են «աշխարհիս երեսի շատ-շատ մարդկանցը», իսկ իրանք փառաւոր բացառութիւններ են։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ I ՄԱՍԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Թէև վերջին ժամանակներս խաղաղասիրութիւնը պատերազմի դէմ մարտնչելուց աւելի բարձր նպատակների է ձգտում, այնու ամենայնիւ նրա ամենալաւ ագիտացիայի այժն է պատերազմի նկարագիրը և այն վնասների պատկերացումը, որոնք առաջանում են պետութիւնների վէճերը պատերազմով վերջացնելու գործողութիւնից։ Այդ պատճառով էլ այս աշխատութեան մէջ մեծ տեղ պէտք է բռնէր այդ նկարագիրը։

№ № 1—4 օրինակները պարզում են, որ պատերազմն իսկապէս սպանութիւնների շարան է, որ չի կարող գոյութիւն ունենալ կրկնակի բարոյագիտութիւն պատերազմի և խաղաղութեան համար։

Պատերազմի դաշտը մի այնպիսի գաղափար է, որի մասին ճիշտ մտապատկեր կարող են ունենալ միայն նրանք, որոնք մասնակցել են պատերազմին։ Սակայն ինչպէս պէտք է մանուկները այդպիսի մտապատկերներ ունենան, երբ դրանցից ամենամեծ խնամքով թագցնում են պատերազմի արհաւիրքները։ № № 5, 6 և 7 օրինակները համապատասխան պարզաբանութիւններն են տալիս պատանիներին, մանաւանդ № 7 օրինակը առիթ է տալիս նրանց ծանօթացնելու խաղաղասիրական ընկերութիւնների գործունէութեանը։

Պատանիների ձեռքը տրուող դասագրքերի մէջ պատերազմը շրջապատուած է սրբերի լուսապսակներով. այդտեղ փառաբանվում են բոլոր հերոսական գործողութիւնները, բոլոր առաքինութիւնները, իսկ ոչ մի խօսք չէ լինում պատերազմի առաջացրած մոլութիւնների մասին. եթէ այդպիսի խօսք լինում է, այդ էլ վերաբերում է թշնամուն։ №№ 8, 9 և 10 օրինակները ցոյց են տալիս հակառակ պատկերը։

Մի ժամանակաշրջանում, երբ պատանիներին իսկապէս վարժեցնում են դրամ վաստակելու, մեծ նշանակութիւն ունի երիտասարդութեան համար կանխօրէն պարզելու պատերազմի նիւթական ազդեցութիւնը։ №№ 11—14 օրինակները ցոյց են տալիս պատերազմի ունեցած ներգործութիւնը ամեն մի առանձին անհատի կեանքի վրայ։

Պատերազմի պաշտպանների յենակէտն այն է, որ նրանք պատերազմը ներկայացնում են իբրև անխուսափելի, իբրև գոյութեան կռուի օրէնքի և Մալթուսի ազգաբնակութեան աճման յայտնի օրէնքի հետևանք։ Մալթուսի օրէնքով՝ մարդկանց թիւն աճում է երկրաչափական պրոգրէսիայով, մինչդեռ սննդի նիւթերի քանակը աւելանում է միայն թուաբանական պրոգրէսիայով։ Այս բացարձակ կարծիքը, որ իրական հիմնաւորութիւն չունի—բաւական է յիշել Ֆրանսիայի օրինակը, որի ազգաբնակութիւնը հաստատապէս պակասում է—առիթ է տալիս պատերազմը նոյնացնելու բնութեան մէջ գոյութիւն ունեցող մեծ կռուի հետ։ Ոմանք էլ պատերազմը նկատում են իբրև Աստուծուց ուղարկուած և այդ պատճառով՝ անխուսափելի։ Կարևոր է ուրեմն բացատրել պատանիներին՝ պատերազմների իսկական պատճառները, մաքառման և պատերազմի միմեանց հետ ունեցած յարաբերութիւնը, աստուածային դատաստանի նշանակութիւնը և շօշափելի կերպով ներկայացնել խաղաղասիրութեան գլխաւոր նպատակներից մէկը՝ միջազգային դատաբանով ազգերի վէճերին վերջ տալը։ Այդ նպատակին են ծառայում № 15—18 օրինակները։

ՄԱՍ II

ԽԱՂԱՂԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Բ. Մեծ հայրենիքը

(Օրինակներ)

1. ՓԱՌՈՒՍ

Ծանօթ է ձեզ երկու քաղաքացիների խօսակցութիւնը Գէօթէի «Ֆաուստի» մէջ։

Մէկ քաղաքացին ասում է միւսին.

«Կիրակի և տօն օրերը իմ ամենամեծ զուարճութիւնն է պատերազմի և ճակատամարտի աղմուկի մասին զրուցատրելը, երբ հեռաւոր Թիւրքիայում ազգերն իրար կոտորում են։ Պատուհանում կանգնած իմ բաժակն եմ դատարկում և գետի հոսանքն ի վայր խայտաճամուկ նաւերն են սահում. յետոյ, երեկոյեան, դառնում եմ տուն գոհ սրտով և օրհնում խաղաղութիւնն ու խաղաղ ժամանակները»։

Միւս քաղաքացին պատասխանում է.

«Այո, պարոն դրացի, ես էլ նոյնն եմ անում. թող նրանք միմեանց գլուխ չարդեն, թող ամեն բան տակն ու վրայ լինի, միայն թէ ես տանը ճեամ պառաւիս մօտ»։

Այնպէս չէ՞, շատ զուարճալի մտածելակերպ է այդ։ Քանի որ պատերազմը դեռ իրանց երկիրը չէ աւերում, ողջունում են նրան քաղաքացիները՝ իբրև առօրեայ խօսակցութեան հաճելի փոփոխութիւն։ Բայց մենք բոլորովին ուրիշ կերպով ենք տրամադրուած. երբ լրագրում կարդում ենք աշխարհիս որևէ տեղում, օրինակ՝

Ամերիկայում պատահած մի մեծ հրդեհի կամ երկրաշարժի մասին, միմեանց ասում ենք. «Ի՜նչպիսի դըժբաղդութիւն, որչափ մարդ է գոհ գնացել»։

Թէ արդեօք բոլորս իսկապէս այդպէս ենք զգում վշտակցութիւնը, թէ՞ շատերս կեղծաւորութիւն ենք անում, չեմ կարող ասել ձեզ։ Բայց կան աւելի սարսափելի բաներ, որոնց նկատմամբ մենք ուղղակի ուրախացել ենք. մտաբերեցէք միայն բուրերի պատերազմը կամ ռուս-եապօնական պատերազմը։ Ո՞րչափ էինք ուրախանում, երբ բուրերը կամ եապօնացիք յաղթում էին. այդ միջոցին մենք չէինք մտածում մի ճակատամարտում ընկած 10,000 զինուորների սոսկալի մահուան և խեղճ վիրաւորուածների ցաւերի մասին։ Եթէ դուք իսկապէս անկեղծ էք, առ սակաւն պիտի խոստովանէք, որ ձեր սիրտն աւելի է ցաւում, երբ ձեր շնիկի թաթն է ցաւում, քան Մանջուրիայում խեղճ զինուորները մահուան տագնապի են մատնվում։

Ես դրա համար ձեզ չեմ էլ յանդիմանում. բնական օրէնք է, որ հեռու տեղ կատարուող պատահարները մեր զգացմունքների վրայ նոյն ազդեցութիւնը չեն ունենում, ինչ որ մօտիկ տեղինը։ Մեզ ինչ, եթէ լուսնի բնակիչներն իրար կոտորեն. Աֆրիկան և Ասիան թէև լուսնի տակ հեռու չեն, սակայն Թիւրքիայից աւելի հեռու են։ Եւ եթէ «Ֆաուստի» մէջ քաղաքացիները Թիւրքիայում եղած պատերազմին անտարբերութեամբ են վերաբերվում, թող մեր սրտի վրայ էլ շատ խորը չազդէ Աֆրիկայում կամ Ասիայում տեղի ունեցած պատերազմը։

Սակայն կանգ առնենք մի փոքր. իսկապէս այդպէս է։ Ո՞րն է աւելի հեռու, Թիւրքիան թէ Ասիան։ «Ասիան» կը պատասխանէք. իսկ ես կասեմ՝ «Թիւրքիան». դուք սկսում էք ծիծաղել։ Ի՜նչ կայ այդտեղ ծիծաղելու. ես խօսում եմ «Ֆաուստի» քաղաքացիների Թիւրքիայի և այժմեան Ասիայի մասին։ Դուք ասում էք՝ Թիւրքիան միշտ էլ նոյն հաւասար հեռաւորութեան վրայ է եղել. այդ ճիշտ չէ։ «Ֆաուստի» քաղաքացիներ-

ը որչափ ժամանակում կը հասնէին Թիւրքիա. առ սակաւն չորս շաբաթուայ ընթացքում. իսկ մենք 36 ժամում այնտեղ կը հասնենք։ Ո՞րչափ ժամանակ էր հարկաւոր այն ժամանակ, որ մի լուր Ասիայից մեզ հասնէր. ամենաքիչը երեք ամիս. իսկ այժմ հասնում է երեք ժամում։

Երկաթուղին ու հեռագիրը աշխարհը յեղաշրջեցին, և ինչ որ առաջ հեռու էր, այժմ շատ մօտ է թւում մեզ։ Եթէ Ասիայում պատերազմ է լինում, նրա լոյսի շերտերը մինչև մեզ են հասնում։ Պատերազմ մղող պետութիւնների մէջ կանգ է առնում արդիւնաբերութիւնը. զանազան ապրանքներ, որ նրանցից ենք ստանում, բնականաբար թանկանում են, և ընդհակառակը այնտեղի մարդիկը քիչ դրամ ունենալով՝ այլևս չեն գնում մեզնից այն ապրանքը, որ մենք էինք նրանց ծախում։ Կարող էք տեղեկանալ վաճառականներից, թէ որչափ վնասներ կրեցին նրանք ռուս-եապօնական պատերազմից։

Երբ մի ուրիշ երկրում ամեն բան տակն ու վրայ է լինում, մեր հայրենիքումն էլ հինը նոյնութեամբ չէ մնում։ «Պատերազմ» բառը մեզ համար այլ ևս հետաքրքրական նորութեան նշանակութիւն չունի, այլ երկիւղի։ Եւ մինթէ մենք «Ֆաուստի» քաղաքացիների ժամանակից առաջադիմած պէտք է լինենք միայն տեխնիկական դիւտերի նկատմամբ. մինթէ պատերազմը ցաւալի բան պէտք է համարենք միայն նրա համար, որովհետև մեր գրպանին է դիպչում։ Կամ գուցէ մեր բարուտև մեր գրպանին է դիպչում։ Թիւնն ու վշտակցութիւնն է աւելացել և լալիս ենք խեղճ զինուորների թշուառութիւնը, որոնք զոհերն են այն մտածելակերպի, որ վաղուց արդէն հնացած պէտք է լինէր։ Ինձ թւում է, որ հեռագրաթելերի հաղորդակցութիւնը առաջ մեր սրտերի հետ պէտք է կապակցուի. չէք ուզում այդ բանին օժանդակել։

2. ԱԶԳԱՅԻՆ ՏԸՐՈՒՆ

Շատ յաճախ լսում էք այն գանգատը, թէ նոր ժամանակը նկարչական ըմբռնումն չունի. իբրև օրինակ

բերվում է այն հանգամանքը, որ ազգային տարազները համարեա թէ միայն առանձնացած լեռնահովիտներումն են իրանց ողորմելի գոյութիւնը պահպանում, իսկ քաղաքներում ընդհակառակն ամեն տեղ միայն նորաձև զգեստներ են հագնում։ Ես էլ ափսոսում եմ այդ՝ գեղեցկութեան տեսակէտով, բայց ասացէք խնդրեմ, մի՞թէ բոլոր ազգերի և ցեղերի այս աներկբայելի հաւասարութիւնը աւելի խորը նշանակութիւն չունի։

Տարազը ազգի կամ ցեղի միակ յատկանիշը չէ. տարազի հետ անյայտանում են նաև հին սովորութիւնները, որ ամեն տեղ տարբեր են և որոնք թէև աչքի համար գրաւիչ են, սակայն իրրև նախապաշարումներ յաճախ դրանց դէմ կռիւ պէտք է մղել։ Նորաձև զգեստների ամեն տեղ մուտք գործելու նշանակութիւնն այն է, որ ազգերը միմեանցից օտար չեն ուզում լինել. նրանք զգում են, որ միայն չնչին տարբերութիւններով են միմեանցից բաժանուած։ Ընդհանուր հետաքրքրութիւնները սովորաբար նոյնանման զգեստով են արտայայտութիւն ստանում։ Նոյնանման զգեստը, համազգեստը, արդէն արտաքուստ ծանուցանում է զգեստ կրողին իբրև անդամ որոշ ընկերութեան կամ համախմբութեան, ինչպէս օրինակ զինուորական համազգեստը, մարմնամարզների հագուստը, որսորդներինը և բանուորի կապոյտ բլուզը։

Առածն ասում է. «Գլխարկը ձեռքիդ բռնած՝ կարող ես ամբողջ երկիրն անցնել». այս առածը փոփոխելով ասում եմ. «Ֆրակով և դրամով կարող ես ամբողջ աշխարհն անցնել»։ Ֆրակն ամեն տեղ համարվում է լաւագոյն հասարակութեան հագուստ և այդ ապացոյց է, որ ամեն տեղ էլ նոյն հետաքրքրութիւնները գոյութիւն պէտք է ունենան, որ արտայայտվում է նոյնանման զգեստ կրելով։ Ֆրակը թէ մի ուրիշ հագուստ նոյն է մնում Լօնդօնում և Կոպէնհագէնում. բերլինցի կինը նոյն գարնանային շրջազգեստն է կրում, նոյն գլխարկը ծածկում, ինչ որ պարիզցի կինը։ Բոլորն էլ մի համազգեստ են կրում՝ եւրոպականը կամ աւելի ճիշտ ասած՝ համաշխարհային համազգեստը։

3. ՀՈՐԻԶՈՆ

Ի՞նչ է հորիզոնը, Ֆրից, պատասխանիր։ Հորիզոնն այն շրջագիծն է, որ բոլորովին ազատ հարթութեան վրայ, որտեղ ոչ մի բան տեսարանը չէ սահմանափակում, կամ թէ բարձր ծովի վրայ, ցամաքի կամ ծովի մակերևոյթը սահմանագծում է դրա վրայ հանգչող երկնակամարից։ Պէտք է տարբերել երևութական հորիզոնը իսկական հորիզոնից. առաջինը... Լաւ, լաւ, դասդ գիտես։ Տարբերութիւնն այժմ ես կը բացատրեմ ձեզ. գիրքը մի կողմը դրէք. ինչ որ պիտի ասեմ, գրքումը չկայ։

Երևութական հորիզոնն այն է, ինչ որ Ֆրիցն ասաց։ Բացի այդ երևութական հորիզոնից, որ տեսնում ենք մեր աչքով, կայ և մի ուրիշը, որ մենք չենք տեսնում. դա մեր հոգեկան հորիզոնն է։ Հոգեկան հորիզոն ասելով հասկանում եմ այն շրջագիծը, որ կարող է մարդ պատկերացնել. այդ շրջագիծը ամփոփում է ոչ միայն ցամաքն ու ծովը, այլ մարդուս ամբողջ կեանքն ու ձգտումը, նրա ուսումնասիրութիւնն ու գործունէութիւնը, նրա լաւ և վատ մտքերը։ Շատ մարդկանց հոգեկան կամ իսկական հորիզոնը և երևութականը նոյնն է. որքան մարդիկ իրանց գիւղից դուրս չեն գնացել. ինչ որ չէ վերաբերում արտին և անասունին, նրա համար նրանք հետաքրքրութիւն չունեն։ Քաղաքներում նոյնպէս կան այնպիսի մարդիկ, որոնց մտաշրջանը հասարակ է տեսանելի հորիզոնին. տարաբախտաբար դրանց թիւը շատ է։ Յաճախ դրանց է յանձնուած լինում մերթ

համար. աւելի երկար ժամանակ, քան այժմ Պարիզից Կոստանդնուպոլիս հասնելը։ Իսկ դէպի Պարիզ ճանապարհորդելու համար աւելի շատ ժամանակ էր հարկաւոր, քան այժմ աշխարհիս շուրջը պտտելու համար։ Բայց շատերի համար ճանապարհորդելը բոլորովին անհնարին էր. հիւանդները, կանայք, երեխաները ճանապարհորդութեան դժուարութիւններն ու նեղութիւնները չէին կարող տանել։ Այդպիսի հանգամանքներում հասկանալի է, որ մարդկանց հոգեկան հորիզոնը չէր կարող ընդարձակուել։

Այսօր հէնց հիւանդներն են ճանապարհորդում, իրանց առողջութիւնը կրկին ձեռք բերելու համար. դրանք գնում են Ռիվիէրա կամ Եգիպտոս։ Մանուկներին ուղարկում ենք ծովափ, որպէս զի կարմիր թշեր ունենան։ Եւ կարմիր թշերով դրանք գաղափար են ստանում իսկական հորիզոնի մասին. նրանք տեսնում են ուրիշ մարդիկ, ուրիշ զգեստ, լսում են այլ լեզուներ։

Արդեօք ճանապարհորդելը կարևոր է՝ հոգեկան հորիզոնն ընտելացնելու համար։ Ո՛չ, դրա համար արդէն հոգում են այն բազմաթիւ պատկերազարդ և անպատկեր պարբերական թերթերը և գրքերը, որոնք պատմում են ուրիշ երկիրների և ուրիշ մարդկանց մասին։ Այդպիսի ընթերցանութեամբ զբաղուող մարդկանց հորիզոնը բնականաբար ընդարձակվում է և նրանց հետաքրքրութիւնն էլ բազմակողմանի է դառնում։

Իսկ նրանց համար, որոնք չեն ճանապարհորդում և ընթերցանութեան շնորհիւ չեն զարգանում, հարկաւ երևութական հորիզոնը մնում է իբրև իսկական։ Այդպէս էք կարծում, բայց տեսէք՝ մի առած ասում է. «եթէ լեռը մարգարէի մօտ չէ գալիս, մարգարէն է լեռան մօտ գալիս». իսկ եթէ մարգարէն չէ գալիս, գիտէք ինչ է պատահում. այն ժամանակ իրօք լեռն է մարգարէի մօտ գալիս։

Կարիք չկայ այսօր, որ գիւղացին իր գիւղից հեռանայ, բան կարդայ, բայց և այնպէս նա կարող է աշխարհիս մասին ու աշխարհի դրութեան վերաբերմամբ

ճիշտ մտապատկեր ունենալ. լուսանկարը ցոյց է տալիս նրան օտար երկիրների տեսարանները, կինեմատոգրաֆը բաց է անում նրա առաջ օտար ազգերի կեանքը ամենաճիշտ մանրամասնութեամբ։ Մի որևէ պատահար, հրդեհ, հանդիսաւոր գնացք, նաւի ծով իջեցնելը տեսանելի է նրա համար. նա ականատես վկայ է այն բանի, ինչ որ կատարուել է ուրիշ երկրամասում։

Սակայն միայն աչքով չէ մասնակցում նա այդ պատահարներին. ֆոնոգրաֆը նրա ականջին լսելի է դարձնում նշանաւոր երգչի երգածը, այո՛, նոյն իսկ վայրենի ժողովուրդների խօսած լեզուն կարող է լսել նա առանց իր սենեակից դուրս գալու։ Առաջ գիւղացին որքան էլ բարձր աղաղակէր, նրա ձայնը չէր հասնի հորիզոնի սահմանին, իսկ այսօր նա կարող ցածր ձայնով, տելեֆոնի միջոցով, 10 օրուայ ճանապարհ իրանից հեռու բնակուող մէկի հետ զրուցատրել։

Ժամանակները փոխուել են։ Երևութական հորիզոնը յաճախ աւելի մեծ է, քան իսկականը, որովհետև շատ մարդիկ դեռ ևս չեն կարողանում ըմբռնել հեռաւորութիւնը և այժմ էլ առաջուայ պէս շարունակում են իրանց զանգակատնային քաղաքականութիւնը։ Բայց նրանք, որոնք ըմբռնում են այդ, օտար երկրում իրանց այլ ևս օտար չեն զգում։ Իսկ որտեղ մարդ իրան օտար չէ զգում, նա իր տանն է. իսկ որտեղ մարդ իր տանն է, այնտեղ է նրա ծննդավայրը, հայրենիքը։ Եւ երբ մարդ ամեն տեղ, ամբողջ երկրի վրայ, բարեկամներ ունի, երբ մարդ ամեն տեղ իրան իր տանն է զգում, այն ժամանակ ամբողջ մարդկութիւնը նրա ծննդավայրն է։ Այդ բանը կարելի է զգալ առանց աթոռից վեր կենալու։

4. ՄԵԳՈՒՈՂՇՆԵՐ

Գիտէք, ինչ է մեգուղան. երևակայեցէք ամեն տեսակ գոյներով փայլփլող սապնապղպջակներ, որ լողում են ովկիանում. հէնց որ ուզէք դրանց ձեռք տալ, իս-

կոյն կը քայքայուին, կը լուծուին և անձև ոչնչութիւն կը դառնան։ Սակայն այդ սապնապղպջակները իսկական կենդանիներ են։ Նրանց թափանցիկ մարմինը գնդականման է և շնչող թոքի նման սեղմուելով ու լայնանալով շարժվում է ջրի մէջ։ Զանգակի լեզուակի տեղը, կամարից դէպի ցած իսկապէս կախուած է նրանց ստամոքսը՝ ուտող բերանով։ Մի քանի մեդուզաներ հասնում են աչքի ընկնող մեծութեան, մինչև մի մետր տրամագծով և մօտ 20 կիլոգրամ կշռով. միևնոյն ժամանակ նրանց թափանցիկ, ապակենման մարմինը բաղկացած է միայն 3—6 տոկոս կենդանական գոյացութիւնից, մնացածը ծովաջուր է։

Տարօրինակ կենդանիներ են սրանք, այնպէս չէ՞։ Բայց կան աւելի զարմանալիները. դրանք կոչվում են սիփոնոփորներ. դրանց կարելի է համեմատել լողացող ծաղկաստուկների հետ, որոնց սիրուն թերթիկները, ծաղիկներն ու պտուղները պատրաստուած են զանազան գոյն ապակուց։ Դրանց մարմնի այդ բոլոր մասերը վերին աստիճանի զգայուն և շարժուն են։ Ամենաթեթև հպումից փառահեղ բացուած տունկը կծկուելով դառնում է մի փոքրիկ գունդ։ Ճշգրիտ ուսումնասիրութիւնը ցոյց է տուել, որ իւրաքանչիւր սիփոնոփորի բունը բաղկացած է բազմաթիւ մեդուզանման անհատներից, և այդ մեդուզաներից ամեն մէկը յարմարուելով կեանքի որոշ գործունէութեան՝ առանձին ձև է ստացել։ Ոմանք գործում են իբրև կրաւորական, օդալի լողապղպջակներ, միւսներն իբրև ներգործական, մկանային լողազանգակներ. երրորդ խումբը, սիփոնները, կերակուր են ընդունում միայն և մարսում. չորրորդ խմբակցութիւնը, պալիփոնները էապէս զգայուն զգայարանների նշանակութիւն ունեն. երկու ուրիշ խմբեր, արուներ և էգեր, բացառապէս զբաղուած են միայն սերունդ առաջացնելով։ Այսպիսով սիփոնոփորի բնի տարբեր անհատները աշխատանքի բաժանման և աշխատանքի զանազանակերպ փոփոխութեան շնորհիւ տարբեր կերպով

են զարգացել և բոլորը միասին գործակցում են ամբողջ բնի միասնական կեանքին։

Ինչպէս որ սիփոնոփորի առանձին առանձին անհատները ամբողջութեան բարիքի համար են աշխատում, այնպէս էլ միասնաբար գործում են այն միլիոնաւոր բջիջները, որոնցից կառուցվում է մարդու մարմինը՝ մկանների, մորթու, զգայարանների, արիւնի, ուղեղի և այլն ձևով, որպէսզի գլուխ բերեն «մարդ» կոչուած բջիջների պետութեան կեանքը։ Եւ մարդիկ միասին կազմում են աւելի բարձր օրգանիզմներ, «պետութիւններ»։ Իսկ պետութիւնները միասին ինչ են կազմում. մի՞թէ կարծում էք, թէ զուգորդութեան օրէնքը, որ, ինչպէս տեսնում էք, ամենաստորին կարգի կենդանիների կեանքում արդէն երևան է գալիս, կանգ է առնում պետութիւնների նկատմամբ։ Ո՛չ, զուգորդութեան օրէնքը շարունակվում է. Բաւարիան, Սաքսոնիան, Պրուսիան, Վիտտենբէրգը և միւս բոլոր պետութիւնները միասին կազմում են գերմանական կայսրութիւնը. զանազան կանտոնները կազմում են շվեյցարական հասարակապետութիւնը։ Սրանք էլ օրգանիզմներ են, որտեղ բոլոր մասերը միասին ամբողջութեան բարիքի համար են գործակցում։ Գուցէ զուգորդութիւնը դարձեալ շարունակվում է, գուցէ կայ և մի աւելի բարձր օրգանիզմ, որ իր մէջ միացնում է ստորինները։ Ամերիկայում գոյութիւն ունի Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Պետութիւնը. ինչո՞ւ Եւրոպայի պետութիւնները չեն կարող նոյնպէս միանալով կազմել մի միացեալ պետութիւն։ Մենք գիտենք, որ կան երկպետեան դաշնակցութիւն, եռապետական դաշնակցութիւն. ինչո՞ւ չի կարող լինել և տասնապետական դաշնակցութիւն։ Եւ ինչո՞ւ պէտք է միայն մի երկրամասի պետութիւնները մի օրգանիզմ կարողանան կազմել. գուցէ գոյութիւն ունի մի աւելի բարձր օրգանիզմ, «մարդկութիւն» կոչուածը, որ ամփոփում է իր մէջ բոլոր երկրամասերը միահամուռ գործունէութեամբ։ Այդ օրգանիզմը գոյութիւն ունի իրապէս, և ովքեր բաց աչքեր ունեն, նրանք

տեսնում են այն հազարաւոր նեարդերը, որ անցնում են ամբողջ օրգանիզմի միջով հեռագրաթելերի կերպարանքով. նրանք տեսնում են, թէ ինչպէս աշխարհիս ամենահեռաւոր մասերում մարդիկ չարչարվում են հակոտնեաների համար, նրանց կերակուր և հագուստ հայթայթելու համար. նրանք տեսնում են օրգանիզմի արեան շրջանառութիւնը երկաթուղիների և շոգենաւերի կերպարանքով։

Սակայն կան հարկաւ մարդիկ, որոնք կոյր են և չեն տեսնում այդ բոլորը. նրանք ուզում են միմեանց վրայ հրացան արձակել և միմեանց կոտորել փոխադարձաբար։ Տարաբախտաբար այդպիսիները դեռ ևս մեծամասնութիւն են կազմում և այդ պատճառով «մարդ» օրգանիզմը այնպէս փարթամ չէ բարգաւաճում, ինչպէս որ պէտք էր։ Երանի թէ այդ մարդիկը մեղուզաններից բան սովորէին։

5. ՆԱՄԱԿԱՆԻՇՆԵՐԻ ԱԼԲՈՄԸ

Ֆրից, այդ ինչ սիրուն նամականիշների ալբոմ ունես։ Նոյն իսկ Կոստա-Ռիկայի, Եաղօնիայի և մինչև անգամ Սիամի նամականիշներ ունես. իսկապէս որ հոյակապ բան է։ Կարելի՞ բան է, ժողովածուիդ մէջ արդէն 800 նամականիշ ունես. իսկ դու, Ռուդոլֆ, դու մինչև անգամ 1200 հատ ունես։ Ձեզանից ուրիշն էլ է նամականիշներ ժողովում։ Բոլորը ժողովում են, բացի երեքից. նրանք էլ երևի ուրիշ բանով են հետաքրքրվում։

Այժմ մտածեցէք, երեխաներ, թէ ձեզ նման որքան դպրոցական աշակերտներ կան աշխարհիս երեսին. եթէ դրանց տասներորդ մասը միայն նամականիշներ ժողովէ, միլիոններ դուրս կը գան. յետոյ հաշուեցէք և այն չափահասներին, որոնք նոյնպէս նամականիշներ են ժողովում, և բոլոր նրանց, որոնք նամականիշ չեն ժողովում, այլ բոլոր ծրարները զամբիւղն են գցում, կը տեսնէք թէ որքան շատ միլիոններ կը լինեն։

Սակայն ինչ նշանակութիւն ունեն ժողովուած և չժողովուած նամականիշները. դրանք բոլորը կպցուած են լինում գրուած նամակներին. իսկ նամակներն ինչ նշանակութիւն ունեն։ Այդ ապացոյց է, որ նոյն իսկ ամենահեռաւոր երկիրներում մարդիկ կան, որոնք հետաքրքրվում են մեզնով. հակառակ դէպքում նրանք նամակներ չէին գրի մեզ։

Նամակներում ինչ է գրուած լինում. մեր ազգականները, որոնք շատ տարիներ առաջ գնացել են Բրազիլիա կամ մի այլ տեղ են գաղթել, գրում են մեզ, թէ ինչպէս են իրանք, բարևում են պառաւ մայրիկին, գուցէ և նրա համար դրամ են ուղարկում։ Բայց այդպիսի նամակները շատ քիչ են լինում. միւսներում գրուած է լինում. «Ուղարկում ենք ձեզ այսօր այսչափ ցորեն, կամ նաւթ, կամ այսչափ զոյգ կօշիկ, կամ այսչափ կիլօ չամիչ, կամ այսչափ տակառ գինի»։ Կան և ուրիշ տեսակ նամակներ. Հ.-ի աստղաբաշխը գրում է Բ.-ի աստղաբաշխին. «Ես այսօր մի նոր աստղ յայտնագործեցի». կամ թէ մի ուրիշ հետազօտող գրում է. «Ինձ աջողուեց ամբողջ Տիբէտի միջով ճանապարհորդել. նշանաւոր գիւտեր եմ արել»։ Նամականիշներ կպցնում են նաև լրագիրներին, որոնք տարածվում են ամբողջ աշխարհում։ Ի՞նչ է նշանակում այդ։ Այդ նշանակում է, որ մեզ մօտ մարդիկ կան, որոնք շատ հետաքրքրվում են, թէ ինչ է տեղի ունենում Հեռաւոր Արևելքում, Արևմուտքում, Հարաւում և Հիւսիսում. եթէ այդպէս չլիներ, այնտեղի լրագիրները չէին կարդայ. և ընդհակառակը Արևելքում, Արևմուտքում, Հարաւում և Հիւսիսում ուրիշներն էլ ուզում են իմանալ, թէ ինչ է կատարվում մեզ մօտ։

Կարճ. նամակներն ասում են, որ երկրիս բնակիչների մէջ յարաբերութիւններ կան. ոմանք ապրանք են ուղարկում, ոմանք դրամ, ուրիշները մտքեր են փոխանակում, բարեկամութիւններ հաստատում։ Տարէ-ցտարի նամակների թիւն աւելանում է. այդ նշանակում է, որ տարբեր պետութիւնների միմեանց հետ ունեցած

յարաբերութիւնները հետզհետէ մտերմանում են։

Մտածեցէք, թէ ինչ կը լինի, եթէ մէկը կոպիտ բռունցքով այդ մտերիմ յարաբերութիւնները խանգարէ։ Արդեօք ամենքին էլ վնաս չի՞ հասնի՝ թէ ապրանք և թէ դրամ ուղարկողներին. իսկ եթէ ողջոյնը չհասնի պառաւ մայրիկին, նա լաց չի՞ լինի։ Եթէ մէկը ոտքը կոխում է մեր մազոլին, տրամադրութիւններս վատանում է, և շատ անգամ աշխատել չենք կարողանում այլ ևս. մեր ամբողջ օրգանիզմը ցաւակցում է։ Նոյնն է պատահում և «մարդկութիւն» օրգանիզմին, երբ մէկը նրա ոտքը կոխում է։ Այդ պատճառով պէտք է զգուշանանք, որ այդ չպատահի։ Բնականաբար «ոտք կոխելը» պատկերաւոր արտայայտութիւն է, սակայն իսկապէս նոյնն է լինում՝ թէ անհատի և թէ պետութեան նկատմամբ։ Եթէ մէկը կոխում է անհատի ոտքը, վերջինս սաստիկ հայհոյում է առաջինին ու հետը կռւում։ Ճիշտ նոյն կերպ են վարվում և պետութիւնները։ Անհատների կռուից ոմ է վնասուողը. երկուսն էլ։ Երկուսն էլ ապրիւնլուայ են լինում ու վնասում իրանց գործին։ Պետութիւններն էլ նոյնն են անում. մարդիկ կոտորում են միմեանց փոխադարձաբար ու իրանց վնասում։

Մի՞թէ կարծում էք, որ մեռածներն էլ կարող են նամակներ գրել և ապրանք գնել. այդպիսի պատերազմը միանգամից պակասեցնում է նամակների թիւը. պատերազմը այն կոպիտ բռունցքն է, որի մասին վերը յիշեցի։

Գուցէ բոլորովին չպէտք է կռուել, երբ մարդու ոտք են կոխում։ Եթէ ես պատահմամբ մէկի ոտքը կոխում եմ, ասում եմ. «Ներողութիւն, ակամայ եղաւ». իսկ միւսը պատասխանում է. «Ոչինչ, ոտքիս ցաւն անցաւ»։ Այդպիսով մեր բարեկամութիւնը չէ վնասվում և կարիք չի լինում մեր գործը թողնելու։ Եթէ պետութիւններն էլ սովորեն նոյնպէս «պարդոն» ասել, իրանց օգուտը և ամբողջ մարդկութեան օգուտը կը լինի։

6. ՏԵՍՆ ՍԸՆՏԻՄՈՎ ԸՆԹԵՐՀԻՍ ԿԷՍԻ ՇՈՒՐՋԸ

Այդ անկարելի է, կասէք դուք. շատ լաւ կարելի է. տասն սանտիմով դեռ աւելի հեռու կարելի է գնալ. հարկաւ ոչ ես, այլ ձեր ողջոյնը, որ մի պօստկարտով (բաց նամակ) կուղարկէք ձեր հակոտնեաներին։ Այդ բանն այժմ ձեզ ինքն ըստ ինքեան հասկանալի է թւում. բայց հեռու չեն այն ժամանակները, երբ իւրաքանչիւր պետութիւն իր սեպհական գներն ունէր նշանակած՝ նամակ ուղարկելու համար։ Դեռ 60 տարի առաջ գոյութիւն ունէին 1500—2000 տարբեր գներ նամակներ ուղարկելու համար, որոնք գործադրութեան համար անթիւ դժուարութիւններ էին յարուցանում։ Իմ նպատակը չէ պօստի գործառնութեան զարգացումը պատմել ձեզ. ուզում եմ ասել միայն, որ համաշխարհային պօստային ընկերութեան հիմնուելուց յետոյ միայն կարելի է լինում էժան ու միատեսակ գնով՝ ամբողջ երկրագնդի հետ նամակագրութիւն ունենալ։ Ի՞նչ է ապացուցանում համաշխարհային պօստային ընկերութեան հիմնադրութիւնը. այն, որ պետութիւնները տեսան, թէ իրանք համանման կերպով շահագրգռուած են պօստային հաղորդակցութեան արագ ու էժան կարգադրութեանը։ Եւ այս շահագրգռութիւնը առաջ մղեց ստեղծելու միաբան կազմակերպութիւնը։

Այդպիսի կազմակերպութեան հանդիպում ենք նաև այլ ոլորտներում։ Առաջ իւրաքանչիւր երկիր, իւրաքանչիւր քաղաք ունէր իր սեպհական չափն ու կշիռը. մեծաչափ դաշինքով պետութիւնների մեծագոյն մասի համար չափի և կշռի միութիւնը հաստատուեց։ Ուրեմն երկրին միաբան շահագրգռութիւնները առաջ բերին միաբան կարգ ու կանոն։ Ինչու երկաթուղու երկաթգծերի անջրպետը համարեա բոլոր պետութիւնների մէջ աւասար է. ինչու պետութիւնների մեծ մասում երկաթուղու գնացքները որոշ և նոյնանման ժամանակներում են ճանապարհ ընկնում. ինչու մի երկրի երկաթուղի-

ների գնացքները յարմարեցվում են դրացի սահմանակից պետութեան երկաթուղու գնացքների ժամանակին։ Որովհետև բոլորը շահագրգռուած են գործը միաբան կանոնաւորելու։ Այսպիսի միջազգային համաձայնութիւններ կը գտնենք ամեն տեսակ շրջաններում. գոյութիւն ունեն դաշնագրութիւններ՝ ծովային նաւագնացութիւնը կանոնաւորելու, ծովային ազդանշանների, շաքարի գործարանական պատրաստութեան որոշ քանակի, բանուորների պաշտպանութեան, ստրկութիւնը ճնշելու, աղջիկներ վաճառելու, ժանտախտից, խոլերայից պաշտպանուելու, մտաւոր սեպհականութեան պաշտպանութեան, պետութիւնների միջև ծագած վէճերը դատելու համար միջազգային դատարան հիմնելու և այլ բազմաթիւ նպատակներով։

Բայց այս բոլոր պաշտօնական համաձայնութիւնները շատ չնչին են այն մասնաւոր անձանց թուի հանդէպ, որոնք տարբեր երկիրներում ապրելով համաձայնութեան են գալիս միաբան գործելու։ Միջազգային կօնգրէսների թիւն այնքան շատացել է, որ անկարելի է թուել. համարեա ամեն օր կարդում ենք մի այդպիսի համաժողովի մասին։ Ժողովվում են միասին բոլոր երկիրներից բժիշկներ, լրագրողներ, աստղաբաշխներ և այլն, նոյն իսկ մասնաւոր շրջաններն ունեն միջազգային կօնգրէսներ. կան համաժողովներ ներքին բժշկութեան, լարինգօլօգիայի, մենամարտութիւնը վերացնելու, խաղաղասիրական և այլն։ Կան միջազգային ձիարշաւի մրցութիւններ, միջազգային ցուցահանդէսներ։ Քաղցկեղի բժշկութիւնը, լեղուների, լուսնի, հնութեան ճնացորդների, ծովերի խորութեան և այլն ուսումնասիրութիւնը բոլոր ազգերի գիտնականների միաբան աշխատանքն է կազմում։ Գիտութեան, առևտրի, աշխատանքի, արուեստի, բարեկեցութեան խնամքի և այլն. միայն շատ քիչ ճիւղեր կան, որտեղ որոշեալ ճիւղի ներկայացուցիչները զանազան երկիրներում՝ միաբան աշխատելու և ընդհանուր նպատակին աւելի լաւ հասնելու նպատակով՝ միմեանց հետ կապակցուած չլինեն։

Ի՞նչ են ապացուցանում այս բոլոր միաբան աշխատանքները, այս միջազգային համաձայնութիւնները, ինստիտուտներն ու օրէնքները։ Այդ ապացուցանում է, որ «հայրենիք» արտայայտութիւնը բոլոր քաղաքացիների համար ընդհանուր դարձած շահագրգռութեան գաղափարի համար արդէն շատ նեղ է։ Մեր շահագրգռութիւններն այսօր ամփոփում են ամբողջ մարդկութիւնը. և եթէ առաջ մէկին հայրենասէր էին անուանում, որ իր հայրենիքի բարիքն էր ցանկանում, այսօր այդ անունը տալիս ենք նրան, ով մարդկութեան համար է աշխատում և ձգտում։ Մարդկութեան բարիքը պարտկում է իր մէջ նաև հայրենիքի բարիքը։

Ով այս չէ հասկանում և մարդկութեան համար աշխատողներին հայրենասէր չէ համարում, ինքը վատ հայրենասէր է. որովհետև նա յետ է կասեցնում զարգացումը, նա ուզում է իր հայրենիքը զրկել միջազգայնութեան առաւելութիւններից, նա չէ կամենում իր նամակը տասն սանտիմով Աւստրալիա ուղարկել։

7. ՍԱՀՄԱՆԱԶՈՂԸ

Արդեօք ձեզանից մէկն ու մէկը եղել է այնտեղ, որտեղ դրացի պետութիւնն է սկսվում. ով եղել է, նա այնտեղ տեսած կը լինի մի ձող մեր ազգային գոյներով ներկուած, որի վրայ գրուած է՝ «Ս. թագաւորութիւն», և հաւանականաբար նրա մօտ էլ մի ուրիշ ձող՝ ուրիշ գոյներով ներկուած, որի վրայ գրուած է «Բ. թագաւորութիւն» կամ «Ա կայսրութիւն»։ Ի՞նչ են նշանակում այդ փայտի ձողերը. դրանք ցոյց են տալիս երկրի սահմանները. իսկ սահմաններն ի՞նչ են նշանակում. այդ արդէն ամեն մի մանուկ գիտէ։ Այն ճանապարհորդները, որոնք ուղղակի գնացքներով շատ յարմար գնում են, օրինակ՝ Պարիզից Բերլին, այդտեղ պէտք է կէս գիշերին, անձրևի և ձիւնի միջոցին գնացքից դուրս գան և ասեն, որ իրանց պայուսակներում մաքս վճարելու ապրանք չունեն։ Եթէ նրանք ամենաազնիւ մար-

դիկն էլ լինեն, միևնոյն է, նրանց խօսքին չեն հաւատայ և կը հրամայեն պայուսակները բանալ. կարգին դարսուած իրեղէններդ տակն ու վրայ կանեն. և վայ քեզ՝ եթէ ճանապարհի համար մի փոքրիկ կտոր շօկոլադ ես վերցրել հետդ. ստիպուած կը լինես դրա արժէքի տասնապատիկը վճարել իբրև մաքս։ Ապա թէ իրաւունք կունենաս նորից մտնելու ուղղակի գնացքը։ Ում պատահել է մի անգամ այդ բախտին արժանանալ, իր ամբողջ կեանքում չի մոռանայ, թէ ինչ է սահմանը։

Այժմ մեզ յայտնի է, որ սահմանի վրայ արտասահմանից մեր ստացած ապրանքի համար մաքս պէտք է վճարենք։ Մաքսը մի տեսակ տուգանք է մեզ համար, որ արտասահմանից բան ենք բերել տալիս. չէ՞ որ այնտեղ, սահմանից այն կողմը, բոլորովին ուրիշ է, քան մեր հայրենիքում։ Այնտեղ կայ բայխստագ, իսկ մեզ մօտ բայխսրատ. ամբողջ պետական սիստեմն ուրիշ է։ Զինուորների համազգեստները մերիններից բոլորովին տարբերվում են. մի՞թէ այդքանը բաւական չէ սահմանապահ զինուորներ կանգնեցնելու համար։

Բայց դրա փոխարէն էլ ուրիշ բաներ կան, որոնք թէ մեզ մօտ և թէ արտասահմանում նոյնն են. օրինակ՝ արևը լոյս է տալիս բոլոր երկիրներում, լուսինն ու աստղերը երևում են նաև արտասահմանում, և սահմանի այն կողմն էլ ճիշտ նոյնութեամբ են արտերը հնձում, ինչպէս մեզ մօտ։ Պետութեան սահմանն աւելի մեծ նշանակութիւն ունի, քան տարբեր համազգեստները։ Ապա թէ ոչ սահմանաձողեր կանգնեցնելն անմիտ բան կը լինէր։

Ի՞նչն է երկու ազգերի տարբերութեան ամենաէական նշանը. լեզուն. դուցէ այդպէս չէ։ Գերմանիայում գերմանացիներն են, Աւստրիայում նոյնպէս գերմանացիներ. այո՛. նոյն իսկ Ռուսաստանում կան գերմանական գաւառներ։ Աւստրիայում կան իտալացիներ, Շվեյցարիայում իտալական կանտոններ։ Ուրեմն սահմանաձողը չի կարող ազգերը միմեանցից բաժանել։ Ընդհակառակը. Շվեյցարիայում գերմաներէն խօսողները

իրանց անուանում են շվեյցարացի, ճիշտ այնպէս, ինչպէս և ֆրանսերէն ու իտալերէն խօսողները։ Աւստրիայում ապրում են նոյն իսկ 14 տարբեր ազգեր և բոլորն էլ իրանց անուանում են աւստրիացի։

Այդ դէպքում սահմանաձողը դուցէ տարբեր կրօնների ազդանիշն է։ Ո՛չ։ Տարերային պատահարները կանգ են առնում սահմանի վրայ։ Ո՛չ։ Վարակիչ հիւանդութիւնների առաջը կարող են կտրել սահմանները։ Ուրեմն իսկապէս սահմանները նրա համար են, որ մեզ համար պէտքական ապրանքների թանկ դին վճարենք։ Իսկ մաքսը բարիքները կարող են սահմանն անցնել. ի հարկէ. այդ պատճառով էլ ասում են, որ մաքսերը մաքսից ազատ են։ Մենք հոգեկան զուարճութիւն ենք զգում կարդալով Տօլստոյի պատմուածքները, Շեքսպիրի, Կալդերօնի, Դանտէի, Մոլիէրի բանաստեղծական պատմութիւնները, ինչպէս որ մեր հարազատ բանաստեղծներինը։ Բեթհովէնի երաժշտութիւնը լսելիս երբէք նրա ազգայնութեան մասին չենք մտածել։ Մեր պատկերասրահներում ժողովում ենք ինչպէս Ռաֆայելի, նոյնպէս և Ռուբէնսի և Հոլբայնի նկարները։ Արուեստի ցուցահանդէսներում տեսնում ենք բոլոր ազգերի ներկայացուցիչներին։ Մեր զարգացումը ստանում ենք օտար ազգերի բանաստեղծների գրուածքներով, ուրախանում ենք նրանց արուեստի ստեղծագործութիւններով։ Բանաստեղծութիւնն ու արուեստը կանգ չեն առնում ոչ մի երկրի սահմանների վրայ. այդ պարզ է։

Այժմ անուններ թուեմ ձեզ. Սպինոզա, Դարվին, Հեկել. դուք չէք թողնում, որ խօսքս շարունակեմ և ասում էք. «Արդէն գիտենք, թէ ինչ էք ուզում ասել. գիտութիւնը միջազգային է»։ Ես արտասանում եմ՝ Ստեֆենսոն, Բունչէն, Էդիսոն. դուք կրկին ընդհատում էք ինձ և ասում. «Չկայ ազգային տեխնիկա»։ Ազգերն օգտվում են բոլոր միւս ազգերի առաջադիմութիւնից ամեն շրջաններում։

Ուրեմն էլ ի՞նչն է զուտ ազգային. ոչ այն՝ ինչ որ կարդում ենք, ոչ այն՝ ինչ որ սովորում ենք, նոյն իսկ

ոչ այն՝ ինչ որ ուտում ենք։ Ամեն տեղ կը գտնէք անգլիական բոսբիֆ, Վիէննայի շնիցել։ Ապա էլ ինչու համար են սահմանները. կասեմ ձեզ. «Որովհետև մեր հին, հայրենի նախապաշարումներից չենք կարողանում ձեռք վերցնել։ Այս նախապաշարումները դեռ այնքան զօրեղ են, և «սահմանաձող» կոչուած փայտի կտորը դեռ այնպիսի ազդեցութիւն կարող է ունենալ, որ նրա այս և այն կողմը մարդիկ ժողովուելով՝ կարող են միմեանց կոտորել։ Եւ միմեանց կոտորում են՝ առանց ի նկատի ունենալու, որ քրիստոնեայ են կոչվում. կաթոլիկները՝ կաթոլիկների դէմ, բողոքականները՝ բողոքականների դէմ, չնայելով որ միևնոյն լեզուով են խօսում և միևնոյն ազգին են պատկանում։ Օրինակ՝ եթէ Գերմանիայի ու Ռուսաստանի միջև պատերազմ լինի, լեհացիները պէտք է կռուեն լեհացիների դէմ. Աւստրիայի և Իտալիայի միջև եթէ պատերազմ լինի, իտալացիները պէտք է կռուեն իտալացիների դէմ։ Եւ ինչու համար. որովհետև սահմանաձողերը տարբեր գոյներով են ներկուած»։

Ենթադրեցէք, որ թշնամու բանակումն են գտնվում Գէօթէն, Էդիսոնը, Դարվինը, Սօֆոկլէսը, Արխիմիդէսը, Գուտէնբերգը և չգիտեմ էլ ովքեր։ Մենք իրրև լաւ հրացանաձիգներ պէտք է դրանց բոլորին էլ սպանէինք. այդ դէպքում ինչ ծառայութիւն մատուցած կը լինէինք մեր հայրենիքին՝ արդեօք հանդիսանալով նրանց շարունակելու բանաստեղծելը, մտածելը, գիւտեր անելը։ Դուք կասէք, թէ ծիծաղելի է այդ. բայց ծիծաղելի չէ։ Մենք բոլորս, որ պարտաւորուած ենք պատերազմ գնալու, վարձու զինուորներ չենք, որոնց կոչումը պատերազմելն է. ոչ, մենք բոլորս ունենք մեր քաղաքացիական կոչումը։ Եւ եթէ մենք վերոյիշեալ մեծ մարդկանց նշանակութիւնը չունենք, կարող է ձեզնից մէկն ասել, թէ արդեօք պատերազմի դաշտում ընկածների մէջ չկայրն այնպիսի մարդիկ, որոնք ժամանակին կարող կը լինէին այդ հուչակաւոր մարդկանցից գերազանցել։ Գուցէ դրանց մէջ կար մի նոր Մօցարտ կամ Գալիլէյ. յամենայն դէպս դրանք բոլորը օրինաւոր մարդիկ էին

և մարդկութեանը աւելի լաւ կերպով կարող էին ծառայութիւն մատուցանել, քան իրանց մահով։

Սակայն ինչ են ուսուցանում մեզ այս բոլոր դիտողութիւնները։ Այն, որ մեր հայրենիքը անկարելի է, որ սահմանի վրայ վերջանայ. մեր շահերը, մտածմունքն ու զգացմունքները տեսանելի թելերով են կապակցուած ուրիշ ազգերի շահերի, մտածմունքի և զգացմունքների հետ։ Մենք գնահատում ենք ուրիշ ազգերի լաւ կողմերը և օգտվում դրանցից. միթէ այդ պատճառով մենք վատ հայրենասէրներ ենք։ Ո՛չ, մենք սիրում ենք և յարգում մեր ծննդավայրը, բայց միևնոյն ժամանակ ընդունում ենք, որ մեր հայրենիքը, որտեղ մենք մեզ մեր տանն ենք զգում, հեռու, մեր երկրի սահմանից շատ հեռու է հանում։

Ես անկասկած վատ հայր կը լինէի, եթէ իմ հարազատ զաւակին աւելի չսիրէի, քան մէկ ուրիշ երեխայի. բայց այդ չի խանգարի, որ ուրիշ երեխաներին էլ սիրեմ և նրանց լաւ կողմերը գնահատեմ։ Եթէ ես ընտանիքի լաւ հայր եմ, այդ արգելք չի լինի ինձ, որ լաւ հայրենասէր լինեմ։ Եւ որովհետև ես պատահաբար լաւ սաքսօնացի կամ վիւրտեմբերգցի եմ, այդ չէ արգելում ինձ, որ նոյնպէս լաւ գերմանացի լինեմ։ Նմանապէս և իմ լաւ գերմանացի լինելը չէ արգելում ինձ լաւ եւրոպացի կամ լաւ աշխարհաքաղաքացի լինելու։ Ես կարող եմ ուրիշ ազգերի լաւ կողմերը գնահատել և շնորհակալութեամբ խոստովանել, ինչ որ պարտական եմ նրանց. դրանով իմ հայրենասիրութիւնը չի նսեմանայ։ Հայրենասիրութիւնն ու միջազգայնութիւնը իրար չեն բացառում, այլ ընդհակառակը դրանք ուղիղ յարաբերութեան մէջ են գտնվում միմեանց հետ։ Միայն լաւ աշխարհաքաղաքացին է ճշմարիտ հայրենասէր, որովհետև նա ամբողջ աշխարհի ամենալաւն է ցանկանում իր հայրենիքի համար։

Մի սահմանաձող ուշադրութեամբ դիտելով՝ կարելի է շատ բան սովորել։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ II ՄԱՍԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Քաղաքակիրթ պետութիւնների միջև սերտ յարաբերութիւններ առաջացնելու նպատակով քարոզուած խաղաղասիրական ձգտումներին ներկայումս դեռ չար մեկնութիւններ են տալիս. մէկ կողմից խաղաղասէրների երեսօքն են տալիս, որ նրանք հայրենասէր չեն, միւս կողմից նրանց համարում են երազողներ, որ անիրագործելի նպատակների են ձգտում։ Բայց մի բան մոռացվում է. այդ այն է, որ քաղաքակիրթ պետութիւնների միջև այլ ևս կարիք չկայ սերտ յարաբերութիւններ առաջացնելու, պարզապէս այն պատճառով, որ այդ յարաբերութիւններն արդէն գոյութիւն ունեն։ Հեռագիրները, բոլոր ժամանակակից գիւտերը հիմնովին փոխել են աշխարհի պատկերը։ Այլ ևս չկայ ոչ մի պետութիւն, որ ուրիշ պետութիւնից արդիւնք չստանայ, որ ուրիշ պետութեան առաջադիմութիւնից չօգտուի, որի համար ուրիշ պետութեան վնասը օգուտ լինի։ Այստեղից հետևում է, որ ով ձգտում է իր երկրի երջանկութեանը, չի կարող այդ իրագործել՝ առանց իր աշխատանքը ամբողջ մարդկութեան նուիրելու։ Այդ պատճառով էլ խաղաղասէրներն աւելի լաւ հայրենասէրներ են, քան նրանք, որոնցից յանդիմանութիւն են ստանում, թէ հայրենիք չեն ընդունում։ Երազողներ էլ չեն նրանք. նրանք ձգտում են արդէն գոյութիւն ունեցող կազմակերպութիւնների օրինականացման, որոնք կարիք ունեն միջազգային կարգաւորման։

Այս մասի օրինակները աւելի լաւ են պարզաբանում նախընթաց հատուածների կէտերը և միևնոյն ժամանակ ցոյց են տալիս, թէ ինչպէս հայրենիքի և մարդկութեան նկատմամբ մեր ունեցած պարտաւորութիւնները շաղկապվում են և փոխադարձաբար միմեանց լրացնում։

ՄԱՍ III

ԽԱՂԱՂԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

(Օրինակներ)

1. ՄԱՐԴՈՒԿՆԵՐԻ ՎԱԶԸ

Նիւրնբէրգ քաղաքի գլխաւոր հրապարակի վրայ, ամեն օր, կէսօրուայ ժամին, դուք կը տեսնէք հարիւրաւոր օտարականներ հաւաքուած, որոնք աչքները յառած դէպի վեր՝ նայում են Ֆրաուէնկիրխէ կոչուած եկեղեցուն։ Դրանք բոլորը սպասում են մարդուկների վազին. այդ եկեղեցին ունի մի արուեստակերտ ժամացոյց. 12 ժամը խփելիս բացվում են փոքրիկ դռնակները, դուրս են գալիս փայտեայ չորս մարդուկներ, գլուխները փոքր ինչ խոնարհեցնում են և մի ուրիշ դռնակի միջով կրկին անյայտանում. այս է մարդուկների վազը։ Եւ երբ մարդուկներն անյայտանում են, անյայտանում են նաև օտարականները. բայց հազիւ թէ դրանցից մէկը ճաշի սեղանին նստելով՝ մտածէ այն արուեստագէտի մասին, որ յօրինել է այդ ինքնուրոյն մեքենականութիւնը, կամ թէ հետաքրքրուի այդ մեքենայի անիւների գործով։

Ես միշտ մտաբերում եմ այդ մարդուկների վազը, երբ ի նկատի եմ ունենում, թէ ինչպէս և ինչ ենք սովորում ընդհանուր պատմութիւնից։ Դուք երևի կը զարմանաք ասածներիս վրայ. դուք շատ լաւ սովորել էք ընդհանուր պատմութեան դասերը, կարող էք գերմանական կայսրների անունները անգիր ասել սկզբից մինչև վերջը և ընդհակառակը. ճիշտ գիտէք՝ թէ երբ է

սկսուել երկրորդ պիւնիկեան պատերազմը և երբ վերջացել. գիտէք թէ ամեն մի ճակատամարտին քանի հեծելազօր և քանի հետիոտ զինուոր է մասնակցել։ Դուք գիտէք անգլիական թագաւորների կառավարութեան ժամանակները. գիտէք թէ օրուայ որ ժամին սկսուեց մի քաղաքի պաշարումը. գիտէք թէ ճակատամարտից առաջ զօրապետը զիշերը քնել է թէ անքուն անց կացրել. գիտէք նոյնպէս՝ թէ Մաքսիմիլիան կայսրը երիտասարդ ժամանակ խարտեաշ թէ սև մազեր ունէր։ Այս բոլորը գիտէք, բայց ինչ չգիտէք—ընդհանուր պատմութիւնը կամ աւելի լաւ է ասել՝ մարդկութեան պատմութիւնը։ Ինչ որ դուք սովորում էք, ինչ որ գիտէք, այդ առանձին անհատների պատմութիւնն է, բայց ոչ մարդկութեան պատմութիւնը։

Աւելի պարզեմ միտքս. յաճախ լսած կը լինէք թատրոնի մասին՝ թէ նրա ասխատակները աշխարհի նշանակութիւն ունեն։ Այժմ մտածեցէք. եթէ այդ ճիշտ է, եթէ թատրոնը աշխարհիս պատկերն է ներկայացնում, այդ դէպքում թատրոնում պէտք է կարողանանք ընդհանուր պատմութիւն սովորել։

Հարկաւ, կարող ենք սովորել. Շէքսպիրի թագաւորների ողբերգութիւններից աւելի լաւ ենք սովորում Անգլիայի պատմութիւնը, քան գրքերից։ «Օրլէանի կոյսը», «Դեսդիմոն Բերլիխինգէն» և նման պիէսները հարկաւ պատմութեան մի հատուածն են մեր աչքի առաջ կենդանացնում, բայց միթէ միայն այդպիսի պիէսաներ են ներկայացվում։ Ո՛չ. պիէսները մեծ մասամբ մեզ ցոյց են տալիս փոքրիկ յարաբերութիւններ կամ հանգամանքներ՝ իրանց հոգսերով, ուրախութիւններով և վշտերով, իրանց ընդհարումներով, մեր աչքի առաջն են բերում սոցիալական կռիւներ, մեզ ստիպում են պատասխանել այնպիսի պրոբլէմների, որոնցից առհասարակ մենք երկիւղով փախուստ ենք տալիս։ Այդ բոլորի մասին սակայն ընդհանուր պատմութիւնը ոչինչ չէ պատմում մեզ կամ թէ շատ քիչ։

Եւ այն բոլորը, որ թատրոնը մեզ չէ պատմում,

բայց խաղի ժամանակ երևան է գալիս բեմի վրայ, ազդում է մեզ վրայ. մեքենաները, հագուստները, ելէքտրական լոյսը։ Այդ բոլորը միթէ ինքն իրան կամ յանկարծ է առաջացել, արդեօք դարաւոր աստիճանական զարգացումը չէ՞ ստեղծագործել. այդ բոլորի մասին պատմութիւնը ոչինչ չէ ասում մեզ։ Վերցնենք ելէքտրական լուսաւորութիւնը. չեմ ուզում հարցնել, թէ ով է գտել այդ. դա կը լինէր դարձեալ մի անհատ մարդու պատմութիւն. ես միայն հարցնում եմ ձեզ, թէ ինչ օգուտ կարող էր տալ մեզ ելէքտրական լոյսի գիւտը, եթէ մեզ յայտնի չլինէր ապակին և նրա պատրաստելու եղանակը։ Եւ առհասարակ ինչ կը լինէինք մենք առանց ապակու։ Ինչի՞ նման կը լինէին մեր տները առանց ապակեայ լուսամուտների, ինչ կը լինէին մեր տեսաբանական (օպտիկական) գործիքները։ Ի՞նչ կօգնէր մեզ տպագրութեան գիւտը, եթէ առաջուց սովորած չլինէինք թուղթ շինելը։ Ի՞նչ կը լինէինք առանց թղթի։

Մտաբերեցէք մարդուկների վազը. ինչ կը լինէր մեր դրութիւնը առանց ժամացոյցի. երկաթուղու գնացքները կարող էին բանել, եթէ ճիշտ ժամացոյցներ չունենայինք։ Այժմ ամեն օր կարդում ենք ղեկավարուող օդանաւերի մասին. ինչու՞ առաջ էլ չէին կարողանում օդանաւ շինել. որովհետև մեզ յայտնի չէր ալումինիումը և դրա գործածութիւնը։ Տեսէք, սրանք առանձին առանձին օրինակներ են, բայց բաւարար չափով ցոյց են տալիս ձեզ, թէ ինչպէս պիտի լինէր մարդկութեան պատմութիւնը։ Գիւտերի պատմութիւնը, առանձին առանձին գիւտերի և յայտնագործութիւնների ազդեցութիւնը մարդու սրտի և մտքի վրայ, գիւտերի առանձին կերտուածը, դրանց անհրաժեշտ կապակցութիւնը. ահա այս պիտի լինի մարդկութեան իսկական պատմութիւնը։ Երկաթուղիներն ու հեռագիրները բոլոր մարդկանց կեանքն աւելի են փոփոխել, քան ամենամեծ յեղափոխութիւնը։ Ճակատամարտները, կայսրները, թագաւորներն և ուրիշ շատ բաներ, որ դուք սովորում էք, պատմութեան ճիշտ պատկերը չեն տալիս ձեզ. դրանք

միայն այն մարդուկներն են, որոնք մի որոշ ժամանակ կամիջոցում սկսում են վազել, որովհետև ժամացոյցն այդպէս է կերտուած։ Եթէ ուզում էք իսկապէս պատմութիւնից մի բան գիտենալ, պէտք է դիտէք ձեր ժամացոյցը։

2. ԹԱՆԳԱՐԱՆ

Եղել էք մի անգամ թանգարանում. ինչքան բան էք տեսել այնտեղ՝ պատկերներ, անցեալ ժամանակների արուեստի արտադրութիւններ։ Այնտեղ կարող էիք տեսնել, թէ մեր նախնիները ինչպէս են ընակուել, ինչպէս հագնուել, նրանց զանազան սովորութիւնները, այն ծանր սպառազինութիւնները, որոնցով պատերազմում էին իրանց թշնամիների հետ, չախմախի հրացանները և փայտի թնդանօթները։

Թանգարանում շրջելիս երբէք ձեր մտքովը չէ՞ անցել, թէ մենք ինչ պէտք է դնենք այսպիսի մի թանգարանում, որպէս զի ապագայ դարերում մարդիկ դաղափար կազմեն մեր կեանքի մասին։ Մենք աւելի շատ բան ունենք մի այդպիսի թանգարանում ցուցադրելու, քան մեր նախնիները։ Մտածեցէք այն բոլոր տեխնիկական գիւտերի, որ մեր հպարտութիւնն են կազմում, և ամենից առաջ մեր զէնքերի մասին։ Մենք ունենք հրաշէններ, որոնց գնդակները երկու կիլոմետրից աւելի հեռաւորութիւնից կարող են ծակել մարդու գանգը, ունենք ինքնալից հրացաններ, որոնցով կարող ենք մի րոպէում 70 գնդակ արձակել։ Հապա մեր բոմբերը, տորպէդոնները, զրահանաւերը. այո, մենք չախմախի հրացանից ուրիշ աւելի լաւ բաներ կարող ենք ցուցադրել թանգարանում։

Սակայն ինչ կը մտածեն մեր յաջորդ սերունդները, երբ մեր բոլոր առաջադիմութիւնների հետ միասին տեսնեն և այն բոլոր միջոցները, որոնք մեծ ջանքերով կերտուածը կրկին պէտք է ոչնչացնեն։ Նրանք կը մտածեն մեր մասին. «Ելէքտրականութիւնը, կրակը, ջուրը

կարողացել են իրանց ծառայեցնել, իսկ ամենահեշտը չեն կարողացել, որ իրանց չսպանեն։ Այդ բանում նրանք գերազանցել են հնագոյն ժամանակներից. այն բոլորը, ինչ որ յայտնագործել են, նոյն իսկ դեկավարուող օդանաւը, պատերազմական նպատակների են ծառայեցրել։ Ի՜նչ անմիտ մարդիկ են եղել. զէնքերի տեղը թանգարանն է, միմիայն թանգարանը»։

3. ՆԱԽՆԻ ԳԵՐՄԱՆՆԵՐԸ

Ձեզ յայտնի Կեսարի գրքի մէջ կարդացել էք, թէ նախնի գերմաններն ինչ մեծ արժէք էին տալիս երիտասարդների ռազմահմտութեանը։ Այդ հայեացքն ունէին ոչ միայն նախնի գերմանները, այլ և հնագոյն դարերի համարեա բոլոր ազգերը։ Նոյն իսկ միջին դարերում պատերազմողի կոչումն էր միայն, որ իսկական ազատ մարդը կարող էր կրել. միւս կոչումները մեծ կամ փոքր չափի անհրաժեշտ չարիքներ էին։ Եւ դեռ այսօր էլ երիտասարդների զինուորական կրթութիւնը առաւելութիւն ունի միւսներից, որովհետև դրա համար հոգում է պետութիւնը և ստիպում ամենքին՝ այդպիսի կրթութիւն ստանալու, մինչդեռ առհասարակ պետութիւնը առանձին անհատների վիճակի մասին շատ քիչ, կամ բոլորովին չէ հոգում։

Սակայն ոչ թէ միայն զինուորական կրթութիւնն է նախապատիւ համարվում, այլ և զինուորական դասակարգին անպայման նախամեծարութիւն է տրվում հասարակութեան մէջ։ 22 տարեկան երիտասարդը քիչ յարգանք կը գտնի հասարակութեան մէջ, բայց հէնց որ նա լեյտենանտի համազգեստ կրի, իսկոյն պարոն լեյտենանտին բոլոր մարդիկը յարգանքով կը դիմաւորեն, և նա դեղեցիկների առիւծը կը դառնայ։ Դոնապանը մեծարանքով կողջունի նրան, ծառան վազելով կը գայ նրան ծառայելու և երիտասարդ աղջիկներն իրանց բաղդաւոր կը համարեն, եթէ նա ողորմածաբար նրանց հետ խօսի։ Այն յարգանքը, որ մէկ ուրիշը երկար տարիների ընթաց-

քում չի կարող ձեռք բերել, նա արդէն ունի իր համազգեստի շնորհիւ։ Արիութեան, քաջութեան, աներկիւղութեան և աղամարդուն յատուկ բոլոր առաքինութիւնների համար կարիք չունի նա ապացոյցներ տալու. այդ բոլորը վերագրվում են նրան, որովհետև նա սպայ է։ Եւ այդ պատճառով տեսնում էք, թէ ինչու ամեն մէկը ձգտում է, որ կարողանայ իր այցետոմսի վրայ տպել տալ «պահեստի լեյտընանտ», թէ ինչու նոյն իսկ այն մարդիկը, որ կեանքի մէջ որոշ դիրք ունեն, օրինակ պարլամենտի պատգամաւորները, բարձրատիճան ծառայողները, արդիւնաբերողները և այլն, հանդիսաւոր առիթներով երբ պալատ են գնում, իրանց լեյտընանտի համազգեստն են հագնում։ Ամենամեծ ծառայութիւնը մարդկանց առաջ պալատի դռները չէ բաց անում, սակայն այդ անում է սպայի համազգեստը։

Ես չեմ նախանձում բոլոր զինուորականներին— հասարակ զինուորից սկսած մինչև ֆէլդմարշալը—իրանց նախամեծար դիրքի և վայելած արտօնութիւնների համար, բայց այնու ամենայնիւ հարցնում եմ, թէ այդ բացառիկ դիրքը այսօր էլ արդարացի է, ինչպէս նախկին ժամանակներում։ Զինուորականների ամենամեծ քաջութիւնն է միայն — եթէ մի կողմը թողնենք նրանց ոչնչացնող գործունէութիւնը՝ մարդկանց կոտորելը, գիւղեր հրդեհելը, դաշտերն ամայացնելը — արդէն գոյութիւն ունեցածը կործանումից պաշտպանելը։ Թշնամուց պաշտպանուելը հարկաւ կարևոր է, սակայն կեանքի պահանջն աւելի է, քան պահապան լինելը։ Դեռ պէտք է ստեղծագործել, արդիւնաւորել և ապա ստեղծածը պաշտպանել։ Այս երեքից ոչն է ամենադժուարը՝ ստեղծագործելը, պահպանելը, թէ՞ ոչնչացնելը։ Ո՞վ է արժանի պատուի, արդեօք նա, ով սքանչելի գետաթումբ կամ կամուրջ է շինում մեծ գետի վրայ, թէ՞ նա, ում աջողվում է թումբն ու կամուրջը յօդս ցնդեցնել։ Անկասկած առաջինը. երբեմն աշխատանք է թափվում մինչև յատակագիծ կազմելը և երբեմն տոկունութիւն և ջանք է պահանջվում կառուցումն

աւարտելու համար։ Միւս կողմից՝ ով աւելի պատուի է արժանի, նա, որ Կեօլնի տաճարն է կառուցել, թէ՞ այն պահապան-ոստիկանը, որ պահպանում է տաճարը։

Զինուորականութիւնը պահապան-ոստիկանի դերն ունի. նա հոգում է, որ մենք մեր արհեստները, մեր գիտութիւնը անվտանգ գործադրենք, և այս տեսակէտից նա կարևոր է։ Մենք գնահատում ենք պարտաճանաչ ոստիկանին, բայց այդ պատճառով չենք կամենում, որ բոլորս էլ ոստիկաններ լինենք, եթէ ոչ ամենքս էլ պաշտպանողներ կը լինէինք և պաշտպանելու ոչ ոք չէր մնայ։ Բայց այժմ, երբ համարեա ամենքն էլ զինուորական ծառայութիւն պէտք է գնան, մօտաւորապէս այդ դրութիւնն է տիրում։ Պաշտպանութիւնն այնքան է թանգացել, որ ազգերը պատերազմական ծախսերի բեռի տակ անքում են, պաշտպանուելու համար պարտքերի մէջ են խրվում, այնպէս որ իսկապէս առանց պաշտպանութեան եթէ մնային, աւելի լաւ կը լինէր։

Այժմ ժամանակներն ուրիշ են, քան այն միջոցին, երբ գերմանները գալլերի հետ էին կռուում, երբ ասպետները միմեանց վրայ էին յարձակվում։ Մարդու արժանաւորութիւնը այսօր կռուի մէջ չէ երևում, այլ կեանքի։ Մարդու արժէքը գնահատվում է՝ իր կոչման, ուսումնասիրութեան և աշխարհի ու մարդկութեան համար ծառայելու շնորհիւ։ Ի միջի այլոց նա կարող է և զինուոր լինել, որպէս զի հայրենիքին վտանգ սպառնացած միջոցին օգնութեան հասնի, բայց նա զինուորի համազգեստը չպէտք է ցանկանայ այն նպատակով, որպէս զի իրանից ակնածեն։

4. ԱՐԻՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է արիութիւնը. արիութիւնն է սեպհական եսի աներկիւղ զոհողութիւնը։ Ո՞վ ունի արիութիւն. զինուորը։ Այս պատասխանն այնքան սովորական է դարձել, որ շատերի կարծիքով՝ եթէ պատերազմները

դադարէին գոյութիւն ունենալուց, երկչոտութիւնը կը տիրէր աշխարհին։

Արդեօք ճի՞շտ է, որ երբ մէկը զինուորի համազգեստ է հագնում, իսկոյն հերոս է դառնում։ Ո՛չ. շատ զինուորներ արի են, բայց շատերն էլ ոչ։ Եթէ մէկն իրան արի է համարում, այդ դեռ ևս ապացոյց չէ, որ նա արի է։ Ես ճանաչում եմ շատ սպաներ, որոնք արիութիւնն ու սրամտութիւնը վարձու են առել և երկիւղից ատամնաբուժի դռնից յետ են դարձել։ Բայց և այնպէս նոյն սպաները կարող էին պատերազմում արիութիւն ցոյց տալ. պատճառն այն է, որ պատերազմի դաշտը ազդում է արբեցութեան պէս, որ գնդակների տարափը ուղեղի բոլոր նորմալ գործունէութիւնը ցրում է։

Բացի դրանից՝ զինուորի ներկիւղութիւնը դեռ ևս ապացոյց չէ, թէ նա իսկական արիութիւն ունի. կան շատ մարդիկ, որ բաւականին մեծ նեարդեր ունեն, բայց դիւրագրգիռ երևակայութիւն չունենալով՝ մարմնին սպառնացող վտանգների դէմ շատ անտարբեր են, ինչպէս օրինակ վայրենի ժողովուրդների մեծ մասը։

Եւ յետոյ՝ ո՞վ կարող է զինուորի վրայ վերահսկողութիւն ունենալ, թէ արդեօք արիութիւն ունի՞ նա։ Յետ դառնալու հնարաւորութիւն չունի նա և եթէ ուզենայ փախչել՝ իր հայրենակիցներից կը գնդակահարուի։

Եւ առհասարակ արի լինելու համար անպատճառ զինուոր չպէտք է լինել. հրդեհաշէջը հարկաւ նոյնպէս արի է, բայց կարիք չկայ, որ այդ բանն ինքն ասէ. առանց նրա ասելու էլ հաւատում ենք։ Պատերազմներն ամեն օր չեն տեղի ունենում, սակայն մեծ քաղաքներում օրական մի հրդեհը սովորական է։ Իսկ բժիշկներն ու հիւանդապահ կանայք, որ ամեն օր կեանքից զրկուելու վտանգի մէջ են, երբ վարակիչ հիւանդութիւն ունեցողներին են օգնութեան հասնում, մի՞թէ զինուորներից աւելի քիչ արիութիւն են ցոյց տալիս։ Եւ եթէ նոյն իսկ կեանքին սպառնացող անմիջական վտանգ չկայ, մի՞թէ անոգիւտ արիութիւն չէ՝ մի կարծիք պաշտպանելը՝ հակառակ ամբողջ աշխարհի ծաղր ու ծանակի։ Մտաբերեցէք Գալիլէյին, Ջիորդանո Բրունոյին և բոլոր մարտիրոսներին։ Մի՞թէ արիութիւն չպէտք է ունենալ խաղաղասիրական գաղափարի պաշտպան լինելու, հակազինուորականութեան և պետութիւնների դաշնակցութեան մասին խօսելու համար՝ առանց երկիւղ կրելու, որ պէտք է ծաղր ու ծանակի ենթարկուի իբրև անգործնական իդէալիստ։ Մի՞թէ արիութիւն չէր, երբ անգլիական խաղաղասէրները բուրերի պատերազմի ժամանակ, Լինչի օրէնքով դատուելու վտանգի տակ, ժողովներ էին անում և այդ պատերազմի դէմ խօսում։

Սակայն խնդիրն այն չէ, թէ մէկն արիութիւն ունի, այլ՝ այն՝ թէ իր արիութիւնը ի՞նչ բանի համար է գործադրում։ Բարձր գլէտչէրների վրայ մագլցող տուրիստը նոյնպէս արիութիւն է ցոյց տալիս, բայց այդ արիութիւնը սովորաբար ոչ ոքի օգուտ չէ բերում։ Հրդեհաշէջի, բժշկի արիութիւնը օգուտ է տալիս քաղաքացուն, զինուորի արիութիւնը՝ հայրենիքին։

Այո՛, նա օգուտ է տալիս. սակայն տհագին տարբերութիւն կայ գթութեան քոյրերի և զինուորի արիութեան միջև։ Զինուորն իրան զոհում է՝ ուրիշներին սպանելու համար, իսկ բժիշկը, հրդեհաշէջը, գթութեան քոյրը զոհվում են՝ ուրիշներին փրկելու համար։ Այն ակունքը, որից բղխում է գթութեան քոյրերի արիութիւնը, մարդասիրութիւնն է, որ կրկին սէր է յարուցանում։ Արդեօք կարո՞ղ է մէկը առել իր կեանքը փրկող բժշկին կամ իրան խնամող գթութեան քրոջը։ Ո՛չ, նա երախտագիտութեամբ կը սիրէ նրան, և այս կերպով կը բազմանայ մարդասիրութեան ընդհանուր գանձը, որից մենք քաջալերվում ենք, երբ ուզում ենք մեզ ուրիշների համար զոհել։

Այն աղբիւրը, որից բղխում է զինուորի արիութիւնը, մարդատեցութեան և նախանձի պղտոր աղբիւրն է։ Զինուորի արիութիւնը ոչնչացնում է սէրը և վրէժխնդրութիւն է առաջ բերում։ Ատելութիւնը ատելութիւն է առաջացնում։ Զինուորի արիութիւնը մարդ-

կանց վայրենի կենդանու աստիճանին է հասցնում, որ նոյնպէս արիութիւն է ցոյց տալիս, երբ ուրիշների հետ է կռուում կամ մարդու արձակած գնդակի դէմ է համարձակվում պայքարել։

Աշխարհիս ամենամեծ հերոսական գործերը սիրուց են առաջ եկել. և ով գիտէ, թէ աւելի մեծ արիութիւն չէր լինի աշխարհիս երեսին, եթէ աւելի մեծ սէր լինէր. և դուցէ հէնց պատերազմներն են, որ արգելք են լինում ամենամեծ և տեսական սիրոյ տարածմանը։ Հէնց պատերազմներն են, որ այնքան սէր են սպանում։

Զար գործի անէծքն է, որ շարունակ չարը պէտք է ծնուի։

5. ԱՆՎԻՐԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԵՐԳՈՒՄ

Երբ ասպետը անվրիժառութեան երդումն էր անում, այլ ևս իրաւունք չէր համարում ոչ մի թշնամական գործողութիւն սկսել նրա դէմ, որին երդուել էր։ Այն ժամանակ ասպետական երդումը համարվում էր բաւարար դրաւական՝ խոստումը իրագործելու համար։ Այն ժամանակները ուրիշ պաշտպանութիւն էլ չկար. իւրաքանչիւրն իր կամեցածի պէս էր իրաւունք բանեցնում։ Սպանութիւնն ու աւազակութիւնը սովորական էին։ Այս դրութեանը վերջ դրուեց Մաքսիմիլիան Ա.-ի «յաւիտենական խաղաղութեան» հաստատութեամբ։ Անվրիժառութեան երդման տեղը բռնեց պետական դատարանը և դրանով հիմք դրուեց պետութիւնների ներքին վէճերը արդարադատութեան ճանապարհով վերջացնելու։

Այսօր մենք ինքն ըստ ինքեան հասկանալի ենք համարում, որ դատարաններ ունենք, որտեղ ոչ միայն աւազակութիւնը, սպանութիւնը և գողութիւնն են պատժվում, այլ նոյն իսկ իրաւունքի և ստացուածքի վերաբերեալ ամենափոքր վէճերը այնպիսի վճիռ են ստանում, որ դատարանով առաջացած դրութիւնը այլ ևս չի կարող երերուել։

Ինչու է դատարանի վճիռն անքակտելի։ Մենք հօ չենք էլ երդվում, ինչպէս ասպետներն էին անում. սակայն մենք քաղաքացիներ ենք մի պետութեան, որի հիմնաքարերն են արդարութիւնն և կարգ ու կանոնը։ Բոլոր պետական-քաղաքացիների միաբանութիւնը հոգում է, որ արդարութիւնը ճանաչուի։

Ի՞նչ դրութիւն է, երբ պետութիւնները միմեանց դէմ պատերազմ են մղում. ճիշտ նոյնը, ինչպէս որ անվրիժառութեան երդման ժամանակները, երբ ամեն մէկն ինքն էր որոշում և հաստատում իր իրաւունքը։ Տարբերութիւնն այն է, որ այժմ միմեանց դէմ են դուրս գալիս ոչ թէ անհատները, այլ պետութիւնները։ Սակայն ի՞նչ տարբերութիւն կայ «իր համար անձամբ իրաւունք որոշելու» և «դատարանի վճռի» միջև։ Դատարանը դատավճիռ է կայացնում օրէնքի հիման վրայ, և իրաւունք է ստանում նա, ով արդար է։ Սակայն ասպետական կռիւների ժամանակ յաղթող էր հանդիսանում ոչ թէ իրաւունքը, այլ աւելի ուժեղը, որ այնուհետև կարող էր աւելի թոյլին խաղաղութեան պայմանները թելադրել։ Միևնոյնն է պետութիւնների նկատմամբ։ Մի՞թէ հռօվմայեցիներն իրաւունք ունէին ամբողջ աշխարհի կէսն իրանց հպատակեցնելու և ապա հպատակ ազգերին տարկացնելու։ Ո՛չ. նրանք միայն ուժեղներ էին։ Իրաւունք ունէր Նապոլէօնը Եւրոպայում գահակալ իշխաններին գահազուրկ անելու և իր ընտրութեամբ նոր իշխաններ կարգելու։

Պետութիւնների վէճերից առաջացած իրաւունքն այժմ դեռ ևս ամենաուժեղ զօրամասերի կողմն է։ Իսկ եթէ ազգերն իսկապէս ուզում են իրանց իրաւունքը պաշտպանել, նրանք էլ նոյնը պէտք է անեն, ինչպէս անում են անհատ քաղաքացիները։ Նրանք պէտք է իրանց վէճերը միջազգային դատարանին յանձնեն։ Այն ժամանակ բոլոր քաղաքակիրթ ազգերի միաբանութիւնը կը հակի, որ դատարանի վճիռն իրագործուի։

Մի այսպիսի միջազգային դատարանի սկիզբն արդէն դրուած է. Հաագում արդէն գոյութիւն ունի մի-

ջազգային վէճերի դատարանը։ Պետութիւնները կարող են այնտեղ իրանց վէճերի որոշումը սատնալ, եթէ կամենան։ Բայց որպէս զի նրանք ստիպուած լինեն այդ անելու, կարևոր է ստեղծել պետութիւնների մի դաշնակցութիւն, ընդունել միջազգային օրէնքներ, որոնցով կապուած լինէին դատաւորները՝ դատավճիռ արձակելիս։ Պետութիւնները պէտք է անվրիժառութեան երդումն անէին, ինչպէս մի ժամանակ անում էին ասպետները։ Ի՞նչ է պետութիւնը. բոլոր պետական-քաղաքացիների միաբանութիւնը։ Եթէ ասպետի երդումը սուրբ էր, աւելի սուրբ պէտք է լինի պետութեան երդումը։ Եւ եթէ պետութիւնները երդուեն՝ միմեանց դէմ ոչինչ չձեռնարկելու, իրանց վէճերը դատարանին յանձնելու, այն ժամանակ ճշմարիտ որ կիրականանայ «յաւիտենական խաղաղութիւնը»։

Եւ ինչու պետութիւններն այդ երդումը չանեն. ժողովրդական անկէտայով մի անգամ իմացէք, թէ արդեօք մեծամասնութիւնը ցանկալի է համարում պատերազմը։ Պատասխանը նախապէս յայտնի է ձեզ. ինչու ուրեմն չհարցնել, թէ արդեօք անվրիժառութեան երդումն պէտք է անուի թէ ոչ։

6. ԽԱՉԱԿՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Ինչումն է կայանում խաչակրաց պատերազմների նշանակութիւնը. այդ պատերազմների նշանակալից հանգամանքն այն էր, որ տարբեր ազգեր՝ ասպանացիները, ֆրանսիացիները, գերմանացիները, անգլիացիները, աւստրիացիները մոռանալով իրանց փոքր ու մեծ վէճերը՝ միացան մի ընդհանուր իդէալի համար կռուելու։ Կարող է պատահել, որ դրանցից շատերի համար դէպի արկածներն ունեցած զուարճութիւնն էր մղիչ տարրը կազմում, սակայն մեծամասնութեան ցանկութիւնն էր՝ Փրկչի գերեզմանը անհաւատների ձեռքից խլել։

1900 թ. Չինաստանում բռնկեց բօքսերների ապստամբութիւնը, որի մասին լսած կը լինէք։ Բօքսերները սպանեցին գերմանական դեսպանին և պաշարեցին միւս դեսպանների բնակարանները։ Անգլիան, Ֆրանսիան Իտալիան, Եապօնիան, Աւստրիան, Ռուսաստանը և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Պետութիւնները իրանց զօրքերը դրին գերմանական հրամանատարութեան ներքոյ՝ իրանց հպատակներին պաշտպանելու և կարգ ու կանոնը Չինաստանում վերականգնելու համար։

Մի այդպիսի բան էլ եղաւ Կրետէում. այդտեղ էլ միացան եւրոպական պետութիւնները՝ ընդհանուր նպատակի համար և իրանց զօրքերն իջեցրին Կրետէ կղզին։

Սրանք էլ խաչակրաց պատերազմներ չէին. այդտեղ էլ կռիւ էր մղվում անհաւատների դէմ։ Սակայն զօրքերը քրիստոնէութեան անունով չգնացին պատերազմ. դրանց մէջ կային տարբեր դաւանութեան պատկանող քրիստոնեաներ, հրէաներ, մահմեդականներ, բուդդայականներ։ Դրանց «քաղաքակիրթ աշխարհ» նշանաբանը շատ աւելի զօրեղ էր, քան քրիստոնէութիւնը, քաղաքակիրթ աշխարհի դէմ էին մեղանչել անհաւատները. անհաւատներ էին դրանք, որովհետև չէին հաւատում այն կարգ ու կանոնի միութեանը, որով շղթայուած են արդէն պետութիւնները։ Սակայն այդ կարգ ու կանոնը գոյութիւն ունի և այդ պատճառով անարդար վարուողները պատժուեցին ճիշտ այնպէս, ինչպէս որ անհատ մարդասպանը պետական կարգ ու կանոնի շնորհիւ դատաստանից չի կարող ազատուել։

Մթթէ մի անգամ եղածը չի կարող միշտ լինել։ Յաճախ պատահում է, որ մի պետութիւն անարդար է վարվում և այդ անարդարութեան պատճառով մէկ ուրիշի դէմ է պատերազմ մղում. արդեօք այսպիսի պատերազմը նոյնպէս կարգ ու կանոնի դէմ մեղանչել չէ՞ նշանակում։ Ինչու պետութիւնները մի անգամ ընդմիշտ չեն որոշում, թէ ով որ մեզնից անարդարութիւն գործի, յանուն արդարադատութեան բոլորիս էլ կը պատժուի. այդ դէպքում բոլորս միասին պատերազմ կը մղենք նրա դէմ։ Այդ դէպքում այդ պատերազմը ուրիշ բնոյթ կունենայ, այդ կը լինի պատժի գործադրութիւն,

ճիշտ այնպէս, ինչպէս որ ժանդարմը յանուն արդարութեան պետական կարգ ու կանոնը պահպանելու համար՝ յաճախ զէնքի է դիմում։ Ամեն մի այլ պատերազմ խաղաղութեան խախտումն է։ Նոյն իսկ խաչակրաց պատերազմները, որչափ որ ազնիւ երևայ նրանց նպատակը, խաղաղութեան խախտումն էին։ Այդ պատերազմները ողջունելի են իբրև պետութիւնների միացում՝ մի ընդհանուր գործի համար, սակայն դատապարտելի են՝ իբրև պատճառ բազմաթիւ այլ պատերազմների։ Կարիք չկայ, որ պետութիւններն իրանց զօրքերն արձակեն, սակայն զօրքերի բնոյթը պէտք է ուրիշ լինի. նրանք ոչ թէ խաղաղութիւնը խախտող, կարգ ու կանոնը խանգարող պէտք է լինեն, այլ՝ կարգ ու կանոնի պաշտպաններ, ժանդարմներ։

Քրիստոնէութիւնը կարողացաւ ազգերը միացնել. մինթէ նոյն քրիստոնէութիւնը չպէտք է կարողանար նոյն ազգերը միացնել այնպէս, որ միմեանց դէմ չկռուեն և միմիայն ընդհանուր թշնամու, այսինքն անարդարութեան դէմ պատերազմեն, որտեղ էլ որ երևան գայ այդ անարդարութիւնը։

7. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Դուք յաճախ լսում էք, որ ծնողները ողբում են, որովհետև իրանց զաւակները զինուոր պէտք է գնան, և անիծում են ընդհանուր զինուորագրութիւնը։ Արդէն բոլոր ասածներիս հիման վրայ դուք երևի կը սպասէք, որ ես էլ համաձայն լինեմ հայրերի անէծքին. սակայն մեծապէս սխալվում էք. ոչ ոք ինձնից աւելի չէ դատապարտում այդ հայրերին, որովհետև ընդհանուր զինուորագրութիւնը ես համարում եմ մեր ձեռք բերած սոցիալական յաղթանակներից ամենամեծը։ Ինձ համար դա աւելի մեծ արժէք ունի, քան սահմանադրութիւնները, ժողովրդի ներկայացուցչութիւնները, որովհետև դրանով իրագործուել է պետութեան բոլոր բնակիչների իսկական հաւասարութիւնը։

Մտածեցէք. նախկին ժամանակներում միայն աղքատներն էին պարտական զէնք կրելու, մինչդեռ հարուստները կարող էին դրամով ազատուել. այժմ ամեն մէկը մեզնից՝ աղքատ թէ հարուստ, եթէ ծառայութեան մար անպէտք չհամարուի, պէտք է զինուոր դառնայ և լուրջ դէպքում իր կեանքը զոհաբերէ հայրենիքին։ Ըմբռնում էք դուք այս կազմակերպութեան ամբողջ նշանակութիւնը։ Անհատը զոհաբերում է այն, ինչ որ ամենից թանկն է իրան համար, իր կեանքը, ընդհանուրի բարիքի համար։ Հայրերն ու մայրերը արտասուալի աչքերով են իրանց զաւակներին պատերազմ ուղարկում, սակայն չեն ըմբոստանում, որովհետև նրանք հասկանում են ընդհանուրի բարիքի համար զոհաբերելու անհրաժեշտութիւնը։

Անիրաւացի չէր ասածս, թէ ընդհանուր զինուորագրութիւնը մեր ձեռք բերած սոցիալական յաղթանակներից ամենամեծն է. այդ կազմակերպութիւնը չէ ընդունում՝ ոչ դասակարգի, ոչ ստացուածքի և ոչ էլ կրօնի արտօնութիւն։ Թէ արիստոկրատը, բանուորը, քաղաքացին, գիւղացին և թէ հրէան, քրիստոնեան բոլորն էլ հաւասարապէս ենթարկվում են զինուորագրութեան. այդ պատճառով այդ կազմակերպութիւնը չպէտք է վերացուի, ինչպէս որ առաջարկում են ոմանք, որպէս զի պատերազմական ծանր բեռը թեթևանայ։ Ընդհակառակը, աւելի պէտք է զարգանայ այդ կազմակերպութիւնը։

Ի՞նչ եմ ուզում ասել դրանով. արդեօք նոյնը, ինչ որ ասում են զինուորական շրջանները, թէ զինուորագրուողների թիւը, զօրքի քանակը, ինչպէս ասում են, պէտք է շարունակ մեծացնել։ Այո, այդպէս եմ կարծում, սակայն ես աւելի հեռու եմ գնում, քան զինուորականները։ Ոչ միայն նա, ով համապատասխան մարմնի մեծութիւն և լանջի ծաւալ ունի, պարտաւոր է ծառայել հայրենիքին, այլ առանց բացառութեան բոլորը, ոչ միայն բոլոր երիտասարդները, այլ և բոլոր ջանիլ աղջիկները։

Ծիծաղում էք. այո, երբ խօսում եմ սոցիալական ամենամեծ յաղթանակի մասին, այն չեմ ուզում ասել, որ երիտասարդութիւնն իր ամենագեղեցիկ տարիները զօրանոցներում պէտք է անց կացնէ։ Այդ կազմակերպութեան զարգացումը ես հետևեալ կերպով եմ հասկանում. ոչ թէ միայն ընդհանուր զինուորագրութիւն պէտք է լինի, այլ մի ընդհանուր աշխատանքի պարտաւորութիւն՝ հայրենիքի համար։ Իւրաքանչիւրը ոչ թէ միայն ուրախութեամբ պէտք է մեռնի հայրենիքի համար, այլ և պէտք է ապրի նրա համար, այսինքն պէտք է աշխատէ հայրենիքին ծառայելով...

Մտածեցէք թէ ինչքա՞ն կարելի էր անել, եթէ զինուորները հազարաւոր անգամ հրացան բռնելու փոխարէն՝ գործի դրուէին ջրանցքներ, ջրմուղներ շինելու, անմշակ հողերը անտառներով ծածկելու վրայ, եթէ նրանք տարերային պատահարների միջոցին օգնութեան հասնէին, եթէ հազարաւոր ծառայութիւններ անէին, որոնք բոլորը կարևոր և օգտակար կը լինէին, որոնց համար սակայն դրամ և մարդիկ չկան։ Իսկ աղջիկները. ինչքա՞ն չէին կարող անել նրանք հիւանդանոցներում, մանկական ապաստարաններում, աղքատների ու տնանկների մէջ։ Այդտեղ շատ գործ կը լինէր և շատ էլ օգտակար բան՝ սովորելու։ Տեսէք, ես այսպէս եմ հասկանում ընդհանուր զինուորագրութիւնը և այդ պատճառով էլ կողմակից եմ այդ կազմակերպութեան։

8. ՀԵԾԱՆԻՒՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Երբ նորերս հեծանիւների մի յայտնի գործարանի յայտարարութիւնն աչքովս ընկաւ, մտքովս անցաւ, որ այդ գործարանի բանուորները մի քանի տարի առաջ շատ կը զարմանային, եթէ նրանց ասէին, որ այսօր նրանք հեծանիւներ պէտք է պատրաստէին։ Այդ գործարանը ցամաքի ամենանշանաւոր զինագործարանն էր և երկար տարիներ շարունակ մի նոր սիստեմի հրացէններ էր պատրաստում. սակայն հասաւ վերջապէս

ժամանակը, երբ ոչ միայն այդ երկրի զօրքերը, այլև օտար պետութիւնների զօրաբանակները զինուած էին նոր սիստեմի հրացէններով։ Գործարանը պէտք է դադարեցնէր իր գործունէութիւնը, եթէ չսկսէր հեծանիւներ պատրաստել։

Ինչո՞ւ համար եմ պատմում ձեզ այս բանը. որովհետև ազգերի համար սպառազինութեան այնքան բաղձալի ընդհատման գլխաւոր արգելքը այն շահերն են հանդիսանում, որ ունեն բազմաթիւ շրջաններ՝ զօրքերի պահպանութեան շնորհիւ։ Առաջին տեղը բռնում են զինագործարանները. բայց հեծանիւներ պատրաստող գործարանի օրինակն արդէն ցոյց է տալիս, որ հեշտութեամբ կարելի է հաւասարակշռութիւնը վերականգնել։ Յետոյ գալիս են զօրքերի ամեն տեսակ մատակարարները, օրինակ կօշկակարները, դերձակները, ասպազինագործները, մսագործները, կարճ՝ նրանք, որոնց զօրքը վաստակ է տալիս։ Դրանք սպառազինման ընդհատման մասին չեն էլ ուզում լսել, ճիշտ այնպէս, ինչպէս որ կառապանները ժամանակին երկաթուղիներ կառուցանելու հակառակորդներ էին հանդիսանում, որովհետև իրանց գոյութիւնը վտանգուած էին համարում։ Սակայն այդ երկիւղն աւելորդ էր, որովհետև երկաթուղիների շնորհիւ հաղորդակցութիւնն աւելի զարգացաւ։ Դէպի երկաթուղու կայարանը և հակառակ ուղղութեամբ ճանապարհորդներ և ապրանք տանող կառապաններն այժմ հարիւր անգամ աւելի են զբաղուած, քան առաջ։ Այնպէս էլ բոլոր մատակարարները մոռանում են, որ զինուորները կենդանի կը մնան և առաջուայ նման ուտելու, կօշիկ ու զգեստ հագնելու կարիք կունենան։ Նրանք մոռանում են, որ ամեն տեսակ ապրանք աւելի կը սպառուի, որովհետև այն ծանր հարկերը, որ պատերազմական ծախսերի պատճառով՝ ճնշում են ամենքին, կանայատանան։ Ամեն մարդ այն դրամով, որ պէտք է վճարէր որպէս ուղղակի կամ անուղղակի հարկեր, կարող է կեանքի աւելի մեծ յարմարութիւններ ստեղծել. ուրեմն և մատակարարներին էլ կարելի է հաշտեցնել։

Մնում է միայն զօրքը. զինուորները մեծ մասամբ հարկաւ հակառակ չեն սպառազինման ընդհատման. դրանցից ամեն մէկը զինուորագրութիւնից առաջ իր զբաղմունքն ունէր և շատերն էլ տհաճութեամբ են իրանց գործը թողել։ Եւ յետոյ՝ արդէն անցել են այն ժամանակները, երբ հասարակ զինուորը կարող էր մեծ դերքի հասնել։ Այսօր այլ ևս ոչ մի զինուոր պայուսակի մէջ չէ կրում մարշալի ցուպը, որովհետև սպայութեան ասպարէզը փակուած է նրա համար։ Ուրեմն և զինուորները համաձայն կը լինեն սպառազինման ընդհատման։ Իսկ սպանները. դրանց հարկաւ չի կարելի պարսաւել, որ սպառազինման ընդհատման հակառակորդներ են, ինչպէս որ այդ պարզ երևաց Հաագի կօնֆերէնցի միջոցին։ Զէ՞ որ սպան պատանեկութիւնից սկսած իր կոչման համար է պատրաստվում. նա մեծ քանակութեամբ գիտելիքներ է ձեռք բերում և բազմաթիւ քննութիւններ տալիս. ուրեմն և նրան չի կարելի պարսաւել, թէ նա ուզում է, որ այդ բոլորը զուր չանցնի։ Սպան իսկապէս կարօտով սպասում է, որ առիթ լինի իր տաղանդը ցոյց տալու։ Եւ մենք չպէտք է նեղանանք, երբ նա պատերազմ է ցանկանում, որովհետև պատերազմն է նրա կոչումը և ամեն մի կարգին մարդ ձգտում է իր կոչմամբ մի բան անելու։

Միևնոյն ժամանակ սպայական դպրոցներում սաներին անգիր են անել տալիս զօրավարների հերոսութիւնները. ուրեմն հասկանալի է, որ յետոյ սպանները իրանք էլ ձգտում են, որ այդպիսի փառաւոր գործեր կատարեն։ Բացի դրանից՝ սպանները սովորաբար եռանդուն բնոյթի տէր մարդիկ են լինում և չեն կարող տանել, որ անգործունէութեան դատապարտուեն։ Եթէ մի ճարտարապետ միայն թղթի վրայ նկարէր երկաթուղիների յատակագծերը և երբէք առիթ չունենար իրապէս երկաթուղի շինելու, հարկաւ իր գործունէութիւնից բաւականութիւն չէր ստանայ. նոյնն են և սպանները, որոնք շարունակ պատերազմների նախագծեր են պատրաստում՝ առանց իրագործել կարողանալու։ Եւ որով-

հետև այդ դերը նրանց ցանկութիւններին չէ համապատասխանում և չի կարող համապատասխանել, նրանք պատերազմ են կամենում և ամենագլխաւոր արգելքն են հանդիսանում սպառազինման ընդհատման։ Միւս կողմից էլ, յաճախ նիւթական շահերն են դեր խաղում. սպաներն երկիւղ են կրում, որ սպառազինման ընդհատման դէպքում կարող են քաղցած մնալ։

Այժմ ես ուզում եմ ցոյց տալ, որ այս արգելքն ևս անյաղթելի չէ. եթէ սպաներին շարունակեն իրանց ռոճիկը վճարել և հետզհետէ աւելացնեն նրանց ռոճիկը այժմեան յաւելումների համեմատ, հարկաւ նրանցից շատերը ընդունելի կը համարեն այդ թոշակները։ Պետութիւնը ոչինչ չէր կորցնի դրանով, որովհետև սպաներին տուած ռոճիկները այժմեան զօրքերի պահպանութեան համար եղած ծախքերի չնչին մասն են կազմում, և վերջապէս թոշակների վճարումը պէտք է տեղի ունենայ կարճ, անցողական ժամանակի ընթացքում։ Մարդկային կեանքը հօ շատ էլ երկար չէ տևում։ Իսկ այն սպանները, որոնք չէին ցանկանայ պարապ մնալ, պատուաւոր պաշտօններ միշտ կը գտնեն։ Բայց շատ ցաւալի կը լինէր, եթէ նրանց գիտութիւնն և տաղանդը գործադրութիւն չգտնէր։ Վերցնենք՝ օրինակ՝ տեխնիկական զօրաբաժինների սպաներին. որչափ լաւ ծառայութիւն կարող էին անել դրանք նաև խաղաղութեան միջոցին։ Իսկ ծովային սպանները. դրանք կարող էին նոյն հմտութեամբ և առևտրական նաւերը ղեկավարել, ինչպէս որ ղեկավարում են պատերազմական նաւերը։ Միւս սպաներն էլ գործ կը գտնէին՝ իբրև ժանդարմերիայի և միլիցիայի սպաներ։ Երբ իրագործուի զօրքերի սպառազինման ընդհատումը, կը փոխուի միայն զօրքերի բնոյթը, որովհետև դրանք կը կերպարանափոխուեն ժանդարմների կօրպուսի, միլիցիայի կամ բանուորների բանակի, և սպաների կարիք կը լինի միշտ՝ դրանց վարժեցնելու համար։

Ուրեմն սպան էլ անիրաւացի կերպով է սպառազինման ընդհատման հակառակորդ հանդիսանում. նրա

շահերը չեն ֆնասուի, և ամենաշատն այն կը լինի, որ նա իր անարդիւնաւէտ կոչումը կը փոխարինի մի ուրիշ արդիւնաւէտ կոչումով. և այդ փոփոխութեամբ ոչան էլ չի զղջայ։ Ուրիշ բոլոր կոչումներից առաջ նա ձրգտում է հայրենիքին ծառայել և նա մինչև այժմ կարծում է, որ այդ կարող է անել միայն զէնքով։ Եթէ նա աւելի լաւ միջոց սովորի, կը հասկանայ, որ նրանք, որոնք ցանկանում են պետութիւնների համերաշխութիւնը, իր շահերի դէմ չեն գնում. այդ դէպքում նա կը համակրի դրանց և կը պաշտպանի նրանց ձգտումները։

9. ՆՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ

Լրագիրներում յաճախ շատ սիրուն պատմութիւններ են տպվում մի մեծ քաղաքից. այդ քաղաքի անունը չեմ ասում ձեզ, սակայն պատմութիւնները ճիշտ են և հաւանականաբար ուրիշ տեղեր էլ են պատահում։ Այդ պատմութիւններից մէկը, որ համարեա ամեն շաբաթ կարելի է կարդալ, հետևեալն է։ Մի աղքատ մայր դիֆտերիտով հիւանդ երեխային տանում է հիւանդանոց, բայց այնտեղ նրան յայտնում են, թէ «տեղ չկայ»։ Նա թափառում է մեծ քաղաքում մէկ հիւանդանոցից միւսը գնալով, բայց ամեն տեղ էլ նոյն պատասխանն է ստանում։ Նա թափառում է երկար ժամանակ, և այդ միջոցին երեխան վախճանվում է նրա գրկում։ Մեծ քաղաքը, որ այնքան գումարներ է ծախսում արտաքին զարդարանքների և տօնախմբութիւնների համար, հիւանդանոցներում շատ քիչ մահճակալներ ունի հիւանդ երեխաների համար։ Իսկ ծծկեր մանուկներին բոլորովին չեն ընդունում հիւանդանոցներում։ Զափահասների համար էլ հոգացողութիւնը դրանից աւելի չէ. դրանք էլ տեղի պակասութեան պատճառով մերժվում են։ Դուք կասէք՝ ինչ զարհուրելի դրութիւն է. հարկաւ այդ բանը տեսնում են և քաղաքում ու հասկանում, որ օգնութեան պէտք է հասնել։ Անհրաժեշտ է մի, նոյն իսկ մի քանի հիւանդանոցներ կառուցանել, բայց չեն կառուցվում։

Քաղաքը շատ տարիներից ի վեր վիճում է պետութեան հետ այն հարցի մասին, թէ այդ երկուսից որի՞ պարտականութիւնն է հիւանդանոցներ բանալը։ Քաղաքն ասում է. հին ժամանակներից մենք պայման ունենք կապած, որով մեր քաղաքում պետութիւնը պէտք է հոգայ հիւանդանոցներ բանալու։ Պետութիւնն ասում է. ես ընդունում եմ այդ պայմանագրութիւնը, սակայն շատ ցաւում եմ, որ չեմ կարող հիւանդանոցներ բանալ, որովհետև դրամի պակասութիւն ունեմ, միլիարդներով պարտքեր ունեմ, որոնց համար տոկոսներ պէտք է վճարեմ։ Բացի դրանից, ես աւելի էական ծախքեր ունեմ. ես պէտք է քաղաքացիների պաշտպանութեան համար հոգամ՝ պատերազմի դէպքում. այս աւելի էական բան է, քան նոր հիւանդանոց բանալը։ Եւ այդ ճիշտ պէտք է լինի, որովհետև այդ պետութեան մասին կարդացել եմ, որ նոր պատերազմական նաւեր է կառուցանում, որոնցից մէկը միայն 58 միլիոն արժէ։

Ի՞նչ էք կարծում, 58 միլիոնով կարելի է՞ մի հիւանդանոց բանալ։ Այո՛, նոյն իսկ մի քանիսը, բոլորը յարմարութիւններով միասին։ Եւ հիւանդանոցները կարող են նոյն իսկ հարիւր տարի գոյութիւն ունենալ, մինչդեռ պատերազմական նաւերը արդէն 10 տարուայ ընթացքում հնանում են, այնպէս որ կրկին նորերը պէտք է կառուցուեն։ Սակայն խեղճ հիւանդներն աւելի համեստ են. նրանք այնքան չեն ուզում, որքան որ պատերազմական նաւն արժէ. նրանք աւելի քչով են բաւականանում։

«Le Progrès Militaire» ամսաթերթի հաշուով՝ 110 «տօնանի» թնդանօթի իւրաքանչիւր ռումբը արժէ 4160 ֆրանկ. 104,000 ֆրանկ դրամագլխի տոկոսն է անում, եթէ տարեկան չորս տոկոս հաշուենք։ Սակայն այսպիսի թնդանօթը կարող է միայն 93 ռումբ արձակել, որից յետոյ անպէտքանում է և հին երկաթների շարքն անցնում։ Եւ որովհետև այդպիսի թնդանօթը 412,000 ֆրանկ արժէ, հետևապէս և նրա արժէքը իւրաքանչիւր արձակած ռումբից յետոյ պակասում է 4340 ֆրանկով, ուկած ռումբից յետոյ

բեմն և իւրաքանչիւր արձակած ռումբի արժէքը դառնում է 8500 ֆրանկ։ Այսպիսով իւրաքանչիւր ռումբ արձակուելիս յօդս են ցնդացնում 212,000 ֆրանկ դրամագլխի տոկոսները։

Ամեն մի ռումբի վրայ ծախսուած դրամով կարող էին ուրիշ հիւանդ մի ամբողջ տարի խնամուել. արդեօք աւելի լաւ չէր լինի մի նոր թնդանօթ ձեռք բերելու փոխարէն՝ մի նոր հիւանդանոց բանալ։ Ի՞նչ օգուտ խեղճ մարդկանց, թէ թնդանօթը մի անգամ իրանց պէտք է պաշտպանէ, եթէ նրանք այդ միջոցին հիւանդանալով՝ թշուառ կերպով ոչնչանում են։ Արտաքին թշնամին գալիս է երբեմն, կամ գուցէ և երբէք չէ գալիս, սակայն հիւանդ մարդիկ միշտ կան։ «Հիւանդութիւն» կոչուած թշնամու դէմ պէտք է ամենից առաջ պաշտպանուէր պետութիւնը, եթէ ազնիւ վերաբերմունք ունենար քաղաքացիների նկատմամբ, եթէ ոչ՝ կարող է պատահել, որ քաղցից և ցրտից դողացող և հիւանդանոցում տեղ չգտնող մի թշուառական ասէ. «Ինչո՞ւ մարդ եմ ես և ոչ թնդանօթ. եթէ թնդանօթ լինէի, պետութիւնը կը խնամէր ինձ, որպէս զի կեանքս երկարատև լինէր. սակայն տարաբախտաբար մարդ եմ, և այդ պատճառով իմ կեանքը ոչ մի արժէք չունի»։ Տեսէք, այդ բանն ասում է մարդը, որի պաշտպանութեան համար է թնդանօթ արձակվում։ Մի՞թէ հակասութիւն չէ այդ։ Այո՛. երբ դուք մի անգամ ժողովրդի ներկայացուցիչ լինէք պարլամէնտում՝ յօգուտ թնդանօթների ձայն կը տաք թէ՞ հիւանդանոցների։

10. ԵՐԿՐԱՇԱՐԺ

Յիշում էք այն մեծ երկրաշարժը, որ 1908 թ. դեկտեմբերին Մեսինան ամբողջովին կործանեց։ Շատ մարդիկ կորցրին իրանց կեանքը, հազարաւորներն էլ կորցրին իրանց կարողութիւնը։ Այսպիսի դժբախտութիւնը սարսափելի է, մանաւանդ որ երկրաշարժի դէմ կարելի չէ պաշտպանուել։

Երբ հրաբուխ է ժայթքում, կարելի է ասել, թէ մարդիկ չպէտք է հրաբուխի շրջակայքում բնակուէին, քանի որ գիտէին նրա դոյութեան մասին. երբ ջրհեղեղ է լինում, կարելի է ասել՝ թող զգոյշ լինէին, հօ գիտէին, որ գետն ամեն տարի ափերից դուրս է գալիս։

Սակայն երկրաշարժի միջոցին մարդ պէտք է լուռ մնայ, որովհետև մարդս անզօր է նրա դէմ։ Երկրաշարժն իսկապէս մի տարերային պատահար է, որից մարդ չի կարող պաշտպանուել. այդ իսկապէս աստուածային պատուհաս է։

Ջրհեղեղների դէմ մարդիկ այլևս անզօր չեն. նրանք սովորել են գետերի հոսանքը կարգաւորել և թումբեր շինել։ Եթէ մի անգամ գետը քանդում է թումբը, հարկաւ դժբախտութիւնը մեծ է լինում, սակայն ապագայ թումբերն աւելի ամուր կը լինեն և այլևս թոյլ չեն տայ, որ գետի հոսանքը քանդէ այդ։

Ինչ ուզում է լինի, ձեզ համար պարզ է, որ երկրաշարժն ու ջրհեղեղը օգտակար բաներ չեն. տեսէք, պատերազմն էլ մի տեսակ երկրաշարժ կամ ջրհեղեղ է, միայն թէ աւելի մեծ վնասներ է տալիս։ Տասը երկրաշարժ չեն կարող այնքան մարդ ոչնչացնել, որքան ընկնում են մի ճակատամարտում՝ շնորհիւ մեր գերազանց հրազէնների։ Բայց դեռ կան մարդիկ, որ ասում են, թէ պատերազմը բարիք է և օգտակար. այդ դէպքում երկրաշարժներն ու ջրհեղեղներն էլ բարիք պէտք է լինէին։

Այսպիսի անմտութեանը կարելի չէ պատասխանել. հարցնում ենք միայն՝ ի՞նչպէս կարող ենք պաշտպանուել պատերազմի դէմ։ Արդեօք պաշտպանուելու ոչ մի միջոց չկա՞յ՝ ինչպէս երկրաշարժի դէմ, թէ՞ կայ որոշ միջոց՝ ինչպէս ջրհեղեղի դէմ։ Այո՛, ընդհանուր շահերը պաշտպանելու համար կարելի է բարձր պաշտպանողական թումբեր կառուցանել, կարելի է փոքրիկ տարաձայնութիւնները, որոնք իբրև արդելք բարեկամական հոսանքի առաջն են կտրում, մէջտեղից վերացնել. այդ դէպքում հոսանքն այլևս իր հունից դուրս չի գայ, եթէ նոյն իսկ ընդհարումների և բռնկումների ուժեղ տարափ

լինի։ Պետութիւններն այդպէս էլ անում են։ Դաշինքները ոչ այլ ինչ են, եթէ ոչ այդպիսի պաշտպանողական թումբեր։ Դրանց թերութիւնն այն է, որ թումբը միայն մի կողմից է շինվում. եթէ պետութիւններն ամեն տեղ այդպիսի թումբեր կառուցանէին, այն ժամանակ պատերազմի վտանգը կանյայտանար։ Երկրաշարժի դէմ մենք անզօր ենք. բայց ջրհեղեղի և պատերազմի դէմ՝ ոչ։ Ջրհեղեղի դէմ կարող ենք ժամանակին պաշտպանուել, իսկ պատերազմի համար կարևոր է միայն՝ որ չկամենանք։

11. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Կարիք չկայ, որ այս բառը բացատրեմ ձեզ. ամեն օր անթիւ անգամ լսում էք։ Վէրքը կապում են առողջապահական եղանակով. բերանը ողողելու ջուրը, ատամները մաքրելու զանգուածը ծառայում են բերանի առողջապահութեանը. քաղաքը առողջապական տեսակէտով կոյուղիներ է շինել տալիս. խմելու լաւ ջուրը համարվում է առողջապահութեան առաջին պատուիրանը։

Ուրեմն ի՞նչ է առողջապահութեան նպատակը. նպատակայարմար միջոցներով ազգաբնակութեան առողջական դրութիւնը այնպէս բարելաւել, որ եթէ տարափոխիկ հիւանդութիւններ առաջանան, չկարողանան տարածուել։ Յիշեցէք Պետերբուրգի վերջին խոլերան, որ այնքան զոհեր տարաւ։ Երբ խոլերան ամենակատաղի կերպարանք ընդունեց, քաղաքի գովելի հայրերը նոր հասկացան, որ Պետերբուրգը կոյուղիների ցանց չունի և Նեվա գետի ջուրը կատարելապէս վարակուել է։ Նոր վճռեցին կոյուղիներ և ջրանցքներ շինել. այդ վճիռը շատ գովելի կը լինէր, եթէ տարափոխիկ հիւանդութիւն սկսուելուց առաջ եղած լինէր։ Այժմ արդէն ուշ էր, բանը բանից անց էր կացել։ Առողջապահական միջոցները պէտք է նախապէս ձեռնարկուեն, երբ դեռ տարափոխիկ հիւանդութեան մասին խօսք անգամ չկայ, խաղաղութեան միջոցին, կարելի է ասել։

Եւ որովհետև «խաղաղութեան միջոցին» խօսքը գործ դրի, մի քանի խօսք էլ ասեմ մի ուրիշ տարափոխիկ հիւանդութեան, պատերազմի մասին։ Պատերազմի ջերմը ազգերի հոգեկան հիւանդութիւնն է, որից ճշմարիտ առողջապահութիւնը կարող է մեզ նոյնպէս պաշտպանել, ինչպէս որ պաշտպանում է խոլերայից և ժանտախտից։ Դեռ աւելի լաւ, որովհետև ժանտախտի պատճառները, հակառակ գիտական ամեն տեսակ հետազօտութիւնների, դեռ այնպէս բաւարար չափով պարզուած չեն, որպէս զի կարելի լինէր իսկապէս նրա առաջն առնել։ Սակայն պատերազմի պատճառները գիտենք և եթէ չկամենանք, պատերազմ չի էլ լինի։ Հարկաւ այդ կամքն ունենալու համար կարևոր է մի որոշ առողջապահութիւն, որ պատերազմի բացիլներն իրանց սաղմի մէջ է խեղդում և նրա տարածմանն արգելք լինում։

Այդպիսի բացիլներ են ժառանգական թշնամու, վրէժխնդրութեան քաղաքականութեան մասին արտասանուած ճառերը, զօրքերը շատացնելը, նոր թնդանօթները, անվերջ պատերազմական նաւեր շինելը. այս դէպքերում տեղին կը լինէր ազդեցիկ առողջապահութիւնը։

Ի՞նչ կասէին, եթէ ամեն մի երկրում բազմաթիւ գիտնականներ զբաղուած լինէին՝ մեծ քանակութեամբ խոլերայի և ժանտախտի բացիլներ բազմացնելով, որպէս զի որոշ հրամանը ստանալուց յետոյ մի ուրիշ երկիր տանէին և այնտեղ տարածէին։ Մարդկային արժանապատուութեան զգացմունքի հակառակ կը լինէր այդ, այնպէս չէ՞. բայց մի՞թէ հրազէնները, թնդանօթները, պատերազմական նաւերը ճիշտ նոյնպիսի բացիլներ չեն, որոնք նոյնպէս սպանիչ ներգործութիւն ունեն և նոյնպէս որոշ հրամանից յետոյ են գործում։ Տեսէք, կան մարդիկ, և զարգացած մարդկանց մեծամասնութիւնն են կազմում դրանք, որոնք ասում են «Si vis pacem, para bellum»—եթէ խաղաղութիւն ես ուզում, պատրաստ եղիր պատերազմի համար։ Այդ իսկապէս բացիլ-

ների բազմացնելը կը լինէր։ Ազդեցիկ առողջապահութիւնը սակայն պահանջում է դրանց ոչնչացումը, կամ այս դէպքում՝ սպառազինման ընդհատումը։

Եթէ մենք բոլորս զէնք կրէինք, աւելի յաճախ էլ զէնք կը բանեցնէինք՝ քան այժմ, երբ անզէն ենք անցնում փողոցներով։ Եթէ բոլոր պետութիւններն էլ դադարեցնէին սպառազինումը, իսկապէս խաղաղութեան համար կը գործէին. այդ պատճառով էլ ովքեր առողջապահութիւն են սովորել, ասում են. «Si vis pacem, para pacem»—«եթէ խաղաղութիւն ես ուզում, պատրաստ եղիր խաղաղութեան համար»։

12. ԳԼԽԱՒՈՐ ՎԻՃԱԿԸ

Ո՞վ չէ լսել իր այս կամ այն ծանօթի ասածը՝ թէ «Այո, եթէ գլխաւոր վիճակն ինձ ընկնէր». հարիւր հազարաւոր մարդիկ ամեն տարի գնում են խաղարկութեան տոմսակներ, լոտերեայն յուսալով թէ գոնէ մի անգամ իրանց կընկնի գլխաւոր վիճակը — ամենամեծ գումարը։

Սակայն շատ քիչ հաւանականութիւն կայ դրա համար. կէս միլիոնաչափ խաղատոմսերի մէջ միայն մէկն է տանում ամենամեծ գումարը և երազած հարստութիւնը ձեռք բերում։ Միւս վիճակները սովորաբար փոքր գումարներ են տանում և գլխաւոր վիճակի դերը չեն խաղում, բայց և այնպէս չեղածից աւելի լաւ են։ Սակայն ով խաղատոմս է գնում, փոքր վիճակները տանելու ցանկութեամբ չէ առաջնորդվում, այլ հաւատում է, որ գլխաւոր վիճակը կընկնի իրան։ Ես ձեզ մի գաղտնիք յայտնեմ, որով կարող կը լինէք գլխաւոր վիճակը տանել։ Ես գիտեմ մի վիճակախաղ, որ ամեն տարի հինգ գլխաւոր վիճակ է ձգում և որ ամենից ձեռնտուն է, խաղատոմսը ոչինչ չարժէ։ Բայց աւելի անհաւատալին այն է, որ վիճակ ձգուող խաղատոմսերի թիւը հարիւրից աւելի չէ։ Երևի սիրով կը ցանկանայիք մասնակցել այդ վիճակախաղին. բայց պէտք է ասեմ,

որ խաղատոմս ձեռք բերելը դժուար է։ Խաղատոմսը, այսինքն վիճակահանութեանը մասնակցելու իրաւունքը՝ գլխաւոր վիճակը տանելու համար, թէև ոչինչ չարժէ, սակայն այդ իրաւունքը ձեռք բերելու համար՝ պէտք է ունենալ որոշ յատկութիւն։

Այժմ դուք ինձ չէք հասկանում. աւելի պարզ ասեմ. ասածս վիճակախաղ չէ, այլ մրցանակաբաշխութիւն, և մրցանակն էլ կոչվում է «Նոբէլի մրցանակ»։ Ով մարդկութեանը ամենամեծ ծառայութիւնն է արել՝ ֆիզիկայի, քիմիայի, բժշկականութեան կամ գրականութեան շրջանում, կարող է այդպիսի մրցանակ ստանալ։ Դուք կասէք, թէ երբէք չենք կարող ստանալ այդ մրցանակը, որովհետև մեր խելքը չի հասնում այդ բաներին։ Լիակատար իրաւունք ունէք. ես էլ այդ կարծիքի եմ։ Սակայն կայ և հինգերորդ մրցանակ, որ ոչ թէ տաղանդ ունեցողներին է տրվում, այլ բարի կամք ունեցողներին. իսկ բարի կամք ձեզնից ամեն մէկը կարող է երևան բերել։

Հինգերորդ մրցանակը, որի գումարը 200,000 ֆրանկ է, տրվում է նրան, ով ամենից շատ կամ ամենից լաւ է գործել՝ ազգերի եղբայրակցութեան, այժմեան զօրքերը վերացնելու կամ քչացնելու կամ թէ խաղաղասիրական կոնգրէսների կազմակերպութեան և տարածման համար։

Տեսնում էք, այս մրցանակը ձեզնից իւրաքանչիւրը կարող է ստանալ մի անգամ։ Նա պէտք է միայն փորձէ՝ դէպի մարդկութիւնն ունեցած իր պարտականութիւնը կատարելու և մտածէ, թէ ինչպէս կարելի է աշխարհիս երեսից վերացնել պատերազմը. իսկ եթէ նա չի կարող այդ բանն անել ինքնուրոյնաբար, պէտք է այդ խնդիրների վերաբերեալ ուրիշների մտքերը տարածէ խօսքով և գրով, այդ մտքերը պաշտպանէ, հրապարակով քարոզէ և ուրիշներին էլ համոզէ։

Դրա համար կարևոր չէ այնքան տաղանդ, որքան բարի կամք, մեծ ջանք. իսկ այդ բանի համար մարդկանց մեծամասնութիւնը յարմարութիւն ունի։ Սակայն

իրողութիւնն այն է, որ Նոբէլի խաղաղութեան մրցանակը ստանալու հաւակնութիւն ունեցողների թիւն աւելի քիչ է լինում, քան թէ գրական, ֆիզիկական և բժշկական մրցանակի ակնկալութիւն ունեցողներինը։

Սակայն ամեն մէկի համար որչափ հեշտ է՝ ազգերի խաղաղութեան համար մի բան անելը. այդ դէպքում մենք դրամագլուխ չենք կորցնում, Նոբէլի մրցանակն էլ չենք ստանում, բայց տանում ենք գլխաւոր վիճակը։ Եւ գիտէք որն է այստեղ գլխաւոր վիճակը. այն գիտակցութիւնը, որ բարի, ազնիւ մարդ ենք եղել, որ մարդկութեան առաջադիմութեան շաւղի վրայ մեր բաժին աշխատանքը կատարել ենք, մեր կեանքը զուր չենք անց կացրել և մեր անունը ապագայ սերունդները օրհնութեամբ կը յիշեն։

Թող նոյն իսկ միջազգային խաղաղութիւնը դեռ չիրականանայ. ինչ անենք։ Մենք մերն արած կը լինենք, ուրիշներն էլ իրանցը կը շարունակեն. ընդհանուր և միաբան աշխատանքը նպատակին կը հասցնի։ Այսպիսի գիտակցութեան դիմաց քանի՞ կօպէկ արժէ գլխաւոր վիճակը։

13. ՄԻԿԸ ՊԼՏՔ Է ՆԵԲՈՂԱՄՏՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ ԴՆԻ

Ձեր ընկերներից մէկի վրայ բարկացած եղել էք, այո. ինչու։ Հաւանականաբար նա ձեր մասին որևէ աննպաստ բան կը խօսէր, և երկուսիդ լաւ բարեկամներից մէկը իսկոյն այդ խօսքերը ձեզ հասցրած կը լինէր։ Յետոյ ի՞նչ արիք. երևի ձեր լաւ բարեկամին կասէիք. «Ճիշտ չէ, նա ստում է. այդ անպիտանը այդպիսի բաներ պէտք է ասի իմ մասին, որովհետև ինքն այս ու այն բանն է արել»։ Դրանով ձեր սիրտը հովացրել էք, բայց չարիքն աւելի մեծ կերպարանք է ընդունել։ Ձեր լաւ բարեկամը հարկաւ ձեր ասածներն էլ հաղորդել է միւսին. և այժմ դուք թշնամիներ էք դարձել և միմեանց պատահած ժամանակը սեղմուած բռունցքով էք իրար ողջունում։ Նոր ըմբռնում էք, թէ ինչ էք կորցրել. եր-

կուսդ ամենալաւ ընկերներ էիք, միասին զբօսանքի էիք գնում, բզէզներ և թիթեռներ էիք ժողովում, ձեր նախաճաշը միասին անում, և մի «խաբարբզանութեան» պատճառով ձեր լաւ յարաբերութիւնները վերջացան։ Երկուսդ էլ կուզենայիք նորից ընկերանալ, բայց ձեր հպարտութիւնն արգելք է լինում՝ միւսին ասելու. «Միտքս չար չէր, դարձեալ ընկեր լինենք»։ Եւ որովհետև երկուսիցդ ոչ մէկը սիրտ չէ անում այդ խօսքերն ասելու, ձեր ամբողջ կեանքի ընթացքում միմեանց թշնամի էք մնում։

Տեսէք, ճիշտ այդպէս է լինում և պետութիւնների կեանքում. համարեա թէ չկայ մի պետութիւն, որ անցեալում մի անգամ մի ուրիշ պետութեան հետ վէճ ունեցած չլինի։ Այդ պատճառով էլ ուրիշ պետութիւններին թշնամի է համարում, շարունակ շատացնում է թնդանօթների ու այլ հրազէնների քանակը, ամրութիւններ է կառուցանում և անչափ զինվում։ Եթէ այդ պետութեանն ասում են՝ «քառասուն տարուց աւելի է, որ ուրիշ պետութեան հետ վէճ չես ունեցել, նոյն իսկ դաշնակից ես եղել նրան, էլ ինչու՞ ես նրա դէմ զինվում, ինչու՞ հաւատ չես ընծայում նրան», նա պատասխանում է. «Պարզամի՛տ մարդ, բարի խրատներդ ուրիշ պետութեան տուր. ես իսկոյն պատրաստ եմ զօրքերս արձակելու, եթէ այդ բարի օրինակը նա տայ. ես այնքան յիմար չեմ, որ առաջին անողը լինեմ»։ Ուրեմն ճիշտ այն խօսքերը, որ դուք էք ասում։ Մի տարբերութիւն կայ միայն. դուք գուցէ իսկապէս մի երևութական պատճառ ունէք միմեանց վրայ բարկանալու և ոչ թէ նրա համար, որ ձեր պապերը մի անգամ միմեանց վրայ բարկացած են եղել։ Սակայն պետութիւններն այդպէս են, և այդ պատճառով աւելի շուտ իրանց կործանում են, քան թէ միմեանց ասում՝ «հաշտուենք և զէնքերը վար դնենք»։

Բայց եթէ իսկապէս մի պետութիւն սկսէ սպառազինումը դադարեցնել, միւսներն իրօք կը յարձակուեն նրա վրայ, որպէս զի անզէնին կլանեն։ Ո՛չ, այդ

բանն անելու արգելում է նրանց պատիւն ու խիղճը, որովհետև կայ՝ պետութեան պատիւ և ազգի խիղճ, ինչպէս որ անհատներն ունեն՝ պատիւ և խիղճ։ Բացի դրանից՝ անցել է այն ժամանակը, երբ պետութիւնը մեծանում էր նուաճումներով։ Տեսէք, Շվէյցարիան, հիւսիսային պետութիւնները, Բելգիան շատ սակաւ են զինվում, բայց և այնպէս միւս պետութիւնների մաքոմը անգամ չէ անցնում՝ այդ երկրներից մէկին տիրանալու։ Այդ պետութիւնները չեն զինվում, որովհետև ընդմիշտ իրանց չէզոք են յայտարարել։ Արդեօք մի այլ պետութիւն ևս նոյնը չի՞ կարող անել. նա պէտք է միայն սկիզբը դնէ։ Չէ՞ որ պետութիւններն ամեն բանում հետևում են միմեանց՝ զրահաւոր, ականներ պատուիրելիս, հարկեր, օրէնքներ հրատարակելիս. նրանք միմեանց կը հետևեն նաև սպառազինումը դադարեցնելու գործում, երբ տեսնեն, որ միլիոններ են խնայում։ Սակայն ամենամեծ վաստակը այն պետութիւնը կունենայ, ով ամենից շուտ սկսէ սպառազինման դադարումը։ Եւ ոչ թէ միայն վաստակ կունենայ, այլ և կը վայելէ փայլուն օրինակով առաջընթաց լինելու փառքը։

Մէկը պէտք է ներողամտութեան սկիզբը դնէ, ասում է Բեօրնսոնը իր «Ուժից վեր» թատերգութեան մէջ։ Թող այս խօսքերը իրանց սրտին մօտ ընդունեն պետութիւնները և վրիժառութեան քաղաքականութեան փոխարէն՝ բարի օրինակ տալու քաղաքականութեան հետևեն։

14. ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ

Արդեօք կարիք կա՞յ, որ այս խօսքն աւելի բացատրեմ ձեզ. արդեօք ինչ որ պէտք է ասուի, արդէն չէ՞ պարունակվում «մայրական սէր» խօսքի մէջ։ Հարկ կա՞յ առաջ բերելու օրինակներ պատմութիւնից և ամենօրեայ քրոնիկոնից՝ թէ ինչպէս մայրը զոհուել է իր երեխայի համար կամ զոհվում է։ Ձեր անձնական փորձից էլ

գիտէք, թէ ինչ կարող է անել ձեր մայրը ձեզ համար։ Մտաբերեցէք միայն այն բազմաթիւ գիշերները, ձեր առողջ և հիւանդ օրերին, երբ ձեր մայրը ձեր պատճառով անքուն է անց կացրել։

Կամ թէ պատմեմ ձեզ այն հազարաւոր օրինակները, թէ ինչպէս խեղճ այրի կինը ծանր աշխատանքով իր զաւակների համար հաց է վաստակում, ինչպէս մինչև կէս գիշեր կարում և լուանում է, որպէս զի իր տղաներն էլ իրանց ընկերների նման կարգին հագնուած լինեն։ Ինչու՞ է նա այդպէս անում. պատասխանը գտնվում է հէնց «մայրական սէր» խօսքի մէջ։

Եւ ի՞նչ է ցանկանում իւրաքանչիւր մայր իր զաւակների ապագայի համար. հարստութիւն, այնպիսի երջանկութիւն, որ ուրիշ ոչ ոք չունենայ, և ամենից առաջ՝ առողջութիւն, որի համար նա սրտանց աղաչում է Աստուծուն։

Նրա բաղձանքն է՝ ամեն տեսակ անազնիւ ազդեցութիւնից հեռու պահել իր զաւակին. ամենալաւ ընկերները, ամենալաւ ուսուցիչներն անգամ բաւարար չափով լաւ չեն նրա աչքում։ Նա ցանկանում է շարունակ իր զաւակի հետ լինել, որպէս զի եթէ որևէ դժբախտութիւն պատահի նրան, ինքն առաջ ընկնի և դժբախտութեան զոհն ինքը լինի։ Յետոյ գալիս է կեանքի այն վայրկեանը, երբ մայրն այլ ևս իր զաւակի պահապան հրեշտակը չի կարող լինել—տղան զինուոր է գնում։ Որքան օրհնութիւններով է նա զաւակին ճանապարհ ձգում, որքան ջերմ արցունքներ է թափում, երբ իր սիրելին այլ ևս իր մօտ չէ։ Բայց միևնոյն ժամանակ որքան հպարտ է նա, երբ իր զաւակը զարդարուն համազգեստով իր հետ միասին անցնում է փողոցով։ Այդ դէպքում զաւակը նրա աչքում ամենալաւ զինուորն է, որի նմանը երբէք չէ եղել։ Եւ ինչ որ ինքն առաջ կարդացել կամ լսել է քաջութեան, անվեհերութեան և այրականութեան մասին, այդ բոլորը վերագրում է իր զաւակին։ Նա երևակայում է արդէն, որ իր որդին աւելի մեծ հերոս կը լինի,

աշխարհը նրան մատով ցոյց կը տայ, նոյնպէս և իրան, իբրև ընտիր զաւակի մօրը։

Եւ ինչ բաներ է երազում այդպիսի մայրը։ Արդեօք իրականութիւնն էլ է երազում նա. երազում է նոյնպէս, որ իր զաւակին վերադարձնում են առանց ոտքերի, որ նրա ուղեղը ցաք ու ցրիւ է գալիս գրանատի հարուածից, որ նա առանց օգնութեան հասնող ձեռքի արնաքամ է լինում պատերազմի դաշտում։ Ո՛չ, այդպիսի բաներ չէ երազում մայրը. մայրական սիրտը կարող է ամեն բան ըմբռնել, բայց ո՛չ երբէք զաւակի կորուստը։

Սակայն մի մխիթարութիւն ունի նա. նրա զաւակն ընկել է պատուի դաշտի վրայ, հայրենիքի համար։ Մի՞թէ զաւակը կորցրած մօր համար մխիթարութիւն է այդ. ի՞նչ նշանակութիւն ունի նրա համար հայրենիքը, փառաւոր յաղթանակը, երբ նրա զաւակն այլ ևս կենդանի չէ, նրա սիրելի, գեղեցիկ, բարի ու քաջ զաւակը։ Մի՞թէ նրա համար էր ինքը հսկել, աշխատել և հոգացել, որ իր զաւակը թնդանօթի կերակուր դառնայ։ Եւ խորին ատելութիւն է արթնանում մօր սրտում հայրենիքի, զինուորականութեան և այն ամենի դէմ, որոնց ձեռքումն է իշխանութիւնը։

Ո՛չ, մայր, անարդար է քո ատելութիւնը. մի՛ ատիր հայրենիքդ, մի՛ ատիր զինուորականութիւնը. ինքդ քեզ ատիր, որովհետև դու էլ մեղսակից ես, որ զաւակդ ընկաւ։ Ինչո՞ւ դու ոչինչ չարիր, որ պատերազմի առաջն առնուի։ Արդեօք կարելի՞ է պատերազմի առաջն առնել։ Հարկաւ, պէտք է միայն չկամենալ, որ պատերազմ լինի։ Եթէ բոլոր մայրերը դեռ խաղաղութեան ժամանակ ասեն՝ «մենք սիրով նուիրում ենք մեր զաւակներին հայրենիքի ծառայութեան, սակայն նրանց ծառայութիւնն աւելի լաւ կարելի է գործադրել, քան թնդանօթի կերակուր դառնալը. պատերազմը կարևոր չէ»։ Եթէ բոլոր երկիրներում բոլոր մայրերն այդպէս մտածեն, այլ ևս պատերազմ չի լինի։

Աղջիկներ, որ մի անգամ մայր պիտի դառնաք, լաւ միտներդ պահեցէք հետևեալը. «Պատերազմը կարևոր

չէ, պէտք է միայն չկամենալ պատերազմ». ասացէք այդ բանը ձեր ձեռքը խնդրողներին, մանկութիւնից սովորեցրէք այդ ձեր զաւակներին։

15. ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ԵՆՔ ԱԳՐՈՒՄ, ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ԸՆԹԱԽՏՈՒՄ

Արդեօք երբևիցէ մտածել էք. թէ ինչո՞ւ համար է ձեր հայրը ջանասիրութեամբ աշխատում գործատանը։ Այո՛, հարկաւ դուք յիակատար կերպով հասկանում էք այդ։ Ո՞րքան աւելի աշխատի նա, այնքան աւելի կը վաստակի, այնքան աւելի լաւ կը կերակրի, այնքան աւելի լաւ կը հագցնի ձեզ։ Նա մինչև անգամ իր հին զգեստը երկար կը հագնի, որպէս զի ձեզ համար նորը գնի։ Ինչո՞ւ է նա այդպէս անում. որովհետև նա ձեր բարի հայրն է, որովհետև ձեզ համար ամենալաւն էլ ձեռք բերելով՝ դեռ գոհ չէ։

Բայց միայն դրա համար չէ՞ աշխատում նա. դուք չպէտք է միայն ուտէք և լաւ զգեստ հագնէք, այլև պէտք է ապագայում աջողակ մարդիկ դառնաք։ Բայց ինչ էլ որ սովորէք, սովորելը միշտ դրամ արժէ. դպրոցին վճարելիք թոշակը, դասագրքերը դրամ են պահանջում, իսկ եթէ ձեզնից մէկն էլ ուրիշ տեղ է գնում բան սովորելու՝ աւելացրէք և բնակարանի վարձը, ապրուստը։ Եթէ մէկն էլ ուզում է կողմնակի երաժշտութիւն, նկարչութիւն կամ ուրիշ իր սիրած բանը սովորել, ի՞նչքան դրամ է հարկաւոր։ Ուրեմն այդ բաների համար էլ ձեր բարի հայրը պէտք է աշխատէ։

Բացի այդ ծախքերից նա մի քանի կօպէկ էլ յետ է ձգում, որպէս զի երբ Տէր Աստուածն իրան այս աշխարհից վերացնէ, իր սիրեցեալ տղան առանց որևէ նեցուկի չմնայ և իր թանկագին աղջիկը ամուսնանալիս օժիտ ունենայ։

Սակայն իսկապէս բոլորն այդ է, ինչ որ ձեր հայրն անում է ձեզ համար։ Ինչո՞ւ է գնում նա այն ժողով-

ները, որտեղ դպրոցական դասատուութեան բարելաւման մասին են խօսում. նա հօ վաղուց է դպրոցից դուրս եկել։ Ձեր պատճառով, որպէս զի դուք սովորէք ամենալաւը, ամենանպատակայարմարը։ Ինչու են մտահոգութիւն պատճառում նրան՝ հիւանդների ապահովութեան, ծերացածների և վիրաւորուածների ապահովութեան և նման հարցերը. նա, փառք Աստուծոյ, այնպիսի դրութեան մէջ է, որ պատահած դէպքում կարող է և բուժարանի ծախքերը հոգալ, իր ապահով կենսաթոշակն ունի. ինչու։ Դարձեալ ձեր պատճառով. գուցէ դուք մի անգամ կարիք ունենաք։ Ինչու է հետաքրքրվում նա մի երկաթուղու կառուցման գործով, որով երբէք ճանապարհորդելու չէ։ Նա և բոլոր հայրերը աշխատում են, որ ապագայ սերունդների—դուք և ձեր ունենալիք զաւակները—կեանքը ըստ կարելոյն հաճելի դարձնեն և ամեն տեսակէտով գեղեցկացնեն։

Այժմ մտածեցէք, թէ ինչ կը լինի, եթէ ձեր հօրն ասեմ. «Խնայողութիւն մի՛ անի, զուր ջանք է, մի երկու տարուց յետոյ խնայածդ կը կորչի. որդուդ համար մի՛ հոգա, մի երկու տարուց յետոյ կը մեռնի»։ Արդեօք ինչ կը պատասխանի ինձ ձեր հայրը. «Հեռացի՛ր աչքիցս, չարագուշակ ագռաւ, իմ դրամն ապահովուած է պետական արժեթղթերով և ամեն ջանք գործ եմ դնում, որ տղաս չհիւանդանայ. ամառն ուղարկում եմ նրան լեռները կամ ծովափ. մէկ նայի՛ր առողջ և ուժեղ տղայիս դէմքին. ինչու պէտք է մի երկու տարուց յետոյ մեռնի. անմիտ բան է ասածդ»։

Եւ եթէ ես նրան ասեմ յետոյ՝ «զուր ինքդ ես ամեն բան նախապատրաստում, որ դեռափթիթ զաւակդ թշուառ կերպով ոչնչանայ, որ քո դրամի հետքն էլ չմնայ», այն ժամանակ նա հարկաւ այլ ևս ինձ չի պատասխանի, այլ գժատուն ուղարկել կը տայ։

Բայց և այնպէս ես գիժ չեմ և ասածներս էլ խիստ լուրջ՝ բառի բուն նշանակութեամբ։ Ի՞նչ է պատահում պատերազմի դէպքում։ Պատերազմի ժամանակ ապահով պետական արժեթղթերն էլ քիչ արժէք ունեն կամ բոլորովին կորցնում են իրանց արժէքը։ Հարցրէք մի հասկացող մարդու, թէ որքան է ընկել ռուսական բէնտաների արժէքը ռուս-ճապոնական պատերազմն սկսուելուց յետոյ, թէ որքան մարդ է իր կարողութիւնը կորցրել բուրերի պատերազմի ժամանակ՝ ունենալով աշխարհիս ամենաապահով համարուած արժեթղթերը—անգլիական կոնսոլները։

Միթէ ձեր հայրն իրաւ կարծում է, թէ թշնամու գրանատները հէնց ձեզ պիտի խնայեն։ Ո՛չ, հարկաւ ո՛չ, բայց նա չէ մտածում պատերազմի դէպքի մասին, որովհետև եթէ մտածէր, նա էլ կը հոգար, որ պատերազմ չլինի, ինչպէս որ հոգում է ձեր կրթութեան մասին։

Բայց արդեօք կարելի՞ է հոգալ, որ պատերազմ չլինի։ Ի հարկէ, կարելի է. դու կարող ես ամեն օր լրագրում կարդալ, որ մի քաղաքագէտ կամ մի զօրապետ պնդում է, թէ «խաղաղութիւն պահպանելու համար պէտք է զօրքը կամ նաւատորմիղը կրկնապատկել»։ Ի՞նչ ես կարծում։ «Միւս պետութիւններն էլ շատացնում են իրանց զօրքերը և այդպիսով խաղաղութիւնը կրկին ապահովուած չէ»։ «Եթէ ուրիշներն են այդ անում, մենք աւելի ևս պէտք է շատացնենք մեր զօրքերը»։ Դու կասես՝ «նոյնը կանեն դարձեալ և ուրիշները»։ «Իրաւունք ունեմ. ինչպէս որ ասում ես, հէնց այդպէս էլ լինում է աշխարհում իրապէս»։ Սակայն գուցէ և զօրքերի թիւը շատացնելը խաղաղութեան ապահով գրաւական չէ։ Ի՞նչ կը լինի արդեօք, եթէ պետութիւններն իրանց զօրքերը շատացնելու փոխարէն՝ քչացնեն։

Այդպէս են մտածում և խաղաղասէրները, որ արդէն բոլոր երկիրներում մի ուժեղ կուսակցութիւն են կազմում. դրանք հետազօտում են պատերազմի պատճառները, մտածում են պատերազմների սարսափելի հետևանքների մասին, միջոցներ են որոնում և գտել են հնարը, թէ ինչպէս պէտք է պատերազմի առաջն առնել, կամ աւելի լաւ ասենք, թէ ինչպէս պէտք է պատերազմի կարելիութիւնը աշխարհի երեսից վերացնել։

Եթէ ձեր հայրն իսկապէս ուզում է ձեր բարին, պէտք է խաղաղասէրներին միանայ։ Այդպիսով նա աւելի լաւ գործ կատարած կը լինի, քան թէ ձեր ծերութեան թոշակի մասին հոգալը, որովհետև այդպիսով նա օգնած կը լինի ձեր երջանիկ բարգաւաճման հիմնական պայմանի ստեղծագործմանը, նա աշխատած կը լինի միջազգային խաղաղութեան համար։ Եթէ բոլոր պետութիւնների մարդկանց մեծամասնութիւնը խաղասէրներ լինեն, խաղաղութիւնն աւելի լաւ երաշխաւորուած կը լինի, քան թէ բազմաթիւ զօրքերով։ Այդ մասին խօսեցէք ձեր հօր հետ. գուցէ այդ մասին նա ոչինչ չէ լսել կամ սխալ բաներ է լսել. ինքներդ էլ մտածեցէք այդ հարցի մասին. արժէ դրա համար գլուխ ցաւեցնել. և երբ ձեր ներքին աշխարհի հետ համաձայնութեան գաք, աշխատեցէք լաւ հայրենասէր լինելու հետ միասին և համարձակ խաղաղասէր լինել։ Մի թոյլ տաք, որ ձեզ համոզեն, թէ հայրենասէրը նա է, ով կուրծքը ծեծելով ասում է. «Ինչ մեծ գործ որ կատարուել է մինչև այժմ, եղել է իմ ազգի շնորհիւ. ես անգլիացի եմ, կամ ռուս եմ, կամ թէ գերմանացի եմ»։ Այդպիսի մարդիկ իսկապէս ամեն ազգի մէջ էլ կան. անարդարն ու ագեղը նրանք միայն ուրիշ ազգերի մէջ են տեսնում, իրանց ազգն անսխալական է։ Սակայն մի՞թէ ամենալաւ ծնողները նրանք են, որոնք թոյլ են տալիս իրանց զաւակներին՝ ամեն տեսակ անկարգութիւններ անել, որոնք նրանց ամեն մի յիմար վարմունքը լաւ են համարում և որոնք իրանց զաւակներին աշխարհիս վրայ ամենից խելացիներն են համարում։ Ո՛չ, հարկաւ, ոչ։ Այն ծնողները, որոնք իրանց որդոց սովորեցնում են արդարացի լինել, աշխատել, շրջապատողներին քաղաքավարի և բարեկամական վերաբերմունք ցոյց տալ, այն ծնողները, որոնք իրանց զաւակների թերութիւնները չեն ծածկում, ժամանակին զգուշացնում են նրանց և պատժում, դրանց զաւակները կասեն. «Այո՛, իսկապէս որ ծնողներս սիրել են ինձ. թէև երբեմն և ծեծ եմ կերել նրանց ձեռքով, սակայն որչափ շնորհակալ եմ նրանցից, որովհետև նրանք ինձ կարգին մարդ են դարձրել»։ Այս բարի ծնողների նման են սիրում խաղաղասէրներն իրանց հայրենիքը և նրա լաւն են ուզում. իսկ միւսներն ուզում են միայն, որ քարտէզի վրայ որքան կարելի է մեծ կտոր ներկուած լինի իրանց հայրենիքի գոյնով, և սրեր շառաչելով՝ կարծում են, թէ հայրենասիրութիւնը կապալով են վերցրել։ Սակայն հայրենիքի իրական բարգաւաճման հակացողութիւնը չունեն դրանք. այդ պատճառով և դրանք ոչ թէ հայրենասէրներ են, այլ շովինիստներ։ Բայց խաղաղասէրների մասին Գերմանիայի բայխսկացլեր Իշխան Բիւլովը միջազգային պարլամենտական 15-րդ կոնֆերէնցում, Բերլինում, ասել է. «Խաղաղասիրութիւնը չէ նշանակում հայրենասիրութեան պակասութիւն. կան հայրենասէրներ, որ աշխատում են ընդհարումների առաջն առնել՝ կռիւ մղելով ազգասակար տգիտութեան, յաճախ կոյր ատելութիւնից առաջացած սխալ դատողութեան և խարէական պատուասիրութեան դէմ։ Ով այդպէս է գործում, մի այնպիսի հայրենասիրութեան ապացոյց է տալիս, որ ազատ է կացուցանում ճանապարհը, արգելքները վերացնում և այդպիսով հեշտացնում է մարդկութեան գործը՝ հասնելու բոլոր ժամանակների և բոլոր ազգերի ընդհանուր իդէալին»։ Նոյն առիթով գերմանական թագաժառանգն ասել է. «Խաղաղութեան պահպանումը, որին իր ամենամեծ հոգացողութիւնն է նուիրել իմ հայր կայսրը կառավարութեան ամբողջ ժամանակի ընթացքում, յաճախ շատ քրտնաջան աշխատանք է, բայց արժանի, որ բոլոր ազգերի ամենաազնիւ ոգիները իրանց ամբողջ ոյժը դրա համար գործադրեն»։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ III ՄԱՍԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՒ ՎԵՐՋԱԲԱՆ

Այս գրքի առաջին ու երկրորդ մասում նկարագրեցի խաղաղասիրութեան հիմնական սկզբունքները, իսկ

երրորդ մասի նպատակն էր՝ խաղաղասիրութեան գործնական իրագործումը ցոյց տալ։

Խաղաղասիրութեան գլխաւոր պահանջներից մէկն է պատմութեան դասաւանդութեան բարելաւումը, այսինքն դաստիարակութեան այն եղանակի վերացումը, որ ներկայումս ուղղակի ձգտում է երիտասարդութեան մէջ պատերազմական ոգի զարթեցնել։ Թէ ինչպէս պէտք է ուսուցիչն ազդէ հակառակ ուղղութեամբ, պարզում են 1—4 օրինակները։

Արդէն առաջ յիշուած օրինակներում ևս, առիթ եղած ժամանակ, խօսուել է Հաագի միջազգային դատարանի մասին. № 5 օրինակը պարզում է դատարանական գործի զարգացումը։

Խաղաղասէրներն էլ գիտեն, որ նոյն իսկ միջազգային դատարանը պարտաւորեցուցիչ կերպով ընդունելուց յետոյ ևս դեռ պատերազմ կը լինի. կը լինեն յանցագործ պետութիւններ, ինչպէս որ այժմ կան յանցագործ անհատներ։ Ճիշտ այնպէս, ինչպէս որ այժմ պետական իշխանութիւնը այդ անհատների դէմ է գործում, ապագայում նոյնը անհրաժեշտաբար պէտք է լինի և յանցագործ պետութիւնների դէմ։ Այս կերպով անհրաժեշտ դարձած պատերազմի փոփոխուած ընոյթի մասին բացատրութիւն է տալիս № 6 օրինակը։

Տողերիս գրողն այն կարծիքի է, որ ասիճանական զարգացումը չի կարող ընդհատուել, ուր մնաց թէ՝ յետադիմէ։ Զօրքերի շարունակ աճող ոյժը կարծես կարևոր է դարձել. պարզապէս սպառազինման ընդհատումը պահանջել և զինուորականութեան հետ կապակցուած բազմատեսակ շահերի հակառակ գնալ՝ նշանակում է հոսանքի հակառակ լողալ։ № № 7 և 8 օրինակներն ի նկատի ունեն այդ շահերի հաշտեցումը և դրանով ցոյց են տալիս խաղաղասիրութեան գործնական իրականացման կարելիութիւնը։

Խաղաղասիրութեան գործնական իրականացումը ներկայի գործը չէ, այլ վերապահուած է ապագային։ Այժմ մեր առաջը նստած դպրոցական տղաներն ու աղ-

ջիկները մի քանի տարուց յետոյ չափահաս մարդիկ կը լինեն. դրանցից ոմանք կարող են ժողովրդի պաշտօնական ներկայացուցիչը դառնալ և պետութեան ճակատագրի վրայ որոշ ազդեցութիւն ունենալ։ Բոլորն էլ կարող են նպաստաւոր կամ աննպաստ ազդեցութիւն ունենալ ժողովրդի կամքի վրայ. այդ պատճառով այժմեանից պէտք է աշխատենք երիտասարդութիւնը գրաւել յօգուտ մեր ձգտումների։ Պատերազմի առաջն առնելու ամենաազդու միջոցն է՝ պատերազմ չկամենալը. № № 9—15 օրինակների նպատակն է՝ երիտասարդներին այդ տրամադրութիւնը ներշնչել։ Եթէ այդ բանն աջողուի, այդ դէպքում այս աշխատութիւնը լիովին հասած կը լինի իր նպատակին, այդ դէպքում մենք ամենալաւ գործն արած կը լինենք խաղաղութեան գործնական իրականացման համար։ Ամեն մի աշխատութիւն սկսելիս՝ աջողութեան գլխաւոր պայմանն է բարի կամքը. այդ պատճառով և աշխատութեանս հեղինակը դիմում է ընթերցողներին և խնդրում, որ նրանք, ովքեր խաղաղասիրութեան ուսման համակրող են հանդիսանում արդէն՝ առանց վարանելու, ամեն տեսակ արգելքների յաղթելով, իրանց բարի կամքը գործ դնեն՝ խաղաղասիրութիւնը երիտասարդութեան մէջ տարածելու։

ՊԵՏ. ԱՌ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՍՌ-ԱԳՄ.ԵՍՍՌ
Ա. Մ. Մ. Մ. Մ. Մ. Մ.
Մ. Մ. Մ. Մ. Մ. Մ. Մ.

23467

Арм.
3-229

Լույս են տեսել «ԱՐՕՐԻ» հրատարակությամբ հետևեալ գրքերը

1) **Մի ոճիրեն մի գիր,** Սա. Մալխասեանցի, գինը. 20 կ.
2) **Հայաստանն երեսմն ու այժմ,** Լեման Հաուպտի, թարգմ. Իս. Յարութիւնեանի, գինը . . . 20 կ.
3) **Առասպածներ Մահոմէդի,** ընտրուած Լ. Ն. Տոլստոյի ձեռքով, թարգմ. Լ. Դանիէլեանի, գինը . 5 կ.
4) **Սոնճուցիան,** կազմեց Գ. Ա. Բուլանժէ, խմբ. Լ. Ն. Տոլստոյի, թարգմ. Սուրբաթեանի, գինը . . 7 կ.
5) **Ճորտերի ազատագրութեան յիսնամեակը,** գինը. 15 կ.
6) **Խոստովանութիւնը,** Լ. Ն. Տոլստոյի, թարգմանութ. Սուրբաթեանի, գինը. . . . . 30 կ.
7) **Ինչուն երեխը,** մեծ վէպ Վիկտոր Հիւգոյի, թարգմ. Ա. Սաֆարեանի, գինը. . . . . 1 ր. 50 կ.
8) **Դեռանուածներ,** պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի, գ. 60 կ.
9 **Սատանող ոգին,** վէպ Յովսէփ Սոլովեանի, գ. 40 կ.
10) **Ուսանողներ,** պատկեր 3 արարուածով, Գ. Բաշինջաղեանի, գ. . . . . 50 կ.
11) **Փարաւոնն ու հանձարը,** Ա. Մ. Եղեկեանի, գինը 15 կ.
12) **Մագդա,** դրամա 5 գործ., Լ. Մանուէլեանի, գ. 40 կ.

Սոյն գրքերը ծախվում են «ԱՐՕՐԻ» խմբագրատանը։

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

25

2013